

19

ՅԻՆՈՐԾ. ԱՌԵՎԱԼԻՒՄ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարիատ բայր յերկրների, միացե՛ք:

ԳԱՐՎԻՆԻՋՄ

Զ. Գարվինի պատկերով

Կազմեց

Ա. Մ. Մ Ո Ւ Յ Ե, Բ Ո Լ Յ Ո Յ Ո Յ Ե

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐՈԿՉՈՒԹՅՈՒՆ

1926 թ.

575.4

Բ-20

20 JUL 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍ. ԽՈՐ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք:

57
P-20

575.4
P-20

ԴԱՐՎԻՆԻ ԶՈՒՄ

Զ. Դարվինի պատկերով

Կազմեց

ՍՈ.ՄՈՒԵԼ. ԲՈԼ.Պ.Չ.ՅԱՆ


1063



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՊԱՆ 1926

ԱՐԱ ՀԱՅ 08

ՏՎ 833 5013



Զ. ԴԱՐՎԻՆ
1809—1882

№ 337. Գրառեպիտ 298 թ. Պատ. № 717. Տիրած 5,000

Պետրաշի IV տպարան Ենիսականում

27 FEB 2013

13326

ԱՌԱՋԱԲԱՆ

Ո՞վ չի լսել Զարլզ Դարվինի անունը: Բնագիտության մեջ չկա մի անուն, վոր լինել նույնչափ հոչակված, վորքան Դարվինի անունը: Անցյալ դարի կիսում լույս տեսած նրա գլխավոր աշխատությունը՝ «Տեսակների Ծագումը» գլրդացրեց վողջ աշխարհը:

Դարվինի գաղափարները քանդեցին հին գավառանքները և լայն հորիզոն բաց արին մարդկության առաջ: Իսկապես գա մի հսկայական հեղափոխություն եր գիտության մեջ:

Դարվինի քարոզած մտքերը դարձել են նորագույն բնագիտության հոգին. Խլեցեք բնագիտությունից Դարվինիզմը և բնագիտությունը կըդառնա չոր ու ցամաք փաստերի մի հավաքածու առանց ներքին կապի: Պետք ե ավելացնել, վոր Դարվինիզմը չի սահմանափակվում բնագիտության շրջանով, այլ տարածում ե յուր ազգեցությունը շատ ուրիշ գիտությունների վրա՝ ամեն տեղ նոր լույս սփոելով:

Սկզբի շրջանում քննադատների կողմից դարվինիզմը արժանացավ միմիայն հայնոյանքների, սակայն նրանց առարկություններն ընդհանրապես լուրջ չեյին. շատերը փոխանակ քննադատելու հայնոյում կամ ժաղըռում եյին, շատերն ել թեև առարկում եյին, բայց



32832-61

իսկապես չեյին ըմբռնել Դարվինի ուսման եյությունը, շփոթում եյին դարվինիզմը զարգացման թեորիայի հետ, շատերն ել կարծում եյին, թե Դարվինի ուսմուքը վերաբերում ե գլխավորապես մարդու ծագումը (կապկանման կենդանիներից)...

Եերկրորդ շրջանում գիտնականների վերաբերմունքը բոլորովին փոխվեց. այլևս հայոյանքներ չեյին լսվում, ընդհակառակը հայոյանքները փոխվեցին ընդհանուր հիսցմունքի: Գիտական գրականությունը հարստացավ անթիվ հրատարակություններով՝ նվիրած դարվինիզմին: Տարաբախտաբար չկա հայոց լեզվով վոչ մի հրատարակություն այդ խնդրին վերաբերյալ վոչ ինքնուրույն, վոչ թարգմանական:

Այդ բացը զգալի ե նամանավանդ այժմ, վորովհետև Խորհրդային իշխանությունն ահազին նշանակություն ե տալիս դարվինիզմին, այժմյան գպրոցում քնական գիտություններն ավանդվում են դարվինիզմի լուսաբանությամբ:

Ներկա գրվածքում յես ձգտել եմ, վորչափ հնարավոր ե, պարզ կերպով ներկայացնել դարվինիզմի հիմունքները՝ խուսափելով մանրամասնություններից:

Ս. Բ.

I

ԴԱՐՎԻՆԻ ԿՅԱՆՔԸ

Տաղանդն լնդունակ և ժառանգաբարպահնելու սերնդից սերունդ: Դարվինի պապը և հայրը: Դարվինի ծնունդը: Նրա ուսումնարան մտնելը: Դարվինը ամենաթույլ աշակերտներից մեկն եր: Նրա սերը գեպիքնությունը: Դարվինը գնում ե Եղինքուրգ քժշկականությունն ուսումնասիրելու: Կեմբրիջի համալսարանը: Դարվինի ճանապարհորդությունը մեծ նշանակություն ունեցավ նրա ապագա փայլուն գործունեության համար: Դարվինն ամուսնանում և և տեղափոխվում ֆոռւն մշտական բնակության համար: Դարվինի առաջին գյուտը: Խնչն եր ամենից շատ հետաքրքրում նրան: «Տեսակների ծագումը» մեծ աղուտկ բարձրացրեց Յեվոպայում: Նրա մյուս նշանավոր գրվածքները: Դարվինը մեծ եր վոչ միայն խելքով այլև բարոյականությամբ: Դարվինի հիվանդությունը և մահը: Դարվինը և Նյուտոնը: Դարվինի թաղումը:

Միքանի գիտնականներ մի հետաքրքիր միաքնացան. նրանք աշխատում եյին ուսումնասիրել այն հարցը՝ ի՞նչպիսի նախահայրեր են ունեցել հանճարեն

մարդիկ։ Այդ խնդրով մանավանդ շատ զբաղվեց անգլիացի գիտնական մ։ Գայլտոնը՝ Վար լնտանիքներն են ամենից շատ տաղանդներ տալիս. նրանք արդյոք, վորոնք յերկար տարիների ընթացքում նշանավոր անհատներ չեն արտադրել, թե ընդհակառակը հանձարեղ մարդիկ ծնվում են այնպիսի ընտանիքներում, վորոնք արդեն արտադրել են մի շարք տաղանդավոր մարդիկ։

Ահա այն խնդիրները, վորով զբաղվեց Գայլտոնը, Նա ձեռք բերեց հանձարեղ մարդկանց ազգակցական ցուցակները և ծանոթացավ նրանց նախահայրերի կյանքի և գործունեության հետ։ Հարցը հիմնովին ուսումնասիրելուց հետո Գայլտոնը յեկավ այն յիզրակացության, վոր հանձարեղ մարդիկ ծնվում են տաղանդավոր ընտանիքներից, վորոնք արդեն արտադրել են մի շարք տաղանդավոր մարդիկ։

Որինակ՝ հոչակավոր յերաժիշտ Ֆելիքս Մենդելսոնի ընտանիքը հայտնի յե միքանի տաղանդավոր ներկայացուցիչներով, վորոնցից ամենանշանավորը, Ֆելիքսից հետո Մոլիսես Մենդելսոնն եր։ Վերջինը հանձարեղ ֆելիքս Մենդելսոնի պապն եր և հայտնի յեր իբրև նշանավոր փիլիսոփա։ Բերնովիլին, վոր հանձարեղ մաթեմատիկոս եր, ունեցել ե մի շարք նըշանավոր նախահայրեր, վորոնք նույնպես հայտնի մաթեմատիկոսներ ելին։ Հայտնի Բախի ընտանիքը տվել ե մի շարք տաղանդավոր յերաժիշտներ...։

Այդպիսով պարզ ե, վոր տաղանդն ընդունակ է ժառանգաբար անցնելու այնպես, ինչպես ժառանգաբար անցնում են դեմքի գծերը, ընավորությունը, զանազան հիվանդությունները ևայլն։ Հայտնի յե,

վոր հաճախ մի վորեն հատկություն ժառանգաբար անցնում ե վոչ թե հայրերից վորդիներին, այլ հայրերից թոռներին կամ ծոռներին։ Որինակ՝ շատ մարդիկ իրանց գեմքի գծերով կամ բնավորությամբ նըման են լինում վոչ թե հայրերին կամ մայրերին, այլ իրանց պապերին, քեռիներին կամ նույնիսկ ավելի հեռավոր ազգականներին։

Նույնը նկատվում է և տաղանդի վերաբերմամբ, հաճախ տաղանդավոր մարդն ունենում է շատ հասարակ վորդիք, իսկ վերջինները տալիս են տաղանդավոր սերունդներ։ Ուրիշ խոսքով՝ տաղանդը մի վորեն ցեղում կամ ընտանիքում անհետանում է ու նորից յերեան գալիս։

Զարլզ Դարվինի ընտանիքը պարզ ապացույց է վերոհիշյալ կարծիքի։ Մինչև Զարլզ Դարվինի ծնվելը Դարվինների ցեղը հայտնի յեր հասարակությանն իր տաղանդավոր ներկայացուցիչներով, վորոնցից ամենայերեւնին երազմ Դարվինն եր։ Հայտնի գիտական Գրանդ Ալլենը՝ խոսելով երազմի մասին ավելացնում ե. «Նա (երազմը) խորին զգանքով եր վերաբերվում գեղի ամեն տեսակ նախապաշարումունքներն ու թուլությունները և անհամեմատ ավելի բարձր եր իր գտարարդկանցից՝ թե իր լայն հայացքներով և թե ինքնուրույն մտքերով։ Վախկոտ և ինքնահավան 18-դ դարը, թեև ընդունում եր, վոր նա շատ տաղանդավոր մարդ ե, բայց միհնույն ժամանակ վտանգավոր եր համարում նրա գաղափարների պատճառով։»

Զարմանալի յե, վոր երազմ Դարվինն իր զըրկածքներում սիրում եր խոսել նույն խնդիրների մասին, վորոնք այնքան փայլուն կերպով լուսաբանվե-

յին նրա հոչակավոր թոռան—Զարլզ Դարվինի շնորհիվ։ Իր մի վոտանավորի մեջ Երազմ Դարվինը բանաստեղծորեն նկարագրում է կենդանի եակների ծառումը յերկրագնտի վրա։ Ահա այդ վոտանավորի բովանդակությունը։

«Որդանական կյանքը ծագել է անհուն ալիքների տակ և զարգացել ովկիանոսի (մեջ գտնված) այրերում։ Մանր, հազիվ նկատելի, սկզբնական եակները սողում եյին ցեխի մեջ կամ լողում ջրերի ֆըրփուրներում։ Առաջացան շատ ու շատ սերունդներ, տուաջացան նոր ընդունակություններ և ավելի զորեր անդամներ (զարգացած եակներ)։ Նրանցից գոյացան բույսերի անթիվ տեսակները և բոլոր կենդանիները...»։

Փայլուն մտքեր. գիտե՞ր արդյոք երազմ Դարվինը, վոր այդ մտքերը ժամանակով հիմք պետք եղանային բնագետների աշխարհայեցողությանը։ Դրանցից ծնվեց ամենազրավիչ ուսմունքը—զարգացման թեորիան։ Այդ վոտանավորի մեջ պարզ արտահայտված եյին զարգացման թեորիայի հիմական կետերը։ Երազմ Դարվինն իր ընդունակություններով սաստիկ գերազանցում եր եր վորդուն՝ Ռոբերտ Ռուրինգ Դարվինին, վոր Զարլզ Դարվինի հայրն եր։ Դա մի բարի և համեստ բժիշկ եր Շրյուսբյուրիում։ Նա ամուսնացավ իր ազգական Սուսան Վեջվուդի հետ Վեջվուդները նույնպես կազմում եյին մի վերին աստիճանի տաղանդավոր ընտանիք։ Թանբ'քանի նշանավոր մարդիկ եյին ծնվել այդ յերկելի ընտանիքում։ Թով գիտե, գուցե Ռոբերտ Ռուրինգի ծննդեր մի այդպիսի հսկա, վորպիսին եր Զարլզը, յեթե նա ամուսնար վորե մի աննշան (ընդունակություններով) ընտանիքի աղջկա հետ։

Զարլզ Դարվինը ծնվեց Շրյուսբյուրիում 1809 թվին, փետրվարի 12-ին։ Շրյուսբյուրին մի հետ ընկած գավառական քաղաք եր։ Ահա այդ քաղաքում Զարլզ Դարվինն անց կացրեց իր կյանքի սկզբի աշխիները։

Յերբ նա մի փոքր հասակն առավ, հայրը տըվեց նրան Բյողլերի ուսումնարանը։ Սակայն ահա մեղերին աստիճանի զարմանալի յերկույթ։ Այն յերեխան, վորին վիճակված եր ապագայում ահագին հեղափոխություն կատարել գիտության մեջ, վոչ միայն չկարողացավ առաջնակարգ տեղ բռնկը ուսումնաբանում, այլև հազիվ կարողանում եր քաշ գալ ընկերների հետ։ Զարլզ Դարվինը ուսումնարանի ամենաթույլ աշակերտներից մեկն եր... Այս գեպքը հիշեցնում է մեզ Ալեքսանդր Հումբորդին, Լեվ Տոլստոյին, Պուշկինին, վորոնչ նոյնպես ուսումնարանի ամենաթույլ աշակերտներից եյին։ Զ. Դարվինն ատելով ատում եր գլոպոցը։

Նա սիրում եր կալորոցից դուրս թափառել, վորսում եր ձուկը, բռնում եր թոչուններ, ժողովում եր միջատներ, բույսեր, հանքեր և նրանցից ժողովածուներ կազմում։ Թափառելու սերը մի կողմից, ուսումնարանում ստացած վատ թվանշանները մյուս կողմից սաստիկ զայրացնում եյին նրա հորը։

«Վորարդությունից, շների հետ քաշ գալուց ու մկներ ըռնելուց զատ քեզ վոչ մի բան չի հետաքըթքում։ — գու կըխայտառակես թե քեզ և թե քո ամբողջ ընտանիքը», ասաց մեկ անդամ Ռոբերտ Ռուրինցը իր վորդուն։

Ի՞նչ ասել կուզե, վոր նրա մարգարեությունը

չերագործվեց. Զարդ Դարվինը վոչ միայն չխայտառակեց իր ընտանիքի անունը, այլև ամբողջ Անգլիայի փառք ու պարծանքը զարձավ:

Զարլզ Դարվինի անաջողությունն ուսումնարանում նրանով և բացատրվում, վոր Բյուլերի ուսումնարանում ամենապլիսավոր տեղը բանում եր հին լեզուների՝ լատիներենի և յունարենի դասատվությունը, իսկ Դարվինը սաստիկ ատում եր այդ լեզուները: Նըրան հետաքրքրում եյին բազմատեսակ թոշունները իրանց սովորություններով, գետերն ու անտառները իրանց բնակիչներով, մի խոսքով՝ նրան ձգում եր միշտ կենդանի, սիշա յեռող բնությունը իր հրաշալիքներով, իսկ դպրոցում նրանից պահանջում եյին լատիներենիքերականության նրբությունները...

Տասուվեց տարեկան հասակումն եր Զարլզը, յերբ նրա հայրը վճռեց ուղարկել նրան Եղինքուրդի համալսարան՝ բժշկականությունն ուսումնասիրելու:

Սակայն այդտեղ ել նա մեծ առաջադիմություն չարեց: Եղինքուրդի համալսարանի պրոֆեսորները և նրանց դասախոսությունները չափազանց անհետաքըրքարական և ձանձրալի եյին Զարլզ Դարվինի համար:

Եղինքուրդում նա ծանոթացավ միքանի նշանավոր բնագետների հետ, վորոնք մեծ աղջեցություն ունեցան նրա վրա: Բացի այդ, Դարվինը ներկա եր լինում Եղինքուրդի գիտական ընկերությունների նիստերին և մեծ հետաքրքրությամբ լսում եր գիտական գեկուցումները:

Սակայն Եղինքուրդում ամենից շատ նա զբաղվում եր ելի նույն գործով, վոր սաստիկ զայրացնում եր նրա հորը Շրյուսբյուրիում, ժամերով շրջում

եր ծովի ափերին, բանում եր ծովային կենդանիներ և ուսումնասիրում նրանց:

Նկատելով, վոր իր վորդու բժշկական պարապմունքներից ել վոչինչ չի գուրս գալիս, Ռոբերտ Ուորինցինը հանեց նրան Եղինքուրդի համալսարանից և ուղարկեց Կեմբրիջի համալսարանը, վորտեսողի Զարլզը այնտեղ պատրաստվի ու հետո հոգեորական դառնա... Մի խոսքով՝ Զարլզ Դարվինը իր խեղճ հոր գլխին ուղիղ պատուհաս եր գարձել:

Հարկավոր և արդյոք ավելացնել, վոր այս անգամ ել Զարլզը չիրականացրեց հոր հոյսիրը: Զպետք և կարծել վոր Զարլզ Դարվինի հայրը մի անմիտ բանակալ եր: Վհչ, նա բարի և նույնիսկ խելոք մարդ եր, սակայն ցավը նրանումն է, վոր նա չկարողացավ իր վորդու ձգումները հասկանալ, ինչպես վոր և շատ ծընողներ չեն կարողանում վորոշել ու հասկանալ իրանց վորդկերանց ձիրքն ու բնավորությունը:

Կիմբրիջում Զարլզ Դարվինը բաղոի բերմամբ ծանոթացավ պրոֆեսոր Գինսլոյի հետ, վոր նշանավոր բուսաբանի հոչակ ուներ: Նա մեծ աղջեցություն ուներ իր աշակերտների վրա: Չուտով այդ ազդեցությանը յենթարկվեց Զարլզ Դարվինը: Հետո Դարվինը հաճախ ասում եր, վոր նրա ամենապլիսավոր ուսուցիչը յեղել և պրոֆեսոր Գինսլոյն: Վերջինը հաջախ գիտական ըդբուսանքներ եր անում իր աշակերտների հետ կամ ժողովներ եր անում իր մոտ: Շատ բնագետների հետ Զարլզը ներկա եր լինում այդ ժողովներին, վորոնց հետագայում նա հիացմունքով և յերախտագիտությամբ եր հիշում:

Ինչպես յերեւմ ե, պրոֆեսոր Գինսլոն նկատել

եր, վոր Զարլիկ Դարվինը սովորական ունկնդիր յերից չե, այդ պատճառով նա առանձնապես ուշադրություն եր գարձնում Դարվինի վրա: Վերջիվերջո Դարվինը և Գենսլոն շատ բարեկամացան իրար հետ:

Քսաներկու տարեկան հասակում Զ. Դարվինն ավարտեց ուսման դասընթացքը կեմբրիջի համալսարանում և իր հոր վորոշման համաձայն պետք ե հոգեվորական դասնար, սակայն մի անսպասելի հանդամանք հանկարծ բոլորովին փոխեց այդ վորոշումը...

1831 թվի աշնանը անգլիական կառավարությունը պատրաստել եր մի նավ՝ ուղարկելու Հարավային Ամերիկայի ափերը բուն գիտական նպատակով:

Վորոշված եր ուղարկել «Բիգլ» անունով շոգենավագետ Ֆիցրոյի ղեկավարությամբ: Ֆիցրոյը մի խելոք և լուսավորված մարդ եր, նա ցանկացավ վոր գիտական արշավանքին մասնակցե մի բնագետ կենդանիների և բնույսերի ժողովածուներ կազմելու համար:

Պրոֆեսոր Գենսլոն իմանալով այդ, իսկույն խոր հուրդ տվեց Ֆիցրոյին վերցնի իր հետ նորավարտ Զարլիկ Դարվինին: Ֆիցրոյը այդպես ել արագ և «Բիգլ» ճանապարհ ընկապ:

Ճանապարհորդությունը տեղեց անբողջ հինգ տարի և ահազին նշանակություն ունեցավ Դարվինի համար: Հինգ այդ ճանապարհորդության ժամանակ նրա գլխում ծագեց կենդանիների և բույսերի փոփոխման գաղափարը:

Այդ ճանապարհորդության ընթացքում Զարլիկ Դարվինն իր աչքերով տեսավ և ուսումնական իրեց աշխար-

հիս ամենաշքեղ ֆլորա և ֆաունա*) ունեցող յերկիրները—արևադարձային յերկիրները: Վերջինները գտնվելով հասարակածի շուրջը, ունին վերին աստիճանի տաք և խոնավ կլիմա:

Հայտնի և վոր յերկրագնտի վրա ամենաբարձր բարեխառնություն ունին հասարակածի շուրջը գտնվող յերկիրները: Յեթե ի նկատի ունենանք, վոր այդ յերկիրներում ահաղին ջերմության հետ լինում ենակ առատ խոնավություն, այն ժամանակ մեզ համար հասկանալի կը իմաստի, թե ինչո՞ւ այդ տեղերի բուսականությունը չափեց գուրս փարթամ և լինում:

Ճանապարհորդների պատմելով՝ վոչ մի բան իս վսեմությամբ և սքանչելիությամբ չի կարող հավասարվել արևադարձային անտառին: Այդտեղ այցելուներին նախ զարմացնում ե բույսերի մեծությունը և բարդացած առարկությունը:

Հսկա բույսերը՝ չափազանց մոտիկ իրարից բուսած, ճնշում են իրար տեղի նեղության պատճառով: Այդ հսկաների վրա փաթաթվելով բարձրանում յեն լիան կոչված վոլորվող բույսերը և հասնելով գագաթին, անցնում յեն հարեւան ծառերի վրա, նրանց մեջ ճյուղերից և տերեներից սքանչելի կամարներ ու կամուրջներ կազմում: Յեթե գրան ավելացնենք նաև գույնզգույն ծաղիկների, պլտուզների և տերեների ամբողջ մի ծով, այն ժամանակ մոտավորապես գաղափար կը կազմենք արևադարձային անտառի շքեղության մասին:

Լիանները՝ անցնելով բույսից բույս, թոկերի նը-

*) «Ֆլորա» կոչվում ե յերկրի բուսականությունը, իսկ «ֆաունա»—կենդանիները:

ման կապկառում են նրանց և այն աստիճան ամուր սեղմում, վոր գմբար և լինում հաճախ վորոշել թե այս կամ այն ճյուղը կամ ծաղիկը վոր ծառին և պատկանում:

Իրար հետ զրկախառնված և սեղմված ճյուղերն ու տերեները մի միապաղապ կանաչ կեղեւ են կազմում, վորոնք այնքան խիտ են լինում, վոր արեգակի վոչ մի ճառագայթ չի կարող թափանցել ու լուսավորել գետնի խոնավ մակերեսույթը:

Այդ հրաշալի բուսականությունն ավելի ևս կենդանություն ու զեղեցկություն և ստանում անթիվ և բազմատեսակ կենդանիների համերգների շնորհիվ:

Թուչունների ամենագեղեցիկ ներկայացուցիչները — սիրամարգները, թութակներն ապրում են արևադարձային անտառներում: Նրանց հետ միասին թուշկոտում են ծառից ծառ բազմատեսակ կապիկների խմբերը: Ծառերի ճյուղերից կախված վիթխարի ոճերն որորվում են՝ չորս կողմը հասելով իրանց զարհուրելի աչքերը: Իսկ արևադարձային անտառներում ապրող գույնզգույն թիթեռներին ու բգեղներին վոչ թիվ կա, վոչ համար:

Բույսերի և կենդանիների այս ծայրահեղ ճոխությունը ձգում է գեղիք արեւադարձային յերկիրները վոչ միայն նատուրալիստներին, այլև նրանց, վորոնք սիրում են բնությունը:

Սակայն անցնենք Դարվինի ճանապարհորդությանը:

Այն գիտական արշավանքը, վորին մասնակցում եր Զարլի Դարվինը, նախ կանգ առավ Ատլանտյան ովկիանոսի կղզիների մոտ, մանրամասն հետազոտեց նըրանց ֆլորան, ֆաունան և յերկըրաբանական կազմու-

թյունը, ապա անցավ Կորտիլերին, Անդին, Ավստրալիային...


Ամին տեղ Դարվինը խորին ուշագրությամբ գիտում եր, ուսումնասիրում և ժողովածուներ կազմում: Նա նման եր մի մարդու, վորի առաջ հանկարծ բացվում ե ահազին գանձ՝ լի անթիվ թանկագին քարերով:

«Հրձվանք խոսքը չափաղանց թույլ և արտահայտելու այն բնագետի զգացմունքը, վոր առաջին անգամ թափառում և Բրագիլիայի անտառում»—ասում է Դարվինը իր հիշատակարանում: Ճանապարհորդության ժամանակ նա բազմաթիվ նկատողություններ եր անում իր գիտողությունների ու տպավորությունների մասին: Այդ դիտողություններից կազմվեց Դարվինի ճանապարհորդության հիշատարանը:

Այդ հիշատակարանից յերեսում ե, վոր ճանապարհին նկատած և զիտած յերեսութներն արդեն հարուցել եյին նրա զլիսում այնպիսի մտքեր, վորոնք շատ կարենոր եյին նրա հետագա գործունեության համար: Առասաբարակ գիտության մեջ ընդհանրացած և այն կարծիքը, թե «Բիոլի» վրա կատարած ճանապարհորդությունը նախապատրաստեց Զ. Դարվինին նրա փայլուն գործունեության համար:

«Ճանապարհորդությունից հետո նա ուներ այն նյութերը, վորոնք անհրաժեշտ եյին Բիոլոգիական*):

*) «Բիոլոգիա» խոսքը կազմված է հունարեն «բիոս» (կյանք) և «լոգոս» (խոսք, գիտություն) խոսքերից և նշանակում ե՝ կյանքին վերաբերյալ գիտություն կամ «կենապահություն»: Բիոլոգիան ողավե-



մեծ խնդիրներ վճռելու համար, մնում եր միայն նըստել կարինետում և մշակել նրանց... Մենք համարձակ կարող ենք ասել, վոր «Բիզլի» վրա կատարած ճանապարհորդությունը վերջիվերջո մեզ տվեց «Տեսակների ծագումը» և նրա յերևելի շարունակությունը—«Մարդու ծագումը»*) (Գ. Ալեն):

1836 թվին Դարվինը վերադարձավ Անգլիա, բերելով իր հետ ճանապարհորդության ժամանակ հավաքած կենդանիների և բույսերի հարուստ ժողովածուներ: Այդ վերջիններն այնքան հարուստ ելին, վոր նրանց դասավորելու և կարգի բերելու համար Դարվինը մի մասնաժողով հրավիրեց՝ բաղկացած հոչակագոր գիտնականներից—Բելլից, Ռենից, Գուլդից և ուրիշներից: Մասնաժողովի անդամներից յուրաքանչյուրը հանձն եր առել դասավորելու իր մասնագիտությանը վերաբերյալ մասը. որինակ՝ Գուլդը դասագրում եր թուշուններին, Բելլը՝ սողուններին և այլն:

Կարճ ժամանակից հետո Դարվինը հրատարակեց իր յերկրաբանական (գեոլոգիական) նշանագոր հե-

լով այն նյութերից, վորոնք շարունակվում են մի շարք գիտությունների մեջ (կենդանաբանություն, բուսաբանություն, բնախոսություն, սաղմնաբանություն ևայլն) հանում և նրանցից ընդհանուր կանոններ կամ որենքներ:

*) «Տեսակների ծագումը» և «Մարդու ծագումը»: 2. Դարվինի ամենանշանավոր գրվածքներն են. զըրանց մեջ ե Դարվինը մեկնել իր հոչակագոր ուսումունքը:

տաղոտությունները, վորոնք նույնպես ճանապարհորդության ժամանակ արած գիտողությունների արդյունքն ելին:

Այդ հետագոտությունները գրավեցին գիտնականների ուշադրությունը: Նույնիսկ «յերկրաբանության հայր»—Զարլզ Լյալեյը հիացել եր նրանցով և հենց այդ յերկրաբանական ուսումնասիրությունների պատճառով ել Դարվինն ընտրվեց յերկրաբանության ընկերության քարտուղար:

Սրանից յերեւմ ե, թե վորքան բազմակողմանի եր Դարվինի տաղանդը. թեև նրա անունը կապված եր բիոլոգիական մեծ գյուտերի հետ, ոակայն նա մեծ ժառայություն և մատուցել նաև յերկրաբանությանը՝ բացատրելով հարավային ովկիանոսի մի քանի կըդշիների կազմվելու մութը ինդիրը:

1839 թվին Զարլզ Դարվինը ամուսնացավ Եմմա Վեջվուդի հետ, իսկ յերեք տարուց հետո թողեց Լոնդոնը և աեղափոխվեց Լոնդոնի մոտ գտնվող Դոունը, ուր ապրեց մինչև իր կյանքի վերջը:

Դոունում Դարվինի կյանքը միակերպությամբ և կանոնավորությամբ նման եր մեքենայի: Նա այնպես եր դասավորել իր ժամերը, վոր վոչ մի ըոպե անուզուտ չկորչի. նա կամ զբաղվում եր իր աշխատությունները մշակելով կամ շարունակում ձեռնարկած բազմաթիվ փորձերը:

Դարվինն իր կյանքում հսկայական գործեր կատարեց վոչ միայն իր արտակարգ ընդունակությունների շնորհիվ, այլև զարմանալի աշխատասիրությամբ:

Նրա տոկունությունը, աշխատասիրությունը չափում սահման չուներ. որինակ՝ Դոռւնում ձեռնարկած փորձերից մեկը տեսք յերեսուն տարի...

Զարլզ Դարվինը՝ առանց հիմնավորապես ուսումնասիրելու հետաքրքրող խնդիրը, գրավոր վորեն կարծիք հայտնելու սովորություն չուներ:

Առաջ յերկար տարիների ընթացքում նա դիտում եր, փորձ եր անում և բազմաթիվ փաստեր ժողովում, հետո տարիների ընթացքում մտածում եր այդ փաստերի մասին, ծանր ու բարակ կշռում, հետո վերջապես լույս ընծայում իր հետազոտությունները: Դըրան ապացույց ե հենց Դարվինի գլխավոր գյուտի բնական ընտրության պատմությունը, Մւնք աեսանք, վորդեռ ճանապարհորդության ժամանակ, 1837 թվին, նա հղացել եր իր թեորիայի հիմնական միտքը, սակայն իր թեորիան նա վստահացավ հրատակել միմիայն 1859 թվին:

Տեղն ե այստեղ հիշելու այն սխալ կարծիքը, վոր հաճախ պտղառում հասարակության մեջ. շատերը կարծում են, թե հանձարեղ մարդիկ մեծ գործեր են կատարում միմիայն իրանց տաղանդի շնորհիվ: Փատերը ցույց են տալիս, վոր այդ կարծիքը միակողմանի յե, ամենայերեւի գիտնականներն ըստ մեծի մասին յեղել են միենույն ժամանակ աշխատասիր և տուկուն:

Յեկ իրավ, ինչ կարող եր անել Զարլզ Դարվինը իր ահագին ընդունակություններով, յեթե նա աշխատասիր չիներ: Շատ քիչ բան, նույնը կարելի յե առել նաև Ժորժ Կյուվիյեի, Բոկլի, Լավուազիյեի, Լուի Պաստյորի և շատ ուրիշների մասին: Յերբ մարդ կար-

գում ե, որինակ՝ ժորժ Կյուվիյեի գործունեության պատմությունը, մնում է ապշած վոչ միայն նրա հանձարեղ մտքերի, այլև նրա աննկարագրելի մեծ աշխատասիրության վրա:

Վերոհիշյալ յերկրաբանական հետազոտություններից հետո Դարվինը հրատարակեց ելի միքանի աշխատություններ, վորոնց մեջ նա լուսաբանում եր յերկրաբանական կամ կենդանաբանական այս կամ այն մասնավոր խնդիրը: Սակայն մասնավոր խնդիրների ուսումնասիրությունը, վորքան ել հետաքրքիր լիներ, չեր կլանում Դարվինի ուշադրությունը:

Հնդհակառակը՝ կարծես Դարվինն այդ ուսումնասիրությունը կատարում եր ի միջի այլոց. նրա մըտքերը պաշտում եյին մի կենդրունական հարցի շուրջը. ի՞նչին են առաջցել բույսերի յևի կենդանիների բազմարիվ և սակալները. ահա այն հարցը, վոր կաշկանդել եր Դարվինին զեռ այն ժամանակից սկսած, յերբ նա լողում եր «Բիգլի» վրա ովկիանոսում կամ թափառում Բրազիլիայի և Ավստրալիայի անտառներում:

Արդեն ճանապարհորդության ժամանակ նա ժողովել եր բազմաթիվ կարեսը նյութեր իրան հետաքրքրող խնդրի վերաբերյալ բայց գրանք ըավական չեյին, անհրաժեշտ եր զեռ ելի փաստեր ժողովել և կատարել բազմաթիվ դիտողություններ:

Զարլզ Դարվինն այդպիս ել արագ. 1836 թվից, այսինքն 28 տարեկան հասակում, նա սկսեց պատրաստվել վորպեսզի մի որ կարողանա պարզել կենդանինե-

ըի և բույսերի ծագման ու զարգացման գաղտնիքը։ Յերեք չորս տարի աշխատելուց հետո, Դարվինը վերջապես հասավ իր նպատակին. 1840 թվին նրա համար արդեն պարզվել եր Բիոլոգիայի ամենամեծ խնդիրը։ Եւթե Դարվինի տեղ մի ուրիշ մարդ լիներ, շատ հավանական է, վոր իսկույնելիք կը հայտարարեր իր յերեկի գյուտը. բայց Դարվինը չեր շտապում։ Լավ հասկանում եր, վոր հարցը վիրին աստիճանի ծանրակշիռ է. նա մտքում դրել եր իր թեորիան հրատարակել միայն այն ժամանակ, յերբ հավաքած կունենա բազմաթիվ ապացույցներ։

Յուր ուսմունքը մշակելու համար Դարվինը գործ գրեց տասներեննը տարի, այնպես վոր միայն 1859 թ. վերջապես մամուլի տակից դուրս յեկավ «Տեսակների ծագումը»։ Թե ինչո՞նք է կայանում այդ աշխատության մեջ առաջարկած ուսմունքը, յես կը պատմեմ հետո, այսուղ միայն կընկատեմ, վոր «Տեսակների ծագումը» գրվածքի լույս տեսնելու որից Բիոլոգիայի համար ուսումնական առ դարաշրջան։

Ահա ինչ է ասում այդ մասին հայտնի գիտնական սրովեսաոր Հյոքսլին։

«1859 թվին «Տեսակների ծագումը» մեզ վրա այնպես ներգործեց, ինչպես ներգործում են փայլուն լույսի ճառագայթները խորին մթության մեջ գտնվող անհատներին ճանապարհ ցույց տալով։ Այդ ուղիղ այն բանն եր, վոր մենք վորոնում եյինք, բայց չեյինք գտնում։»

1867 թվին Զարլզ Դարվինը հրատարակեց յուր «Ընտանի կենդանիները և մշակված բույսերը» աշխատությունը յերկու հատորավ։ Այդ գրվածքի մեջ Դար-

վինն առաջ և բերում բազմաթիվ փաստեր, վորոնք ցույց են տալիս, թե մարդու աղղեցության տակ ընտանի կենդանիները և մշակված բույսերը դարերի ընթացքում յենթարկվել եյին ահազին փոփոխությունների։ Այդ նոր աշխատությունով Դարվինը կամենում եր ավելի հիմնավորապես հաստատել յուր ուսմունքը, թեև վերջինն առանց դրան ել հիանալի կերպով պարզված և բազմաթիվ փաստերով հաստատված եր «Տեսակների ծագումը» գրվածքի մեջ։

1871 թվին լույս տեսավ Դարվինի մյուս հաճախակի գրվածքը — «Մարդու ծագումը յեվ սեռային լիներություն» վերնագրով, վոր կազմում և «Տեսակների ծագումը» աշխատության շարունակությունը։

«Մարդու ծագումը» գրվածքի մեջ Դարվինը ցույց տվեց, վոր մարդն ել յուր ծագումով ընդիմանութենիքից բացառություն չի կազմում, ընդհակառակը՝ թե մարմնի կազմությամբ, թե սաղմի զարգացմամբ և թե շատ ուրիշ կողմերով մարդս ել անշուշտ կապված է կաթնասուն կենդանիների հետ ազգակցական կապերով։ Կրում «Մարդու ծագումը» գրվածքի Դարվինը 1872 թվին հրատարակեց յուր նոր աշխատությունը։ «Մարդին հրատարակայից յուր նոր աշխատությունը» «Մարդություն կենդանիների զգայությունների արտահայտության մասին»։

Դժվար է յերևակայել այն սարսափելի աղմուկը, վոր բարձրացավ Յերապայում «Տեսակների ծագումը» և «Մարդու ծագումը» գրվածքների լույս տեսնելու առիթով։ Գիտնականները բաժանվել եյին յերկու բանակի, վորոնցից մեկը մինչև յերկինք եր բարձրացնում Դարվինին նրա վարդապետության համար, մյուսը,

ընդհակառակը՝ աշխատում եր ապացուցանել, վոր Դարվինը անմիտ ե, իսկ նրա ուսմունքը՝ ցնդաբանություն։

Ամեն տեսակ նախատինք, հայհոյանք թափեցին Դարվինի գլխին։ Հակառակորդների շարքում կային հոչակ ունեցող բազմաթիվ գիտնականներ, ինչպես, որինակ՝ Լուի Ագասիսը, Ֆլուրանսը ևայլն։

Յերբ լույս տեսավ՝ «Տեսակների ծագումը» աշխատության ֆրանսերեն թարգմանությունը, Ֆլուրանսն ընդունեց նրան բացարձակ հեղնությամբ, անվանելով Դարվինի գրվածքը «անբովանդակ», իսկ նրա մտքերը — «սիւալ» և «տղայական»։

Հայհոյողների խմբին միացել եր նաև անդիական հոգևորականությունը, վոր անընդունակ լինելով ըմբռնելու Դարվինի ուսմունքի եռթյունը, անվանեց նրան «անսատված», «հալատ քանդող» ևայլն։

Մինչդեռ ամբողջ Յերոպան ալեկործվում եր Զարլի Դարվինի հարուցած նոր մտքերի պատճառով, ինքը Դարվինը շատ քիչ եր մասնակցում վիճականություններին։ Նստած Դոունում և շրջապատված յուր աղավնիներով ու բույսերով՝ Դարվինը լուս ու մունջ շարունակում եր ընության ուսումնասիրությունը...

Յուր խաղաղ ու համեստ բնավորության պատճառով Դարվինը խուսափում եր բանակավին մասնակցելուց։ Այդ հանգամանքը կարող եր վատ ազդեցություն ունենալ նրա թեորիայի տարածվելու նկատմամբ, յեթե յերեան չգային թեորիայի զորեղ պաշտպաններ։

Յերեք հոչակավոր գիտնականներ — Հյոքսլին Անգլիայում, Ազա Գրեյը Ամերիկայում և Երնստ Հեկելը Գերմանիայում, նկատելով Դարվինի թուլությունն

ու համեստությունը, իրանց վրա եյին առել նրա մըտքերը պաշտպանելու և քարոզելու ծանր գործը։ Նրանք հոգվածներ եյին գրում, գասախոսություններ կարգում կամ բանակովում Դարվինի հակառակորդների հետ, աշխատելով ապացուցանել Դարվինի թեորիայի ճշմարտությունը։

Այդ կողմից սանավանդ նշանավոր եր Երնստ Հեկելի գործունեությունը։ Յուր սեպհական փորձերի ու զիտողությունների շնորհիվ Հեկելը յեկավ այն յեղբակացության, վոր Դարվինի մտքերը ճիշտ եյին և վոր նրանց ըլոդունելն անհնարին ե։ Գալով այդ համոզունքին՝ Հեկելը սկսեց այնպիսի կատաղի կըսիվ Դարվինի հակառակորդների դեմ, վոր կարծես թե այդ մտքերի հեղինակն ինքը լիներ։

Այսան ելի միքանի տարիներ, կրքերը կամաց հանգստացան, մարդիկ ավելի ուշադրությամբ կարդացին Զարլի Դարվինի հեղինակությունները, առվելի լավ ընբննեցին նրա մտքերը և... կամաց կամաց սկսեցին Դարվինի կողմի անցնել Ել հայհոյանքներ չեյին լսվում առաջգա պես։

Մյուս կողմից ամենայերենի գիտնականներ — Զարլի Լյայելը, Լյորբակը, Հերբերտ Սպենսերը միանալով Հեկելին, Հյուստեյի և Ազա Գրեյի հետ, արդեն բացարձակ կերպով հայտնել եյին իրանց զարմանքը և հիացմունքը Դարվինիզմի առիթով։

Այդպիսով անմեքը խոնարհեցին Դարվինի հանձարի առաջ։ Նույնիսկ հոգեորականությունը միքանի ժամանակից հետո ստիպված յեղավ փոխել յուր վերաբերմունքը դեպի Դարվինը։ Այդ յերկում և նրա գործունքը Դարվինը Այդ յերկում և նրանք վոր Դարվինի թագման ժամանակ հոգեորականից, վոր Դարվինի թագման ժամանակ հոգեորականից,

ները մեծ հանդեսով ճանապարհ զցեցին Դարվինի գագաղը մինչև գերեզման:

Դարվինիզմի համեմատաբար շուտ ընդունվելը գիտնականների կողմից բացատրվում է յերկու պատճառով: Առաջին պատճառն այն է, վոր ժամանակը հասունացել եր այդ ուսմունքի համար: Ահա ինչպես:

Անցյալ դարի սկզբում բնագիտությունն ահազին առաջադիմություն եր արել. կենդանաբանությունը, բուսաբանությունը և մյուս բիոլոգիական գիտությունները հարստացել եյին անթիվ դիտողություններով և փաստերով, վորոնք աննկատելի կերպով հող եյին պատրաստել Դարվինի վարդապետության համար: Դարվինիզմն այդ փաստերից յեվ դիտուրյուններից հանած հետեւանք յեվ տրամաբանական լեզրակացուրյուն եր, ուստի անկարելի յեր, վոր Դարվինի ուսմունքը չընդունեյին մանավանդ նրանք, վորոնք ընդունում եյին բնական գիտությունների հիմնական փաստերը:

Վոր Դարվինիզմի համար ժամանակը հասունացած եր, այդ պարզ յերեսում է այն հանգամանքից, վոր բացի Դարվինից ուրիշ գիտնականներ ել զբաղված եյին կենդանիների-և բույսերի ծագման ու զարգացման խնդրով:

Համարկը, ժոֆֆրուա Սենթ Իլեռը, ժորժ Կյուվիյեն, Ալֆրեդ Ուոլեսը սաստիկ հետաքրքրվում եյին նույն խնդրով: Մանավանդ ուշագրության արժանի է այն հանգամանքը, վոր Ալֆրեդ Ուոլեսը, ճանապարհորդելով Ամերիկայում, կատարելապես անկախ Դարվինից, նույն գյուտն արագ: Ուրեմն այն ուսմունքը, վոր մենք «Դարվինիզմ» ենք անվանում, իսկա-

պես պատկանում ե վոչ միայն Դարվինին, այլև Ալֆրեդ Ուոլեսին: Սակայն այդ ուսմունքը միայն Դարվինի անունն է կրում այն պատճառով, վոր Ալֆրեդ Ուոլեսը չկարողացավ Դարվինի նման յուր արած գյուտը հաստատել բազմաթիվ և հիմնավոր փաստերով:

Դարվինի թեորիայի հեշտ ընդունվելու և տարածվելու յերկրորդ պատճառն այն եր, վոր յուր ուսմունքը նա դրել եր անսասան հիմունքների վրա:

«Նրա աշխատությունը («Տեսակների ծագումը», «Մարդու ծագումը») ամենագիտական, ամենապարզ, ամենատրամաբանական և ամենահիմնական գիրքն եր, վորի նմանը յերբեք չեր տեսել աշխարհը: Դարվինը յուր թեորիայի յուրաքանչյուր կետն ապացուցանում եր քայլ առ քայլ փայլուն կերպով» (Գ. Ալլեն): Ուշագրության արժանի յե այն հանգամանքը, վոր «Տեսակների ծագումը» գրվածքի ամբողջ տպագրությունն սպառվեց մեկ որվա մեջ, իսկ մեկ ամսից հետո լույս տեսավ նրա յերկրորդ տպագրությունը: Առ զարմանալի յերեսութը մասամբ գաղափար ե տալիս այն մասին, թե ինչ աստիճանի հետաքրքրություն եր տիրում հասարակության մեջ զետի նոր ուսմունքը:

Դարվինը դարձավ ամենահոչակավոր մարզն ամբողջ աշխարհում: Անվերջանալի կերպով կրկնվում ել յին «Դարվին», «Դարվինի ուսմունք», «Դարվինիզմ» խոսքերը, Շատերը հայտնում եյին իրանց զարմանքը, վոր իրանք չեն հղացել մի այնպիսի պարզ, ինքն դարվինիզմ հասկանալի միտք, վորպիսին եր Դարվինի գյուտը:

Դարվինի համեստ տունը Դոռւնում դարձավ գիտնականների համար մի իսկական «Մեկքա»: Սա-

կայն այդ չտեսնված պատիվներն ու մհծարանքը չփոխեցին Դարվինին. նա մնաց նույն համեստ և աշտասիր մարդը:

Նույնիսկ Դարվինի թշնամիներն ընդունում ենին, վոր Դարվինի բնավորության մեջ կար զարմանալի գիտական բարեխղճություն և սեր դեպի ձշմարտությունը: Որինակ՝ Կատրֆաժի պատմելով՝ Դարվինը յերբեմ յուր աշխատանքների մեջ վորոնում եր փառատեր և ապացույցներ հոգուտ յուր հակառակորդների և առաջինն ինքն եր մատնացույց անում նրանց վրա:

Դարվինի ժամանակակից յերիտասարդ բնագետները, Դարվինի վրա նայում եյին, ինչպես իրանց հոր վրա: Դարվինը նրանցից բազմաթիվ նամակներ եր ստանում, վորոնց մեջ նրանք տեղեկություններ եյին հայտնում իրանց փորձերի և դիտողությունների մասին: Դարվինը ուրախությամբ պատասխանում եր նրանց, խորհուրդներ եր ատալիս իրեն ընկեր, անաջողության դեպքում ցավակցություն եր հայտնում կամ հիանում եր նրանց փորձերով:

Ինքը Դարվինն ել շարունակ աշխատում եր: Սակայն քանի ավելի եր նա ծերանում, այնքան ավելի գժվարանում եր նրա համար աշխատանքը: Մյուս կողմից ել հիվանդությունն եր սպառում նրա ուժերը:

Մինչդեռ Դարվինը այդպես թուլանում եր ֆիզիքապիս, նրա հանճարեղ գլխում ծագում եյին հետազոտությունների նորանոր ծրագրներ:

Դարվինի ամենաշերմ ցանկությունն եր մի փոքը ել ապրել վորպեսզի կարողանա վերջացնել ձհոնարկված փորձերը: Տարաբախտաբար Դարվինի այդ փափաղին վեճակված չեր իրագործվելու, 1882 թվի

ապրիլի 18-ին նրա հիվանդությունը հանկարծ սաստկացավ, իսկ 19-ին Զարգ Դարվինն այլևս չկար...

Նրա մահվան լուրը մեծ ցավ պատճառեց վոչ միայն Անգլիայում, այլև ամեն աել, ուր գիտակից մարդկեկ կային: Անգլիայի հասարակությունը վճռեց Դարվինին թաղել Վեստմինստերում, Նյուտոնի շիրմի կողքին, ցույց տալով, վոր միևնույն զգացմունքներն ետածում դեպի յերկու հանճարեղ հայրենակիցները:

Գետք և ասել վոր Դարվինի և Նյուտոնի վերաբերմամբ այդ հայացքը բոլորովին իրավացի եր, նրանց մեջ մեծ նմանություն կար: Յերկուսն ել ահազին հեղափոխություն կատարեցին իրանց կյանքում՝ Դարվինը Բիոլոգիայում, իսկ Նյուտոնը՝ Աստղաբաշխության մեջ:

Բացի այդ, յերկուսի գլխավոր նպատակն եր ճշշտ հասկացողություն տարածել ընության յերկույթների մասին: Բնուրյան յերեվույրներն ուսումնասիրելիս կամ բացատրելիս յերեք չպետք է առաջ բերել գերբնական ուշիք, երան վերագրել այս կամ այն յերեվույրը, այլ պետք է ձգտել այդ յերեվույրը բացատրել միմիան բնական պահանջերով: ահա այն միտքը, վորի ամենամեծ քարոզիչները Դարվինը և Նյուտոնն եյին:

Դարվինի գագաղը մեծ հանդեսով բերվեց Վեստմինստեր:

Գիտնականներից, բանաստեղծներից, փիլիսոփաներից բազկացած ահազին բազմություն ջերմեսանդությամբ ճանապահ եր զցում մինչեւ գերեզման այն մարդուն, վորին մի փոքր առաջ պատրաստ եր քարկոծելու:

Այդպես փոխվում են ժամանակները...

II

ՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կենդանիների և բույսերի դասավորությունը: Տեսակների ծագումը: Տեսակների անփոփոխականության թեորիան—Լիննեյը և Ժորժ Կյուվիյեն: Տեսակների փոփոխականության թեորիան—Բյուֆֆոն, Ժոֆֆրուա Սենթ Իլեր, Երազմ Դարվին և Լամարկ: Դարվինը վերջնականապես ապացուցեց տեսակների փոփոխականությունը: Ցուրաքանչյուր մեծ գյուտ միայն մեկ գիտնականի աշխատության արդյունք չի լինում:

Ամեն մի գրադարանապետ յուր գրադարանը կառավարելու համար նախ և առաջ մի վորոշ կարգ և մտցնում նրա մեջ: Նա բաժանում է գրադարանի գըրքերը միքանի մասերի: պատմական գրքերը միտեղ և ժողովում, փիլիսոփայական գրքածքներն ուրիշ տեղ և դուռը, բուն գիտական հեղինակություններին յերրորդ տեղն է հատկացնում... Այդ մասերից յուրաքանչյուրը գրադարանապետը ստորաբաժանում է ավելի փոքր ճյուղերի: որինակ՝ գիտական գրքածքները ստորաբաժանում են բնագիտական, իրավաբանական, լիզաբոնական, բժշկական և այլ բաժինների:

Այդպիսով գրքերը վորոշ սիստեմով դասավորում

են: Դասավորությունը (classification) վոչ միայն ոգտավետ ե, այլև հաճախ ուղղակի անհրաժեշտ մի բան ե: Յեթե գրադարանի գրքերը դասավորված չլինեյին վերոհիշյալ կարգով, այդ գեպքում մի վորոշ գիրք գտնելու համար գրադարանապետը ամեն անդամ ստիպված կըլիներ քարուքանդ անելու յուր ամբողջ գրադարանը:

Դասավորությունն ավելի ևս անհրաժեշտ ե բնագետի համար: Զայ վոր բնությունը լիքն ե անթիվ ու անհամար կենդանիներով և բույսերով: Հասկանալի բան ե, վոր նրանց ուսումնասիրելու գործը մեծ դժվարություն կըներկայացներ, յեթե նրանք վորոշ սիստեմով բաժանված ու ստորաբաժանված չլինեյին գրադարանի գրքերի նման:

Դրանով և բացատրվում, վոր դեռ հին ժամանակներից սկսած գիտնականներն աշխատում եյին վորոշ սիստեմով դասավորել բույսերն ու կենդանիները: Որինակ՝ այդպիսի մի փորձ արագ դեռ Արխատողելը: Այս սիստեմների վրա մենք կանգ չենք առնիւ, վորովհետեւ մեջ առաջին առաջարարակ հին ժամանակների դասավորությունների սիստեմներն անկատար եյին:

Այժմ յերկրագնտի բոլոր բույսերը բաժանվում են յերկու մասի: Առաջին մասը պարունակում է յուր մեջ ամենապարզ կաղմություն ունեցեղ բույսեր—սունկերը, բակտերիաները, մամուռը, պտերները (պարորտնիկ) և շատ ուրիշները: Դրանք անվանվում են սպորատու բույսեր կամ գալտենալուսիներ (cryptogametes, տայնօբրագիր բազմացում) Այդ բույսերը ծաղիկներ չեն արտադրում:

Ավելի բարդ կազմություն ունեցող բույսերը—ընկուզենին, կաղնին, վարդենին, խնձորենին և մյուսները կազմում են բուսական թագավորության յերկրորդ մասը. դրանք անվանվում են ծաղկատու բույսեր կամ հայտնամուսիթներ (phanérogames, յահօբրաчные растения):

Յերկրորդ տեսակի բույսերն ավելի ծանոթ են հասարակությանը. դրանք միշտ ծաղիկներ են արտադրում և բազմանում են սերմերով:

Թե՛սպորատու և թե ծաղկատու բույսերը ստորագագատում են ավելի ևս փոքրիկ խմբերի—ընտանիքների. որինակ՝ ծաղկատու բույսերը կազմում են հետեւյալ ընտանիքները. շուշանակերպերի ընտանիք, խաչակերպեր, վարդակերպեր, խնձորենիներ և այլն:

Ցուրաքանչյուրը ընտանիք ստորագագատում է ավելի ևս փոքրիկ մասերի—ազգերի (genus, род), իսկ ամեն մեկ ազգ բաժանվում է տեսակների (species, вид), Տանձենին, սերկալին, խնձորենին, սղնին միւսույն ընտանիքի գանազան տեսակներն են (խնձորենիների ընտանիք—семейство аблонеевых): Ծիրանին, դեղձնին, գամոնը, նշենին, սալորը—նույնպես տեսակներ են, բայց պատկանում են ուրիշ ընտանիքի, և այլն:

Կենդանիներն ել բաժանվում են միքանի միջդպասակարգի. վորոնցից յուրաքանչյուրը ստորագագանվում է ավելի փոքրիկ խմբերի. Այստեղ ել ստորագագանման ամենափոքրիկ ճյուղերը կոչվում են տեսակներ:

Այդպեսով թե՛ բուսական և թե կենդանական, թագավորությունները բաղկացած են վորոշ խմբերից, այն հ՝ տեսակներից:

Ի՞նչ կապ կամ հարաբերություն կա այդ անթիվ տեսակների մեջ: Մեզ հայտնի ե, վոր կենդանական թագավորությունը բաղկացած ե՝ շան, կատվի, կաքավի, նապաստակի և շատ ուրիշ տեսակներից: Գլխավոր ինդիքն այն և թե ուրդյոք այդ զանազան տեսակները ընդհանուր ծնողներից են ծագել և հետո ժամանակի ընթացքում փոփոխվել ստացել իրանց այժմյան կերպարանքը, թե՛ ընդհակառակը՝ հենց սկզբից նրանք տարբեր ծագումն են ունեցել և հենց սկզբումն ել ունեցել են՝ նապաստակի, կաքավի, շան և կատվի կերպարանք:

Յեթե առաջին յենթագրությունը ձիշտ լինի, այն ժամանակ պարզ ե, վոր տեսակները փոփոխական են: Այդ հայացքի հիման վրա այժմյան տեսակներն ել ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել և նորանոր տեսակներ առաջացնել: Որինակ՝ կատվի կամ ազգեսի տեսակները, այդ յենթագրության համաձայն, հազարավոր տարիների ընթացքում անփոփոխ չեն մնալու, այլ հավանական ե, վոր փոփոխվեն և նրանցից կենդանիների նոր տեսակներ առաջանան:

Իսկ յեթե ձիշտ լինի այն յենթագրությունը, թե այժմյան բոլոր տեսակները հենց սկզբից տարբեր ծագումն են ունեցել և առանց փոփոխության հասել են մեր ժամանակներին, կընշանակի թե տեսակները փոփոխական չեն:

Ինչպես հետո կըտեսնենք, այս խնդիրը մեծ նշանակություն ունեցավ Բիոլոգիայի պատմության մեջ, ի՞նչպես վճռվեց նա:

18-րդ դարի սկզբում հռչակավոր բուսաբան Լիննեյն առաջարկեց բույսերի դասավորության յուր

նշանավոր սիստեմը։ Նկատելով հին դասավորությունների թերությունները, նա նորից բաժանեց և ստորաբաժանեց բույսերը։

Հիշելով վերև բերած համեմատությունը, պետք է նկատել վոր հենց գրադարանի գրքերի դասավորությունն ել կարող և զանազան կերպ կատարվել. մեկ գրադարանապետ կարող և աջող կերպով դասավորել յուր գրքերը, մյուսը—անաջող, և դրա հետևանքն այս կը լինի, վոր անաջող դասավորած գրադարանում այս կամ այն գիրքը գտնելու համար անհամեմատ ավելի շատ ժամանակ կը կորչի, քան այն գրադարանում, վորի գրքերն ավելի աջող են դասավորած։

Եթե բավական դժվար գործ և մի գորեն գրադարանի գրքեր աջող դասավորելը, ապա վորքան դժվար կը լինի դասավորել բոլոր բույսերն ու կենդանիները, վորոնց քանակությունն անհամեմատ ավելի շատ եւ։

Այս դժվարություններովն և բացատրվում հին դասավորությունների անկատար լինելը, վոր և առիթ ավեց լիննեյին դասավորություն նոր սիստեմ առաջարկել. լիննեյի դասավորությունն թեև այժմ հնացած և համարվում, բայց յուր ժամանակին նա ահազին նշանակություն ունեցավ և մեծ զարկ տվեց գիտության գրագացմանը։

Լիննեյն ուսումնասիրելով զանազան տեսակ բույսեր, բնականաբար հասավ տեսակների ծագման խընդորին։ Սակայն վորքան ել վոր մեծ եր և ոգտագետ լիննեյի գործունեությունը շատ կողմերով, տարաբաղդարար մնասական ագգեցություն ունեցավ տնսակների ծագման նկատմամբ։

Լիննեյի կարծիքով՝ աշխարհիս ստեղծագործու-

թյան որից ստեղծվել են բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակներ։ Ամեն մեկ տեսակն ստացել է ստեղծողից յուր կերպարանքը, վոր և պահպանվել է մինչև մեր ժամանակները և պահպանելու և մինչև աշխարհի վերջը*):

Լիննեյի ասելով՝ վոչ մի նշանավոր փոփոխման չի կարող յենթարկվել «տեսակը» (որինակ՝ ձին, նապաստակը և այլն) նույնիսկ հազարավոր տարիների ընթացքում։ Այժմ այնքան տեսակներ կան—կենդանական և բուսական—վորքան ստեղծվել եյին աշխարհիս գոյության սկզբում։ Այն ժամանակ ստեղծվել են կաքավի, շան, մանուշակի, գետնախնձորի տեսակները և անփոխի հասել են մեր ժամանակներին։ Կաքավը բազմացել և կարող է բազմանալ, առաջացնելով կաքավների բազմաթիվ նոր սերուղներ, բայց չի կարող այնպես փոփոխվել, վոր նրանից գոյանան նոր տեսակի թոչուններ կամ առհասարակ նոր տեսակի կենդանիներ։

Ահա լիննեյի հայացքը, վոր կրում եւ «Տեսակների անփոխականուրյան բեորիա» անունը։ Այդ ուսումնությը շատ հետևողներ ունեցավ, վորոնցից ամենանշանակություն ժորժ Կյուվիլյեն եր, վոր ձգտում եր փաստերով ապացուցանել տեսակների անփոխականությունը, ժորժ Կյուվիլյեն հանճարեղ բնագետեր, զիտությանը մատուցած նրա ծառայություններն անգնահատելի

*). Ահա լիննեյի խոսքերը. «Species tot sunt diversae, quet diceasas formas ab intio creavit intimum ens»—այնքան զանազան տեսակներ կան, վորքան սկզբում ստեղծել եւ անսահման եակը։

եյին, այդ պատճառով գիտնականների շրջանում նա վաստակել եր մեծ հեղինակություն, ուստի և նրա պաշտպանած «Տեսակների անփոփոխականության թեորիան» մի աքսիոմա դարձավ, վորի գեմ վիճելն անկարելի եր համարվում:

Լիննեյի և Ժորժ Կյուվիեյի թեորիային հակառակվելն ավելի ևս վասնգությունը եր դարձել այն պատճառով, վոր նրանք իրանց ուսմունքին կրոնական աստառ եյին տվել: Դրանով և բացատրվում այն հանգամանքը, վոր հայտնի փիլիսոփա Բյուֆոնը՝ հակառակ լինելով նրանց հայացքին, տեսակների ծագման մասին խոսում եր ակնարկներով և այն ել մեծ զգուշությամբ:

Բայց և այնպես Բյուֆոնն առաջինը յեղավ, վոր փորձեց Կյուվիեյի և Լիննեյի թեորիայի հակառակ մտքեր տարածել: Նա հայտնեց այն կարծիքը, թե այժմյան բույսերն ու կենդանիները կարող եյին առաջանալ մեկ սկզբնական տիպարից:

Բյուֆոնի կարծիքով՝ տեսակները մշտական և անփոփխ չեն, ինչպես պնդում եյին Լիննեյը և Կյուվիեն, այլ փոփոխական: Վոչ միայն կենդանիները, այլ հենց մարդեւ նրանց հետ, Բյուֆոնի կարծիքով, կարող եյին ունենալ մի ընդհանուր նախահայր, մի ընդհանուր ծագում: Սակայն, ինչպես վերև հայտնեցինք, Բյուֆոնը յուր մտքերը հայտնում եր մութը և անփորոշ կերպով, վախենալով, թե մի գուցե հակառակորդները նրան անաստվածների շարքը դասեն:

Բյուֆոնի մտքերի կողմնակից և պաշտպան հանդիսացան մի շարք հոչակավոր գիտնականներ՝ ժամանակը, ժողովրուա Սենթ Իլենը, գերմանական հանձա-

րեղ բանաստեղծ վ. Գյոթեն և Երազմ Դարվինը, վոր ինչպես կը հիշե ընթերցողը, հոչակավոր Զարլզ Դարվինի պապն եր: Երազմ Դարվինի մտքերի հետ մենք մասամբ ծանոթացանք վերե:

Ընթերցողն արդեն գիտե Երազմ Դարվինի մի վոտանավորի բովանդակությունը, վորի մեջ նա նկարագրում ե որգանական աշխարհի ծագումը: Նրա կարծիքով՝ յերկրագնատի վրա նախ առաջ են յեկել շատ մանըր և պարզ եակներ, վորոնք «սողում եյին ցեխի մեջ կամ լողում ջրերի փրփուրներում»: Վերջին խոսքերով Երազմ Դարվինը կամենում եր ցույց տալ թե սկզբուական պարզ եակներն ապրում եյին ջրի մեջ և վոչ թե ցամաքի վրա *): Այդ մանը, խոշորացուցային ըսկզբնական հակներից հետագա ժամանակներում գոյացան բոլոր կենդանիներն ու բույսերը:

Տեսակների փոփոխականության թեորիայի ամենազորեղ պաշտպանը ժամանակն էր: Անցյալ դարեւ սկզբում, միշտ այն թվին, յերբ ծնվեց Զարլզ Դարվինը, այսինքն 1809 թվականին, Լամարկը հրատարակեց յուր Philosophie Zoologique աշխատությունը, վոր տեսակների ծագման վերաբերյալ յեղած բոլոր աշխատությունների մեջ ամենանշանավոր գրվածքն և համարվում մինչև Զարլզ Դարվինի յերեան գալը:

Լամարկի ժամանակակից գիտնականներն անկարող յեղան ըմբռնել և գնահատել նրա փայլուն մըտքերը:

*) Ավելորդ չի լինիլ նկատել վոր այդ հայացքն այժմ ել ընդունված ե. այժմ ել գիտնականներն ընդունում յեն, վոր սկզբնական պարզ եակներն ապրում եյին ջրերում:

Յուր աշխատության մեջ կամարկն այն կարծիքն է հայտնում, թե սկզբներում առաջացել են շատ պարզ եակներ, վորոնք յերկար տարիների ընթացքում շրջապատող պայմանների ազդեցության տակ սկսել են փոփոխվել և զարգանալ: Ըստ կամարկի՝ կենդանին որգանիզմներին հատուկ են ներքին ձգտում զեղի առաջադիմություն: Շնորհիվ մի կողմից այդ ներքին ձգտման, մյուս կողմից շրջապատող միջավայրի ազդեցության սկզբնական պարզ եակներից հետագա ժամանակներում առաջացել են կենդանիների և բույսերի բոլոր տեսակները:

Այդպիսի զարգացման արդյունք է նաև մարդը, վոր կամարկի կարծիքով, առաջացել է կապկանման կենդանիներից: Տիսակների փոփոխման թեորիան վումանք անվանում են լամարկիզմ և պատիվ ժան Լամարկի, վոր համարվում է Զարլզ Դարվինի նախորդը: Կամարկին աշակցում եր այս խնդրում մյուս հռոշակավոր ֆրանսիացի փիլիսոփա Ժոֆֆրուա Սենթ Իլլերը:

Այդպիսով տեսակների ծագման խնդիրը դարձել եր տար վիճաբանությունների առարկա: Շուտով այդ վեճն անցավ նույնիսկ ֆրանսիական ճեմարանը: Հակառակ տեսությունների յերկու նշանավոր ներկայացուցիչները—Ժորժ Կյուվիյեն և Ժոֆֆրուա Սենթ Իլլերը 1830 թվի հուլիս ամսին Գիտությանց ճեմարանում ահագին բազմության ներկայությամբ վեճի բըռնվեցին: Սենթ Իլլերը պաշտպանում եր որգանիզմների փոփոխականության գաղափարը, իսկ Կյուվիյեն աշխատում եր երգի:

Այդ ժամանակ Փարիզում նոր եր բոնկվել նու-

լիսյան հեղափոխությունը: Չնայած քաղաքական հուղմունքներին, ճեմարանը գրավել եր հետաքրքրվողների ահագին բազմություն, ամենքը ցանկանում ելին իւմանալ, թե ի՞նչպես կը վճռվի մեծ կենսաբանական խընդիրը. վեր վարդապետությունը հաղթությունը կը տանի: Թեև հակառակորդներն անկարող յեղան վերջնականապես ապացուցանել մեկ կամ մյուս ուսմունքի ճշմարտությունը, բայց նաև առաջարկությունը ցրվեց այն տպավորության տակ, թե հաղթողը ժորժ Կյուվիյեն եր:

Այս վիճաբանությունները լավ ծանոթ եյին Զարլզ Դարվինին: Թե ճանապարհորդության ժամանակ և թե հետո արած գիտողությունները համոզել եյին Զարլզ Դարվինին, վոր բոյսերն ու կենդանիներն ընդունակ են զգալի կերպով փոփոխվելու ու զարգանալու և վոր ուղեմմ կիննեյի ու ժորժ Կյուվիյեյի անփոփոխականության թեորիան հիմնովին սիսալ եւ:

Այդ ե պատճառը, վոր Զարլզ Դարվինն առանց տատանվելու անցավ Բյուֆֆոնի, Սենթ Իլլերի և Լամարկի կողմը: Սակայն վերջինների հետ համեմատած, Դարվինն այն մեծ առավելությունն ուներ, վոր զինված եր անթիվ փաստերով, մինչդեռ կամարկը և Սենթ Իլլերը՝ չունենալով այդ տեսակ նյութեր, անկարող յեղան փաստային հիմնավորումն տալ տեսակների փոփոխականության տեսությանը:

Անհնարին և այստեղ առաջ բերել այն բոլոր փաստերը, վորոնց հիման վրա Դարվինը վերջնականապես ապացուցեց որգանիզմի զարգացումը և փոփոխականությունը, այնքան նրանք բազմաթիվ են: Այդ

Փաստերից յես կը հիշատակեմ միայն միքանիսը, վո՞նք վերաբերում են ընտանիքի կենդանիների և մըշակված բույսերի կյանքին:

Վերցնենք աղավնիներին. ում հայտնի չե, վորմեծ տարրերություն կա զանազան յերկիրներում ապրող աղավնիների մեջ: Նույնիսկ մի յերկրում ապրող աղավնիները հաճախ սաստիկ տարրերվում են իրարից. նրանք զանազանվում են իրարից գույնով, մեծությամբ, կտուցի կամ պարանոցի ձևերով, բնավորությամբ և նույնիսկ կմախքներով. Մանավանդ միքանի ցեղեր աչքի յեն ընկնում իրանց տարրինակառանձնահատկություններով:

Վերցնենք, որինակ՝ աղավնիների հետելալցեղերը «անզիվակն փեխածր», «Տանկական աղավնին, «կարներիս տուրմանը» և վերջապես «վայրենի աղավնին» տեսնողներն անշուշտ կը կարծեն, թէ դրանք բոլորովին տարրեր տեսակների թոշուններ են և նրանց մեջ մոտիկ ազգակցական կապ յենթադրեն անհնարին ե:

Զգետք ե կարծել, թէ դրանք միայն արտաքինով յեն տարրերվում, վո՞չ, դրանց ներքին կազմվածքի մեջ ել կա զգալի տարրերություններ:

«Զիա կազմվածքի և բնավորության համարյա զումի գիծ, վոր յենթարկված չլինի փոփոխության. ըգգալի կերպով կարող են փոփոխվել գանգի, կտուցի, կողերի, կրծոսկը ձևերը, նույնիսկ կարող են փոփոխվել գավակային և պոչային վողերի թիվը, պոչի և թերթի փետուրների թիվը, ձվերի ձևը, թոչելու ձևը և ձայնը. Մի խոսքով՝ աղավնիների ցեղերի տարրերություններն այնքան խոշոր են, վոր յեթե նրանց,

գտնելին վայրենի դրության մեջ, անշուշտ նրանց կը համարելին տարրեր տեսակներ»... *):

Ծանոթանանք մի փոքր աղավնիների ցեղերի հետ: Աերցնենք վայրենի աղավնինի. ընթերցողն անշուշտ տեսած կրինի վայրենի աղավնի, վորովհետեւ նա շատ տեղերում և ապրում: Վայրենի աղավնին բաց մոխրագույն ե, նրա փորը սպիտակ ե, իսկ թերթի վրա կան յերկու սկզբանական գծեր:

Այլ պատկերն ե ներկայացնում «անզիվական փրեփանը (grosses—gorges, առլուսեան ջրանոց): Այդ աղավնու կոկորդն այնքան մեծ ե, վոր վլուխը համարյա չի յերկում, իսկ նրա վողերի թիվը վայրենի աղավնու վորգերի համեմատությամբ ավելի շատ ե:

«Ճանկական ալպակնու» (Pigeon tare) կտուցը համարյա յերկու անգամ ավելի յերկար ե, քան վայրենի աղավնու կտուցը, իսկ աչքերի շուրջը գանվում ե կընձիռներով ծածկված կաշի, վորի նմանը չունի վայրենի աղավնին:

Աղավնիների բնորոշ հատկանշաներից մեկն ելայն ե, վոր նրանց պոչը բաղկացած ե լինում տասներկու փետուրներից, այդպիս ե կազմված նաև վայրենի աղավնու պոչը: Բացառություն ե կազմում «գողգողակն» (trembleurs) կոչված ցեղը: Այդ ցեղի աղավնիների պոչը մոտ քսան փետուր ե ունենում: «Դողդողանի» վողերի թիվն ել շատ ե՝ համեմատած վայրենի աղավնու վողերի հետ:

Պակաս տարրինակ չե և «կարճերես տուրմանը»

*) Կ. Տեմիրյազև—«Чарлз Дарвин и его учение», մ. I. եջ. 74.

(субвитанты, короткодицый турман), վորի գլուխը փոքր և կ զնդաձե, նրա կտուցը չափազանց փոքրիկ և, այնպիս վոր տուրմանի գլուխը նման և մի կեռասի, վորի մեջ կարծես դարու հատիկ և ցցված (կտուցը):

Յուր գրվածքի^{*)} մեջ Զ. Դարվինը շատուշատ այդ տեսակ փաստեր և առաջ բերում, սակայն ընթերցողին չհոգնեցնելու համար, յես կըրավականնամ վերսէիշալ որինակներով: Ի՞նչ են ապացուցում դրանք:

Համեմատելով «անկական աղավնին», «անզիական փիված» աղավնին, «գողգողանը» և «կարներեսուրմանը» վայրենի աղավնու նետ, մենք տեսանք, վոր նրանց մեջ ահագին տարբերություն կա և այդ տարբերությունը միայն արտաքինով չի սահմանափակվում: արգեն վերև ասվեց, թէ այդ աղավնիների նույնիսկ կմախքների մեջ խոշոր տարբերություններ կան:

Ոետք և նկատել վոր կենդանիների ամենախոշոր տարբերությունները համարվում են կմախքների մեջ յեղած տարբերությունները: յեթե յերկու կենդանի արտաքին տեսքով իրար նույնիսկ շատ նման լինեն և յեթե նրանց կմախքների մեջ խոշոր տարբերություններ կան, նրանք համարվում են տարբերմբերի պատկանող կենդանիներ:

Հենց այդ տեսակետից «կարճերես տուրմանը», «գողգողանը», «տաճկական աղավնին», «անգլիական փքվածը» և վայրենի աղավնին իսկապես չպիտի համարվելին մի տեսակի պատկանող թուշուններ, այնքան մեծ և զանազանությունը:

^{*)} Չարլզ Դարвин—Прирученные животные и возделанные растения.

Զնայած այդ ահագին տարբերություններին, նրանք բոլորն ել ունեցել են մի ընդհանուր ծագում: Այն, արդեն անվիճելի կերպով ապացուցված և, վոր աղավնիների բոլոր բազմաթեսակ ցեղերը ծագել են վայրենի աղավնուց: Այս վերջինն և բոլոր աղավնիների նախահայրը:

Հին ժամանակներում գոյություն և ունեցել միայն վայրենի աղավնին, վորի սերունդները հետագաժամանակներում սաստիկ փոփոխվել են և նրանցից առաջացել են «տաճկական աղավնին», «գողգողանը» և մյուս բոլոր ցեղերը:

Վայրենի աղավնու նախահայր լինելը Դարվինն ապացուցանում և շատ սրամիտ գատողություններով, սակայն յես գրանց վրա կանգ չեմ առնում, վորովհատես նրանք հիմնված են չափազանց մասնագիտական դիտողությունների վրա:

Ուրեմն պարզ և, գոնյա աղավնիների վերաբերմամբ, վոր նրանք իրանց գոյության ընթացքում անփոփխ չեն մնացել:

Գալով նազարենին, Դարվինը հիմնավոր և բագմակողմանի դիտողություններով հաստատեց, վոր ընտանի ճագարների բոլոր ցեղերն առաջացել են մի ընդհանուր նախահորից—վայրենի ճագարից: Զնայած դրան, այժմ ահագին տարբերություն կա ընտանի ճագարների և նրանց նախահոր—վայրենի ճագարների մեջ:

Ընտանի ճագարները զանազանվում են վայրենի ճագարից գույնով, ականջների ձևով, վոտների յերկարությամբ, նույնիսկ կմախքներով, ընտանի ճագարի գանգը մեկ ու կես անգամ ավելի յերկար և լէ-

նում նրա նախահոր—վայրենի ճագարի գանդից: Բացի՝ յդ՝ լնտանի ճագարի գանդի համարյա բոլոր վոսկորների թե ձեզ և թե մեծությունը սաստիկ փոփոխված են:

Նույն յերկույթը, ինչպես ապացուցեց Դարվինը, նկատվում է նաև ձիերի և շատ ուրիշ կենդանիների վերաբերմամբ: Ուրեմն Դարվինի շնորհիվ մեզ համար պարզ եւ այժմ, վոր աղավնիները, ճագարները, ձիերը և շատ ուրիշ կենդանիներ դարերի ընթացքում սաստիկ փոփոխվել են:

Բուսերը ես, ինչպես պարզվեց, այդ որենքից բացառություն չեն կաղմում: Դարվինը բազմաթիվ որինակներով ապացուցեց, վոր բազմաթիվ բույսեր այժմ չունեն այն կերպարանքը, ինչ վոր ունեցել են հազարավոր տարիներ մեղնից առաջ: Իրեւ որինակ կարելի յե բերել դրումը, վարդինին, սեխը և շատ ուրիշներ:

Հայտնի գիտնական Նոդենի պատմելով՝ դդումի զանազան ցեղերն այնքան խոր տարբերություն ունեն մեկը մյուսից, վոր կարելի յե նրանց տարբեր տեսակներ համարել:

Այժմ մեզ մինչև անդամ տարրորինակ և թվում, վոր Լիննեյի և Ժորժ Կյուվիյեյի պես հոչակալոր գիտնականները պնդում եյին, թե կենդանիների և բույսերի տեսակներն անընդունակ են փոփոխվելու:

Սակայն չպիտի մոռանանք, վոր վերոհիշյալ փառերն անհայտ եյին Լիննեյի և Կյուվիյեյի ժամանակ: Յեթե այդ փառերը հայտնի լինելին նրանց, դժվար թե նրանք պնդեյին, վոր բույսերն ու կենդանիներն անփոփոխ են:

Այդպես ուրիշն Բյուֆոնի, Երազմ Դարվինի, Ժոֆֆրուա Սենթ Իլերի, Լամարկի և վերջապես Զարլզ Դարվինի ջանքերով կազմվեց կենդանիների և բույսերի ծագմանն ու զարգացմանը վերաբերյալ մի լիակատար և գրավիչ ուսմունք: Ահա այդ ուսմունքի երական կետերը:

Հեռագոր անցյալում յերկրագնադիմ վրա գոյություն ե ունեցել մեկ կամ միքանի տեսակ եակներ, փորոնք շատ պարզ կազմվածք են ունեցել: Զանազան գործոնների շնորհիվ սկզբնական պարզ եակներն սկսել են փոփոխվել: Թեև կարճ ժամանակամիջոցում փոփոխությունը շատ չնշին և աննկատելի յե լինում, բայց վորովհետեւնա կատարվում ե անընդհատ հազարավոր տարիների ընթացքում, այդ պատճառով սկզբնական որգանիզմներից առաջ յեկած սերունդները հետագա ժամանակներում այնքան են տարբերվել իրարից, փոր դժվար ե յեղել իմանալ, թե նրանք մեկ ընդհանուր ծագումն են ունեցել: Այժմյան կենդանիների երույսերի բազմաթիվ տեսակները հենց նույն սկզբնական պարզ եակների սերունդներն են:

Համեմատության համար առաջ բերենք մի որինակ: Հավանական ե, վոր մարդիկ ունեցած լինին մի բնորոշությունը ծագում և միևնույն սկզբնական տիպարը: Բայց հետո սփոփելով յերկրագնատի զանազան կողմերը և յենթարկվելով տարբեր պայմանների, մարդիկ սկսել ել փոփոխվել և տարբերվել: Այդպիսով առաջացել են մարդկային զանազան ցեղերը:

Ինկատի ունենալով այն հանգումանքը, վոր բույսերի և կենդանիների այժմյան տեսակներն իրանց նախահայրերի համեմատությամբ ավելի բարդ և զարգա-

ցած կազմություն ունին, պետք է ընդունենք, վոր որդանիզմները դարերի ընթացքում փոփոխվելով, զարգացման աստիճաններից հասել են ավելի բարձր ասինաների:

Առաջադիմությունն որդանական աշխարհում դեռ չի վերջացել. մեն ժամանակի բույսերն ու կենդանիները շարունակում են անընդահատ փոփոխվել, զարգանալ և առաջադիմել: Կանցնեն դարեր, մասն փոփոխությունները կը դումարվեն և այժմյան տեսակներից կառաջանան որդանիզմների նոր տեսակները, վորոնք ավելի զարգացած, ավելի բարդ կազմվածք կունենան, քան այժմյան որդանիզմները:

Այդ ուսմունքը կոչվում է զարգացման կամ առաջադիմության Տեորիա (Թեօրիա քազմակերպության, Թեօրիա պրոցեսա): Շատերն ել այդ թեորիան անվանում են Եվլուսիոնական*): Ուսմունքը, իսկ այդ ուսմունքն ըստեղծողներին—Բյուֆֆոնին, Երազմ Դարվինին, Սենթ Իլերին, Լամարկին և Չարլզ Դարվինին—Եվլուսիոնիսներ:

Ենթադր և ժորժ Կյուվիլին որդանական աշխարհը համարում ենին անփոփոխ՝ վորոշ տիպարներով ընդմիշտ սահմանափակված և անշարժ:

Եվլուսիոնիսներն ընդհակառակի՝ նույն բնության մեջ գտնվում են անվերջանալի տարծում յել փոփոխություն, անսահման զարգացում յել առաջադիմություն:

Հարկ կա արգյուք ավելացնել. վոր զարգացման թեորիայի հաղթության շնորհիլ Ենթադր և Կյուվիլի:

*) Evolution խոսքից, վոր նշանակում է շարժում, զարգացում:

ուսմունքն արդեն մոռացության և տրված. այժմ միակ ճշմարիտ ուսմունք համարվում է զարգացման թեորիան:

Շատերը զարգացման ուսմունքը շփոթում են բուն դարվինիզմի հետ, մինչդեռ դրանք, ինչպես մի փոքր հետո կը տեսնենք, տարբեր ուսմունքներ են:

Դարվինիզմն իսկապես կազմում է զարգացման թեորիայի մի մասը:

Ընդհանուր հայացք ձգելով զարգացման թեորիայի պատմության վրա, մենք նկատում ենք, վոր այդ ուսմունքը միայն մի գիտնականի աշխատության արդյունք չե, այլ մի շարք հոչակավոր գիտնականների ջանքերի հետևանք: Ամենից առաջ այդ ճշմարտության հասագ Բյուֆֆոնը, վոր սակայն զեռ չեր պարզել մեծ ուսմունքի բոլոր կետերը: Ժոֆֆրուա Սենթ Իլերը և մանավանդ Ժան Լամարկը ճիշտ կերպով հասկացան և արտահայտեցին զարգացման մեծ որենքները: Բայց ուրիշ բան և հասկանալ ըմբռնել մի գորեե ճշխարտություն, և ուրիշ բան և հասկացվածը կարողանալ հիմնավորապես հաստատել:

Վերջապես առաջ եկալ Զարլի Դարվինը, վոր անթիվ փաստերի հիման վրա ընդմիշտ խորտակեց Լինեյի և Կյուվիլիյի անփոփոխականության ուսմունքը:

Ինչ վոր ասացինք զարգացման թեորիայի մասին, ընթերցողը նույնը կը նկատի նաև համարյա բոլոր նշանափոր գյուտերի վերաբերմամբ. վոչ մեծ գյուտ հանկարծ չի կատարվում, այլ յերկար տարիների ընթացքում նրա համար հող և պատրաստվում: Դեռ գյուտը կատարված չի լինում, յերբ այս կամ այն վիտնականը մութը և անորոշ կերպով ակնարկներ և

անում, անգիտակցորեն նախապատրաստելով գիտնականներին նոր ճշմարտությունը գտնելու և ըմբռնելու:

Այդպիսով իսկապես սխալ և վորեք մեծ զյուտի պատիվը վերագրել ամբողջովին միայն մեկ մարդու:

III

ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ և առաջադիմության պատճառը: Լամարկի կարծիքը: Անհատական փոփոխականություն: Արվեստական ընտրություն: Ծնուանի կենդանիների և բույսերի ցեղը գոյացել են արվեստական ընտրության շնորհիվ: Ժառանգականություն:

Մենք արդեն իմացանք, վոր կենդանիների և բույսերի այժմյան բազմաթիվ տեսակներն առաջացել են սկզբնական պարզ եակներից, անընդհատ փոքր սխվելով ու առաջադիմելով և այժմ ել շարունակում են փոփոխվել:

Բնականաբար հարց և ծագում, թե ի՞նչն ե այդ անընդհատ զարգացման պատճառը:

Այդ ի՞նչ ույժ ե, վոր առանց գաղարելու կենդանիներին ու բույսերին մղել ե դեպի զարգացում յեվ առաջադիմություն: Հասկանալի ե, վոր այդ ույժը մեայն մեր ժամանակները չի գործում, նա սկսել ե գործել հենց այն որից, յերբ յերկրագնտի վրա առաջին անգամ յերևացել են կենդանի որգանիզմներ, վորովհետեւ իրանց ծագման որից որգանիզմներն սկսել են փոփոխվել և առաջադիմել:

Տեսնենք ի՞նչպես եյին բացատրում առաջգա և վոլուսիսնիստները կենդանիների և բույսերի զարգացումն ու առաջադիմությունը:

Լամարկը, վոր իսկապես զարգացման թեորիայի ստեղծողն էր, նույնպես փորձեց զարգացման ու առաջադիմության պատճառը գտնել: Լամբարկի կարծիքով, որգանիզմներն իրանց մեջ պարունակում են մի առանձին ձգտումն, վոր ստիպում է նրանց առաջադիմել ու կատարելազորձվել:

Խոսելով այդ բացատրության մասին՝ Հերքերտ Սպենսերը իրավացի կերպով նկատում է, թե «այդ այն բացատրություններից ե, վորոնք վոչինչ չեն բացատրում»: Իրավ, միթե հարցը կարող է պարզել մի ինչ վոր խորհրդավոր ձգտում, վոր անկարելի է ուսումնասիրել ուստի անկարելի ե վորոշ գաղափար կազմել նրա մասին: Միթե հարցը կարող է պարզել մի յենթարություն, վոր ենքը մութն ու անհասկանալի ե:

Բացի այդ՝ Լամբարկը ահապին նշանակություն եր տալիս միջավայրի ազդեցուրյան: «Արտաքին պայմանների փոփոխությունները կենդանիների մեջ առաջնում են նոր պահանջներ և սովորություններ, վորոնց հետեւանքը լինում է նոր գործարանների ձագումն: Վարժությունների շնորհիվ գործարանները զորեղանում են, զարգանում են, անգործության դեպքում—նրանք (գործարանները) թուլանում են. այդ բոլորը կարող ե հաղորդվել նոր սերունդներին և, աստիճանաբար ժողովելով ու գործարելով, կարող ե առաջնու նոր տեսակներ...»*)

*) Ի. Մ. Կոնովիչ—Կурс общей зоологии, 1924 г., часть II, № 267.

Վորովինետի յերկրագնումի զանազան մասերում կյանքի պայմանները խիստ տարբերվում են, այդ պատճառով զանազան յերկրների կենդանիներն ու բույսերը, տարբեր պայմանների յենթարկվելով, փոփոխվել յեն, հարմարվելով և դական պայմաններին: Լամարկը պնդում է, վոր այս խնդրում մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, թե կենդանին ամենից շատ վոր գործարանները ե գործածել. փոփօխվում յեկ գարզանում յեն այն գործարանները, վորոնից շատ են գործածվում:

Մրինակ՝ ընձուղտի (չորաֆֆա) յերկար պարանոցը Լամարկի կարծիքով, կազմվել է հետեւալ կերպով. Ընձուղտներն ապրում յեն չոր տեղերում, ուր կան միայն բարձր ծառեր, վորոնց տերևներով կերպարվում են ընձուղտները: Վորովինետի վերջինները ծառերից տերևներ պոկելու համար ստիպված են յեղել միշտ իրանց պարանոցը ձգել, այդ պատճառով նրանց պարանոցը յերկարացնել ե:

Նույնպես՝ ըստ Լամարկի, պետք է վարժություններով բացատրել միքանի թուլունների վոտների մատների միջև առաջացած լողալու գործարանները: Ցանկանալով լավ լողալ, այդ թուլունները հաճախ վործ են ածել իրանց վատները, զրված են մատների միջև գտնված մաշկը, վոր զարգանալով առաջացընել և մատների միջի թաղանթը:

Չարլզ Դարվինը յուր «Տեսակների ծագումը» աշխատության մեջ ցույց տվեց, վոր թեև զրջապատող միջավայրի ազդեցությունը կենդանի որգանիզմների վրա իրոք հաճախ նկատվում է և նույնիսկ կան դեպքեր, յերբ միջավայրի ազդեցությունը արտահայտվում

և զորեղ կերպով, սակայն լամարկը չափազանցացրել ե այդ գործոնի նշանակությունը: Ըստ Դարվինի՝ այդ գործոնն ունի մասնավոր և վոչ ընդհանուր նշանակություն, վորովհետեւ կան շատ գեղքեր, վորոնց անկարելի և բացատրել միջավայրի ազդեցությամբ:

Խնդիրը վերջապես պարզեց Զարլզ Դարվինը: Նրա ամենամեծ ծառայությունը կայանում է հենց նրանում, վոր նա գոտավ և նկարագրեց այն զորեղ գործոնը, վորը մղել և մղում և կենդանի եակներին գեղի առաջադիմություն: Կենդանի եակների զարգացումը Դարվինը վերագրեց այն անոելի կովին, վոր գոյություն ունի հենց այդ եակների միջև: Այդ բացատրությունն ե, վոր կազմում և Դարվինի ուսմունքը: Վերջինը հիմնված է մի շարք փաստերի վրա, վորոնց հետ անհրաժեշտ ե ծանոթանալ Դարվինի ուսմունքը լավ ըմբռնելու համար: Վերոնք են այդ փաստերը:

Ընթերցողն անշուշտ նկատած կը լինի, վոր կենդանիների ձագերը հաճախ տարբերվում են իրանց ծընողներից: Մեկ հավից առաջացած վասիկներ բոլորն ել նման չեն լինում իրանց հորը կամ մորը: Վասիկներից մեկը տարբերվում է ծնողներից փետուրների գույնով, մյուսը կտուցի ձևով, կամ մեծությամբ, յերրորդը լինում է ավելի կովարար, քան նրա ծնողները...

Համարյա անկարելի յե զանել մեկ վասիկ, վոր կատարելապես նման լիներ ծնողներին, Յեթե համեմատենք միենույն ընտանիքի յերեխաները, նույն յերեւյթը կը նատենք: յերբեք չի պատահում, վոր բոլոր յերեխաները կատարելապես նման լինեն մաղերի գույնով, հասակով, դեմքի գծագրությամբ, ընդունակություններով...

Ուրեմն նոր սերունդների անհատները վորոշ չափով տարբերվում են, վորոշ չափով փոփոխված են լինում ծնողների հետ համեմատած:

Այս յերկությունը կոչվում և անհատական փոփոխականություն (սհմանական առաջարկ) և նկատվում է թե ընտանի և թե վայրենի կենդանիների շըրջանում: Սակայն վայրենի կենդանիների շրջանում անհատական փոփոխականությունն ավելի թույլ և արտահայտվում, ուրիշ խոսքով՝ ընտանի կենդանիների ձագերն ավելի շատ են տարբերվում՝ իրանց ծնողներից քան վայրենի կենդանիների ձագերը:

Բույսերը բացառություն չեն կազմում, նրանք ևս յենթարկվում են անհատական փոփոխականության որենքին: Այդ բանն ապացուցանելու համար կարելի յե ցանել վորեւ բույսի սերմեր: Յեթե համեմատենք այդ սերմերից առաջացած բույսերը նրանց ծնողի հետ, հաճախ տարբերություններ կը նկատենք: որինակ՝ մեկ բույսի տերեւները մի փոքր ավելի խոշոր կամ ավելի կանաչ են լինում, մյուսի մաղեկներն ավելի փայլուն են լինում, յերրորդի պառողներն ավելի խոշոր են լինում ևայլուն:

Այդպիսով անհատական փոփոխականությունները բնուրյան ընդհանուր որենք ե, վորին յենթարկվում են բոլոր կենդանիներն ու բույսերը:

Նկատված ե, վոր յերբ մի վորեւ որգանիզմի կյանքի պայմաններն զգալի կերպով փոփոխվում են, այն ժամանակ անհատական փոփոխականությունն ել գորեղ կերպով և արտահայտվում: Որինակ՝ յեթե վերցնենք մի զույգ վայրենի ձագերներ և ազատությունից զրկենք, փակելով վասիկի մեջ, սովորականից

շատ սնունդ տանք, մի խոսքով՝ յեթե խիստ կերպով փոխենք այդ ճագարների կյանքի պայմանները, կը-նկատենք, վոր այդ ճագարների ճագերն ավելի շատ են տարբերվում իրանց ծնողներից, քան վայրենի ճա-գարների ճագերը:

Ամենահին ժամանակներից սկսած մարդիկ ոգ-տվել են որդանիզմների անհատական փոփոխականության ընդունակությունից: Ահա թե ինչպես:

Դեռ միքանի հաղար տարի սրանից տոռաջ մարդ-կանց աջողքել և ընտանեցնել միքանի տեսակ վայ-րենի կենդանիներ, վորոնց կյանքի պայմանները խիստ փոփոխվել են ընտանեցնելու պատճառով: Իսկ վերև մենք տեսանք, վոր որդանիզմների կյանքի պայման-ների խիստ փոփոխվելու դեպքում, իրանք կենդանի-ներն ել սկսում են զգալի կերպով փոփոխվել:

Ուրիշ խոսքով՝ վայրենի կենդանիների անհատա-կան փոփոխականությունն սկսել և զորեղ կերպով արտահայտվել այն ժամանակ, յերբ նրանք դարձած են լինում ընտանի կենդանիներ:

Հավանական ե, վոր մարդիկ սկզբում ուշադրու-թյուն չեյին դարձնում այդ փոփոխությունների վրա, բայց հետո նրանք անգիտակցարար սկսեցին ոգտվել դրանցից: Յերբ մի վարկե կենդանուց առաջանում եր նոր սերունդ, բաղկացած իրարից փոքրիշատե տար-բերվող անհատներից, մարդիկ վերջիններից ընտրում եյին և պահպանում միայն այնպիսիներին, վորոնք վորեն ոգտակար առանձնահատկություն ունեցին (մար-դու տեսակետից): Մի մատակից առաջացած քուսակ-ների վրա միատեսակ ուշադրություն չեյին դարձնում:

Ամարդիկ նրանցից ընտրում եյին ամենատաժեղներին կամ ամենագեղեցիկներին, նրանց առանձին խնամքով մեծա-ցնում եյին յեվ ձգտում եյին նրանցից նոր սերունդներ սահման:

Այդ պրոցեսով կատարվում եր դարերի ընթաց-քում, ամեն մի սերունդից ընտրում եյին ամենալավ անհատներին, վորոնց բազմացնում եյին:

Յերիկտոնը, վոր ապրում եր Տրոյական պատե-րազմից միքանի տասնյակ տարիներ առաջ, մեծ ու-շաղբություն եր դարձնում այդ տեսակ ընտրության վրա. Նա շատ մատակներ ուներ, «վորոնք խելացի կրա, նա շատ մատակներ ուներ, «վորոնք խելացի կրա, նա շատ մատակներ ուներ, «վորոնք խելացի կրա, նա շատ մատակներ ուներ, «վորոնք խելացի կրա»: Վերաբերյալ Արքան արշավանքների ժամանակ մատուցում էր ամենալավներին կենդանիներին և ուղարկում եր նրանց Մակեդոնիա՝ այդտեղի կենդա-նիների տեսակներն ազնվացնելու համար:

Վերաբերյալ Արքան արշավանքների ժամանակ մատուցում էր ամենալավներին կենդանիներին և ուղարկում եր նրանց Մակեդոնիա՝ այդտեղի կենդա-նիների տեսակներն ազնվացնելու համար:

Կենդանիների և բույսերի ամենալավ անհատնե-րի ընտրությունը կոչվում և արվեստական ընտրություն (selection artificielle—ԱՌԿԵԿՍՏՎԵՆԻՅ ուժամբ):

Ամենահին ժամանակներից սկսած տասնյակ դա-րերի ընթացքում արվեստական ընտրությունը մեծ փոփոխություն և առաջ բերել ընտանի կենդանիներն արվեստական ընտրության շնորհիվ վոչ միայն կա-տարելագործվել և առաջադիմել են*), այլև նրանցից գոյացել են բոլորովին նոր ցեղեր:

*) Մարդու ոգտիկ զվարճության տեսակետից ինարկե-

Իսկ ներկա ժամանակներում արտասահմանի առաջադարձը այգեգործները կատարյալ հրաշքներ են գործում արվեստական ընտրության շնորհիվ. համարյա ամիս չի անցնում, վոր յերեան չգան բույսերի և կենդանիների նորանոր ցեղեր:

«Արվեստական ընտրության ոգնությամբ, ասում են Յուլվատը, անասնապահը կարող է վոչ միայն թեթև կերպով փոփոխել յուր հոտը, այլ յեվ վերասեղծել նրան»:

Այժմ արվեստական ընտրությունն այլևս անզիտակցարար չի կատարվում, ինչպես առաջ. այժմյան անասնապահն առաջուց վորոշում են յուր ցանկացած տիպարը («իդեալը»), վոր չեն ունենում նրա կենդանիները, բայց ցանկանում են, վոր ունենան, հետո աշխատում են արվեստական ընտրությանն այնպիսի ուղղություն տալ, վոր յուր կենդանիները փոփոխվելով, ստանան հենց նույն տիպարը:

Անգլիացիք, ցանկանալով հասարակ ձիերից առաջացնել նոր-արագվագ տեսակ ձիերի սերունդներ, արվեստական ընտրությամբ հասել են այդ նպատակին, այժմ նրանք ունեն այնպիսի արագվագ ձիեր (ԱՀՐԱԿԱԿԱՆ ՍԿՈԿՈՎՅԵ), վորոնց նմանը չկա վողջ աշխարհում:

Ուրիշ անասնապահները, նույն հասարակ ձիերից ընտրելով ամենախոռորներին յեվ ամենաուժեղներին ու նրանց բազմացնելով, յերկար տարիների ընթացքում բազմաթիվ սերունդների միջոցով վերջապես առաջացրել են ձիերի նոր տեսակ. վերջինները զարմացնում են մարդուն իրանց մեծ հասակով և ահագինույժով:

Ուրեմն նայելով թե արվեստական ընտրությանը ինչ ուղղություն ենք տալիս, միենույն սկզբնական տեսակետից կարող ենք առաջացնել այս կամ այն ցեղը:

Դրանով երացաւրում, վոր վայրենի աղավնուց առաջացել են տարբեր ցեղեր՝ «տուրմանը», «տաճկական աղավնին», «գողգողանը» ևայլն. Աղավնիներ սիրողներից վոմանք իրանց աղավնիների սերունդից ընտրելիս են յեղել միայն ամենափոքրիկ գլուխ ունեցողներին, զրանցից գոյացել են այժման «կարճերես տուրմանը», մյուսներն ընդհակառակը՝ ընտրելիս են յեղել ամենայերկար կտուց ունեցողներին, վորոնցից առաջացել են «տաճկական աղավնուց ցեղը ևայլն:

Արվեստական ընտրության շնորհիվ խիստ առաջադիմել են նաև մեր մշակված բույսերը:

Ահա թե ինչ են ասում այդ մասին Զ. Դարվինը. «համեմատելով բույսերի՝ քսան կամ յերեսուն տարի առաջ պատրաստած նկարները այժմյան ծաղիկների հետ, բազմաթիվ բուսերի վերաբերմամբ նկատում ենք դարմանալի կատարելագործություն»;*)

Այդպես ուրեմն արվեստական ընտրությունը մեծ գեր ե կատարել ընտանի կենդանիների և բույսերի այժմյան բազմաթիվ ցեղերի ծագման խնդրում: Պետք է ավելացնել, վոր բացի արվեստական ընտրությունից, մի ուրիշ զորեղ ֆակտոր ել նշանավոր գեր ե կատարել նոր ցեղերի առաջանալու խնդրում: Այդ գործոնը ժառանգականությունն ե, վոր, ինչպես վերև նշ-

*) Происхождение видов, № 26.

կատեցինք, կայանում են նրանում, վոր նոր սերունդները ձգտում են պահպանել իրանց ծնողների կազմվածքի զլիսավոր գծերը:

Հանրածանոթ իրողություն և, վոր զանազան ընտանիքներում հաճախ ժառանգաբար անցնում են դեմքի գծերը, մազերի և մաշկի գույնը, բնավորությունը, հիվանդությունները... Հաճախ միքանի սերունդներ շարունակ ստանում են իրանց նախահոր վորեւ այլաղնակ առանձնահատկությունը:

Հայտնի են դեպքեր, յերբ ծնողներից մեկն ունեցել են հինգ մատի փոխարեն վեց մատը և այդ առանձնահատկությունը շարունակ ժառանգաբար անցել են նրա հետնորդներին: Սպահական մի ընտանիքում մոտ քառասուն հոգի ունեցին վեց մատը:

Եղարդ կամբերտ անունով մի մարդ հրեշտակին կերպարանք ուներ. նրա մարմնի վերնամաշկը սաստիկ զարգանալով ծածկվել էր յերկար թեփաձև հավելվածքներով; Լամբերտի վորդիքն ու թոռները նույն այլանտակ կերպարանքն ունեցին:

Հաճախ սերնդից սերունդ ժառանգաբար անցնում են թոքերի, յերիկամունքների, լյարդի, ուղեղի հիվանդությունները: Մանավանդ հեշտ ժառանգվում են նյարդային սիստեմի անկանոնությունները և նրանց հետ միասին հոգեկան հիվանդությունները: Պիտք են կատել, վոր առանց ժառանգականության արվեստական ընտրությունը չեր կարող առաջացնել վոչ մի՛նոր ցեղ:

Միտքս պարզելու համար մի որինակ բերեմ. Ցենթագրենք, վոր մի վորեւ անասնապահ յուր կուլից միքանի հորթեր և ստացել, վորոնցից, միքա-

նիսը՝ և իրողոր են, և զեղեցիկ: Հետո յենթագրենք, վոր նա լավերին պահում ե, իսկ մյուսները վոչնչցանում ե. լավերը մեծանալով նոր սերունդներ են առաջացնում: Յեթե ժառանգականություն չլիներ, նոր սերունդները չեյին կարողանալ պահպանել ծնողների ընտիր հատկությունները:

Այսպիսով առանց ժառանգականության որպանիզմները շարունակ կը փոփոխվելին, բայց ոգտակար առանձնահատկությունները չեյին հաստատվիլ հաջորդ սերունդների մեջ. Ուրեմն հաստատ ոգտակար ցեղեր չեյին առաջանալ: Վերցնենք անզիլիական արագավազ ձիերին. յեթե ժառանգականություն չլիներ, այդ ձիերի մատակներից առաջացած անհատները կարող եյին նըման լինել վոչ թե իրանց արագավազ ծնողներին, այլ մի վորեւ անպետք ցեղի ձիերին:

Ուրեմն ընտանի կենդանիներից և բույսերից նոր ցեղերի ձագման պատկերն այդ ե:

Անհատական փոփոխականության որենի համաձայն՝ նոր սերունդների անհատները փոքր իշտե զանգանվում են իրարից և ծնողներից: Ոգակելով այդ հանգամանքից, անաստապահն լիներում ե այդ անհատներից ամենալավերին, նրանց մեծացնում ե ու բազմացնում, իսկ նրանցից առաջացած նոր սերունդները ժառանգականության սկզբունքի համաձայն, պահպանում են իրանց ծնողների ընտիր հատկությունները:

Ժառանգականությունը և փոփոխականությունն իրար հակառակ սկզբունքներ են՝ առաջինը ձգտում ե պահպանել ծնողների տիպարը, իսկ յերկրորդը ձգտում ե հեռացնել այդ տիպարից նոր սերունդները: Ժառանգականությունը պահպանողական ֆակտոր ե, իսկ փո-

Փոխականության շնորհիվ գոյանում և առաջադիմությունը:

Այդ յերկու սկզբունքները միասին գործելով, ամեն մի որդանիզմի մեջ չափավորում են իրար, վորովհետեւ, յեթե միայն ժառանգականությունը լիներ առանց փոփոխականության, այն ժամանակ ընտանի կերպանիները և բույսերը կը մնային ընդմիշտ անփոփոխ, անշարժ, միևնույն տիպերով սահմանափակված. իսկ յեթե լիներ միայն փոփոխականություն առանց ժառանգականության, որդանիզմները միայն անընդհատ կը փոփոխվեյին, առանց հաստատ ցեղեր արտադրելու:

I V

ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՈՒՎ

Մայլթուսի ուսմունքը ազգարնակության աճման վերաբերյալ Դարվինը ցույց տվեց, վոր աճման նույն որենքին յենթարկվում են նաև բույսերը և կենդանիները: Գոյության կոիվ: Գոյության կոիվը զորեղ կերպով արտահայտվում և նման որդանիզմների շրջանում: Գոյության կովի բարդ որենակներ:

Պարզ ուրեմն վոր յեթե ընտանի կենդանիները և բույսերն անընդհատ կատարելագործվելիս են յեղել և նրանցից գոյացել են բազմաթիվ նոր և ավելի ընտիր ցեղեր, այդ կատարվել ե արվեստական ընտրության և ժառանգականության շնորհիվ: Յուրաքանչյուր սերնդից ընտրելով ամենալավ անհատները և նրանց միայն բազմացնելով, մարդս պատճառ և դարձել յուր կենդանիների և բույսերի զարգացմանը:

Սակայն մեզ հայտնի յե, վոր զարգացումը և առնասարակ եվոլյուցիան բնության ընդհանուր որենք եղարգանում և առաջադիմում են վոչ միայն ընտանի կենդանիներն ու բույսերը, այլև կենդանիները: Հասկանալի բան ե, վոր վայրենի բույսերի և կենդանինե-

ԵՒ շքանում արվեստական ընտրությունն անկարելի յե իրագործել:

Ապա ի՞նչպես են առաջանում բնության մեջ նոր կատարելագործված տեսակները, քանի վոր չկա մեկը, վոր ընտրեր լավերը, իսկ վատերը վոչնչացներ:

Ահա այն հարցը, վոր ամենից շատ եր հետաքրքրում Զարլզ Դարվինին: Մի հանգամանք ողնոյն Զ. Դարվինին լուսաբանելու կենսաբանության ամենահիմնական խնդիրը: Պատահմամբ նրա ձեռքն ընկավ հայտնի թովմաս Մայլթուսի քաղաքանական գրվածքը, վորի նյութն եր ազգաբնակության աճումը: Մայլթուսի աշխատությունը մեծ ազդեցություն ունեցավ Դարվինի աշխարհայեցողության վրա:

Հստ Մայլթուսի, մարդկային ցեղերը ձգում են չափանց արտգ կերպով բազմանալու: Մինչեռ մարդկանց բազմանալը խիստ արագ է կատարվում, ապրուստի մեջոցները (որինակ՝ սնունդը) ավելանում են շատ գանգաղ կերպով, այնպիս վոր կենսական միջոցները—տեղը, սնունդը, լույսը, ոդը—բավարարություն չեն տալիս նոր առաջացած մարդկային բազմաթիվ սերունդներին:

Դրա հետևանքն այն է լինում, վոր նոր առաջացած անհատների խոշոր մասը վոչնչանում, անհետանում և սնունդ կամ լույս չկենալու պատճառով:

Դարվինը՝ ընդունելով Մայլթուսի ուսմունքը, ընդհանրացրեց վերջինը, ցույց տալով, վոր աճման սույն որենքին յենթակա են, բայց մարդկանցից, նաև բոլոր կենդանիներն ու բույսերը:

Մարդկանց նման՝ կենդանիներն ու բույսերն ել ձգում են չափանց արագ կերպով բազմանալու: Մի

բրաձկան (տրեսկա) ձկնկիթը պարունակում է յերբեմն տասնյակ միլիոնավոր ձվիկներ: Յեթե յուրաքանչյուրից առաջանար ձուկը և զարգանար, այն ժամանակ ծովը կըդառնար բրաձկների կույտ:

Նշանավոր են նաև հետեւյալ գեղքերը: Յեվոպացիք, գնալով մեմբրիկա, իրանց հետ տարան Յեվոպացիքի բույսերից միքանիսը, վորոնք, անխնամ, մընալով վայրենացան: Այդ բույսերը նոր յերկրում բազմացան այնքան արագ, վոր ընդամենը տասը-քսան տարվա ընթացքում բռնեցին հարյուրավոր մղոն տարծություն:

Դիտական ժյուրինի դիտողությունների համաձայն՝ վողուկապայլաների (erustacés) միքանի տեսակներն այնքան արագ են բազմանում, վոր միայն մեկ եզր մի տարվա ընթացքում կարաղ է առաջացնել մինչեւ չորս միլիլիարդ ձագուկներ:

Պարամետր կոչված մանրադիտական կենդանու մեկաննատն ընդամենը խանութիւն բնրացնում տառաջցնում է 1,000,000-ից ավելի անհատներ*):

Յեվոպացիք իրանց հետ տարան միքանի հատճագարներ, վորոնք կարճ ժամանակում վայրենանալով մասնաւ բազմացան, վոր յերկրի համար իսկական աղետ գարձան:

Հաշվականոր բուսաբան Կ. Տեմիրյազեի հաշվելով՝ մի հատ նարնիր (օւյանչկ, tarafagum) կոչված բույս հինգ տարվա ընթացքում արտադրում է մի սեռունդ՝ բազկացած 10,000,000,000 անհատներից:

*) Հ. Մ. Կնիկովիչ—Կурс общей зоологии, ч. II, 1924 г. № 142:

Դարվինը ցույց տվեց, վոր նույնիսկ քիչ ձագեր ծնող կենդանիները—օրինակ՝ փղերը—համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կը ճանաչելին ամրող յերշ կրակունան իրանց սերունդներով, յեթե վերջիններն իրանց զարգացման ընթացքում չհանդիպելին բազմաթիվ խոչընդոտների: Նույնը կարելի յե առել նաև բռնյակը մասին:

Այդպիսով թե կենդանիները և թե բույսերը սովորաբար արտադրում են անթիվ սերունդներ, վորոնց միայն փոքրագույն մասն ե լիակատար զարգացմանը հասնում, իսկ մեծագույն մասը վոչչանում ե՝ տեղի և սննդի պակասության պատճառով.

Մեծ միամտություն կը իմաներ կարծեւ, վոր վոչչացող անհատները կամովին և հեշտությամբ են զիջանում կյանքի ասպարեզն իրանց բաղզավոր ընկերակիցներին, կամովին զիջանելու մասին խոսք անգամ չի կարող լինել: Ամեն մի եակ լույս աշխարհ գալով, զործ ե դնում ամեն ջանք իր գոյությունն ապահովելու համար:

Բայց վորովհետեւ ապրել ցանկացողներ անթիվ են, իսկ սնունդ, տեղ, լույս քիչ են, ուստի նրանց մեջ սարսափելի կոիվ ե առաջ գալիս, կոիվ անհատական գոյությունը պահպանելու համար: Ամեն մի անհատագույն պահպանելու համար, վայրէ բռնի նրանց տեղը և ապահովի յուր կյանքը:

Դարվինն այս յերկութն անվանեց գոյության կոիվ (борьба за существование): Գոյության կոիվն իշխում ե ամրող բնության մեջ, ինչպես վերև աշ-

խատեցինք ցույց տալ գոյության կոիվը կենդանիների յեկ բարյաների չափազանց արագ բազմանալու անխուսափելի նետելվածքն ե:

«Յուրաքանչյուր որգանիզմ, ասում ե Դարվինը, վոր յուր կյանքում արտադրում ե շատ ձվեր, վորոց հասակում կամ տարվա վորոշ յեղանակներին պետք ե յենթարկվի վոչչացման, այլապես յերկրաչափական առաջատափությամբ (геометրիական պրոցես) նրա հետեանքների թիվը կավելանա, վոր աշխարհիս յերեսին վոչ մի յերկիր չի կարողանալ նրանց կերակրեւ ուրեմն՝ վորովհետեւ ծնված բոլոր անհատները չեն կարող կենդանի մնալ, այդ պատճառով գոյության կոիվ և առաջանում կամ միենույն տեսակի կամ ուրիշ տեսակի անհատների հետ և կամ կյանքի Փիզիքական պայմանների հետ: Այս Մայլթուսի ուսմունքն ե, վոր լուրովին ճիշտ ե բուսական և կենդանական թագավորությունների վերաբերմամբ: Բնության մեջ գոյությունին չունի վոչ աննդի արվեստական բազմապատճեն կումն, վոչ ել գիտակցական զգույշ ժումկալությունն ամուսնությունից»:*)

Հաճախ բնությունը մարդկանց այնքան խաղաղ է լուս ե թվում, վոր կարծես թե մեռած ե, այդ պատճառով ել մենք սխալ գաղափար ենք կազմում, կարծեկով թե բնության միջ կատարյալ խաղաղություն և անհոգություն ե տիրում: Վարքան հեռու ենք իրականությունից, հենց այն ըոպեյին, յերբ բնությունը մեզ հիացնում ե յուր անդորրությամբ, անթիվ արարածներ անխնա մրցում ե կովում են իրա-

*) Ч. Дарвин—Происхождение видов, № 52.

հետ՝ տեղի, սննդի, ողի, լույսի և ջերմության համար։ «Մեզ թվում ե, ասում ե Դարվինը, թե բնության մեջ միայն պարզություն և ցնծություն ե տիրում, կարծես թե յուրաքանչյուր կենդանի եակի բնությունը առատ սնունդ ե տալիս։ Մենք չենք նկատում կամ մոռանում ենք, վոր մեր շուրջն անհոգ յերգող թռչուններն ըստ մեծի մասին կերակրվում են միջատներով և սերմերով, ուրեմն անդադար վաշնչացնում են ուրիշների կյանքը. մոռանում ենք, թե ինչպիսի մեծ քանակությամբ գաղանները և թռչունները վոչնչացնում են այդ յերգիշներին կամ զրանց ձվերն ու ձագուկները»...*)

Գոյության կոիվը մանավանդ սոսկալի և լինուժ միենույն տեսակի պատկանող անհատների միջև. առյուծները կովում են իրար հետ սննդի համար, խոտակերների միջև ընդհարում ե առաջանում խոտատեղերի պատճառով։

«Հացթուխը կյանքի կովում մսավաճառից չի վախենում, բայց նրա տունը հաճախ քանդում և մի այլ հացթուխի մրցում... Արհեստավորին զինվորը չի սպանում, այլ նրան սպանում են ուրիշ արհեստավորներ, վորոնը իրանց ծառայություններն առաջարկում են ավելի ցածր գնով և ձգում են ամեն մեկ ազատ տեղ բռնիւթեւ։

«Այդ հիման վրա խոտակերների ամենամեծ թըշնամիները գիշատիշները չեն, այլ մյուս խոտակերները» (Գ. Սլեն):

Վոր կենդանիները կարող են կովել իրար հետ—այդ

*) Կ. Դարվին—Происхождение видов, № 51.

հասկանալի ե։ Բայց ինչպես պետք ե հասկանալ գոյության կոիվը բույսերի վերաբերմամբ։ Ի՞նչպիս կարող են մրցել կովել իրար հետ բույսերը, քանի վոր նրանք շարժվել անդամ չեն կարող։ Վորքան ել վոր տարրության կոիվը կատարվում ենան բույսերի շրջանում։

Այս բանում հեշտ կը համոզվենք, յեթե զանազան բույսերի սերմեր ցանենք մի կարոր հողի մեջ։ Ազգում տարրեր բույսերի բողբոջներն ունենում են մոտավորապես միենույն տեսքը, բայց հետո պատկերը հիմնովին փոխվում է։ Ուժեղ, շուտ զարգացող բույսերը կարծ ժամանակից հետո սաստիկ բարձրանալով, վորքան կարող են, տարածում են իրանց ճյուղերը և տերեները, մինչդեռ նրանց հարեան փոքրիկ, քնքույշ բույսերը, ընկնելով զորեղ բույսերի սավերի տակ և զրկվելով արեգակի ճառագայթներից, այլևս չեն կարողանում աճել, վորովհետեւ բույսերի զարգացման համար լույսն անհրաժեշտ ե։

Այդ գեռ բավական չե. բույսերի մրցումը տեղի յեւ ունենում վոչ միայն հողից բարձր, այլև հողի տակը՝ արմատների միջև, ամուր, շուտ զարգացող արմատները տարածվելով հողի մեջ, ծծում են չուրը և անդաբար նյութերը։ Այդպիսով նվազ բույսերը զըրկվում են սննդից ու լույսից և վոչնչանում են։

Պարզ ե վոր գոյության կոիվը եռթյամբ նույնն ե՝ թե մարդկանց և թե բույսերի ու կենդանիների շրջանում։

Հաճախ գոյության կոիվն արտահայտվում է զարմանալի բարդ կերպով և ունենում ե անսպասելի հետեանքներ։ Ահա թե ինչ ե պատճում Դարվինն այդ

ժամանութեաւ Յուր վորձերի վրա հենվելով՝ Դարվինը պընդում է, վոր առվույս կոչված բույսի («սիրի-սիրի», — քլեւեր) բեղմնավորության, ուրեմն նաև բազմանալու համար անհրաժեշտ են իշամեղուները (ՌՄԵԽ), վորոնք առվույտի ծաղկափոշին անգիտակցաբար տեղափոխում են մեկ ծաղկից մյուսների վրա։ Նշանակում է, վոր յեթե մի վորեն յերկրում իշամեղուները բացակայում են, այսուեղ առվույտն անկարող կը լինի սերմեր արտադրել և բազմանալ։

Մյուս կողմից ել իշամեղուների քանակությունը կախված է լինում դաշտային մկների քանակությունից, վորոնք մեծ քանակությամբ իշամեղուներ են ուտում, վոչնչացնում։ Սակայն դաշտային մկներն ել իրանց թշնամիներն ունեն։ Խոսքս կատուների մասին է, վորոնք սիրում են դաշտամկներով կերակրվել։

Դրանով և բացատրվում, վոր այն գյուղերի շըրջակայքում, վորտեղ շատ կատուներ կան, դաշտային մկներ քիչ են լինում, ուստի իշամեղուները սաստիկ բազմանալով և ոժանդակելով առվույտի բեղմնավորությանը, պատճառ են դառնում նրա բազմանալուն։

Վերկ առաջ բերած փաստերից Դարվինն այն յեզրակացությունն ե հետեցնում, վոր մի վորեն յերկրում առվույտ բույսի քանակությունը կախված է կատուների թվից։ Վորպիսի տարրորինակ յերեսույթը, Ո՞վ կարող եր կարծել թի այնքան տարրեր որգանիզմներ, վորպիսիք են իշամեղուները, կատուները, առվույտը և դաշտային մկներն այն աստիճան սերուկերպով կապված են իրար հետ, վոր մեկի բարորությունը հիմնվում է մյուսի անբաղդության վրա։

Դարվինը պնդում է, վոր այդպիսի բարդ հարա-

բերությունները սովորական են բույսերի և կենդանիների շրջանում։ յուրաքանչյուր յերկրում ապրող կենդանիներն ու բույսերը սեր կախումն ունեն իրարից։ Աչա մեկ ուրիշ որինակ, վոր նույն միտքն է ապացուցանում։

Կան միքանի կղզիներ, վորոնց բնակիչները զըլիսավագես կերակրվում են արմավենիների պտուղներով, իսկ արմավենիների վիճակը կախված է միտեսակ միջատից, վոր տեղափոխելով նրանց ծաղկափոշին մեկ ծաղկից մյուսը, ոժանդակում է արմավենիների բեղմնավորությանը։ Ուրեմն արմավենիների պտուղների լինել թե չլինելը կախված է այդ չնչին միջատից։ Մյուս կողմից այդ ոգտավետ միջատների լինել թե չլինելը կախված է միջատակեր թռչուններից։ յերբ միջատակեր թռչունները շատ են բազմանում, ոգտավետ միջատների քանակությունն զգալի կերպով պակասում է, իսկ այդ հանգամանքը վատ և ազդում արմավենիների պտղաբերության վրա։

Սակայն որգանիզմների փոխհարաբերությունները սրանով չեն վերջանում, յերբեմն միջատակեր թըլաչունները մեծ քանակությամբ վոչնչանում են՝ իրանց արյունաբրու թշնամիներին—գիշատիչ թռչուններին զոհ գնալով։ Բայց չկա մի արարած, վոր թշնամի չունենա։ գիշատիչ թռչուններն ել իրանց թշնամիքունեն։ հաճախ այդ թռչունների փետուրների միջև տարածվում են անթիվ մանր պարագիտներ, վորոնք մեծ հարված են տալիս գիշատիչներին։ Սակայն բանն այն է, վոր պարագիտներն ել իրանց պատիժն են կրում։ նրանց անինա վոչնչացնում են պարագիտային սունկերը...*)

*) Էրնեստ Գեկկել—Տրանսֆորմիզմ և Դարվինիզմ, եջ 146.

Այդ մի իսկական շղթա ե, վոր անկառկած այսա-
տեղ չի վերջանում. յերկի սունկերի լինել թե չլինե-
լըն ել կախված ե մեկ ուրիշ որգանիզմից կամ բնական
ուժից, վոր գեռ պարզված չե:

Յենթաղբենք, թե մեկ տարի, բարեպատեհ հան-
գամանքների շնորհիվ, պարագիտային սունկերի քա-
նակությունը սաստիկ շատացել ե, այդ ըստ յերեսույ-
թին չնշին հանգամանքը կունենա անթիվ մեծ հետե-
վանքներ: Պարագիտային սունկերը կը վոչնչացնեն դի-
շատիչ թուշունների թշնամիներին—փոքրիկ պարագիտ-
ներին, որեմն զիշատիչ թուշուններ շատ կը բազմանան,
մեծ թվով միջատակեր թուշունները կը վոչնչացնեն և կո-
ժանդակեն ոգտավետ միջատների բազմանալուն. ար-
մավենիները վերջինների շնորհիվ կը բեղմնավորվեն և
տուատ բերք կը տան, վերջապես կղզիների բնակեչները
առատ սնունդ ունենալով, ավելի կը բազմանանան:

Այդպիսով այս գեղգում մարդկանց բարորու-
թյունը կախված ե՝ պարագիտային սունկերի քանա-
կությունից:

Ուրեմն՝ թեև մի կողմից կենդանիներն ու բույնե-
րը սաստիկ արագ են, բազմանում, մըուս կողմից ել
գոյության կափվը վոչնչացնում ե անթիվ անհատներ
(կրնատում ե երանց), կարելի ե տսել, վոր գոյության
կողի շնորհիվ յերկրագնատի վրա ապրող կենդանի ե-
տակների ընդհանուր թիվը մնում է համարյա անփո-
փոխ:

V

ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Բնական ընտրությունը նույն գերն է
կատարում ընության մեջ, ինչ վոր արվես-
տական ընտրությունն ընտանի որգանիզմ-
ների շրջանում: Բնական ընտրությունը
մղել ե և մղում ե կենդանի եակներին գե-
պի զարգացում: Միթքանի բացառիկ գեպ-
քեր: Բնական և արվեստական ընտրու-
թյունների նմանությունն ու տարրերու-
թյունը: Բնական ընտրություն գոյության
կովի շնորհիվ—ահա Դարվինի ուսմունքը:

Այժմ տեսնենք, թե ինչ հետեւանք և ունենում գո-
յության կոիվը:

Մենք իմացանք, վոր կենդանի եակները գլխա-
վորապես սննդի, տեղի և լույսի համար են մրցում ի-
րար ետ լարված ույժերով: Հասկանալի յե, վոր այդ
դրության մեջ մրցողների նույնիսկ փոքրիկ ոգտավետ
առանձնահատկությունները կարող են վճռական գեր
կատարել գոյության կռվում, գերակշռություն տալով
մեկի կամ մյուսի ույժերին: Մյուս կողմից մեզ հայտ-
նի յե, վոր յուրաքանչյուր տեսակի պատկանող ան-
հատները շատ կամ քիչ զանազանվում են իրարից ի-
րանց առանձնահատկություններով:

Վյդ բոլորն ի նկատի ունենալով դժվար չե գուշակել գոյության կովի հետևանքները: Չե վոր կոփը կատարվում ե բազմաթիվ պնհատների միջև, վորոնց թվում կան ուժեղներ և նվազներ, ձարպիկներ, խորամանկներ և միամիտներ...

Գայլերի ձագուկները միևնույն ույժը, ձարպիկությունը կամ միևնույն խեթը չեն ունենում, ուստի գոյության կոփը նրանց համար միևնույն հետևանքը չի ունենում:

Կյանքի կովում հաղրող հանդիսանում են միայն նրանք, վորոնի իրանց ընկերներից ավելի ուժեղ կամ ավելի նարպիկ յեվ կամ առհասարակ նրանք, վորոնի վորյեվ առավելություն ունեն իրանց ընկերների համեմատությամբ:

«Յերբ մի կտոր հողի վրա յերեան են գալիս հազարավոր բույսեր, վորոնցից միայն միքանիսը կարող են իրանց գոյությունը պահպանել (սննդի և տեղի պատճառով), նրանց մեջ կոփ և սկսվում, իսկ կոփից հետո կենդանի յեն մնում միայն ամենաուժեղները» (Գ. Ալեքս.):

Այդ արդեն ամենօրուժեղ, ամենաճարպիկ, ամենակատարյալ անհատների իսկական ընտրություն ե և շատ նման ե արվեստական ընտրության: Զանազանությունը կայանում ե նրանում, վոր արվեստական ընտրությունը կատարվում ե գիտակցութեն, ընտանիքույսերի և կենդանիների միջև մարդու ձեռքով, իսկ գայրենի կենդանիներից և բույսերից ամենալավ անհատներ ընտրողը հենց ինքը բնությունն ե, կյանքի կոփի միջոցով:

Այդ հիման վրա վերջին տեսակ ընտրությունը

Դարվինն անվանեց բնական ընտրություն (sélection naturelle, естественный подбор):

Ցույց տալու համար, թե բնական ընտրությունն ինչպես ե կատարվում, Դարվինը հետեւյալ որինակն ե առաջ բերում:

«Յերեակայենք մի գայլ վոր կերպակում և զանազան կենդանիներով, մեկին հաղթում ե խորամանկությամբ, մյուսին ուժով, յերրորդին արագությամբ. յերեակայենք, վոր նրա զոհերից ամենաարագավազը, դիցուք յեղջերուն, բազմացել ե, իսկ նրա մյուս զոհերի թիվը պակասել ե... Յես հիմք չեմ գրանում կասկածելու, վոր այդ պայմաններում ամենաարագ վազող և ճարպիկ գայլերն ավելի հնարավորություն կունենան իրանց կյանքը պահպանելու և բազմանալու...»*):

«Կարելի յե ասելու վոր բնական ընտրությունն ամեն որ, ամեն ժամ ամբողջ աշխարհում հետազոտում ե (որգանիզմների) ամեն մեկ առանձնահատկություն, նույնիսկ ամենաչնչին, վոչնչացնելով վատերը և պահպանելով ու զորեցնելով լավերը, աննկատելի կերպով աշխատելով կատարելագործել որգանիզմները նըրանց կյանքի որգանական և անորգանական պայմանների նկատմամբ...»:

«Յեթե մարդ կարող ե նշանավոր հետեւանքների համել, իսկապես հասել ել ե, ծնողների միթողիկ և անդիտակցական ընտրությամբ, ապա վարպիսի, հետեւավանքների կարող ե հասնել ընությունը: Մարդ կարող ե ներգործել միայն արտաքին, նկատելի առանձ-

*) Происхождение видов, бд 72.

նահատկությունների վրա: Բնությունը գործ չունի արտաքինի հետ, բացի այն դեպքից, յերբ վերջինը նույնպես պարունակում է վորեա ոգտավետ հատկություն որգանիզմի համար: Բնությունը կարող է ներգործել յուրաքանչյուր ներքին գործարանի վրա... Մարդ ընտրում է միայն այն (հատկությունը), վորոգտավետ և իրան (մարդու) համար, իսկ բնությունը ընտրում է միայն այն, ինչ վոր ոգտավետ և նրա պաշտպանած որգանիզմի համար...*):

Բնական ընտրության պատճառով կենդանիների և բույսերի սերունդներից վոչչանում են ամենաթույլերը կամ ամենաանընդունակները, իսկ ուժեղները և ընդունակները պահպանում են իրանց գոյությունը և լիակատար զարգացման հասնելով, տալիս են նոր սերունդներ, վորոնք ժառանգում են իրանց ծնողների ոգտավետ հատկությունները:

Ցեթե ի նկատի ունենանք այն հանդամանքը, վոր բնական ընտրությունն այդ ձևով ներգործել և կենդանիների և բույսերի վրա բազմաթիվ դարերի ընթացքում, միշտ պահպանել և ուժեղներին և վոչչացրել թույլերին, կըգանք այն յեղբակացության, վոր բնական ընտրությունն ահազին ազդեցություն և ունեցել կենդանի եակների զարգացման վրա:

Բնական բնուրույնն այն նակայական գործոնն է, վոր անբնդիատ մղել և յեվ մղում և կենդանիներին ու բույսերին դեպի առաջադիմուրյուն յեվ զարգացում:

*) Չարլզ Դարվին--Происхождение видов, 42
67-68.

Ավելորդ չի լինի նկատել, վոր լինում են նաև բացառիկ դեպքեր, յերբ բնական ընտրությունը մըղում և կենդանի որգանիզմներին դեպի հետագիմություն. իսկ այդ լինում և այն դեպքում, յերբ հետագիմելն ավելի ոգտավետ և որգանիզմի համար: Մի ուրինակով պարզենք այդ միտաքը.

Ընթերցողն անշուշտ գիտե, վոր հաճախ մարսացական խողովակում սպրում են զանազան պարագիտային վորդեր: Ահա այդ պարագիտները ժամանակի ընթացքում սաստիկ հետագիմել են, նրանց նախահայրերը պարագիտային կյանք չեն վարել և ունեցել են անհամեմատ ավելի բարդ կազմվածք, քան նրանց այժմյան սերունդները:

Այս հետագիմությունը (regressus) կատարվել է հետեւյալ կերպով. այն որից, յերբ վերոհիշյալ վորգերի սերունդները հարմարվել են կյանքի այդ տեսավելանինական պայմաններին և սկսել են դանազան կենդանիների մարսովական գործարաններում ապրել, այդ որից միքանի գործարաններ նրանց համար բոլորովին ավելորդ կամ նույնիսկ վնասակար են դարձել: Վերցնենք որինակ աչքը, ստամոքսում ապրող պարագիտի համար աչքերը վոչ միայն ավելորդ են, այլև վընասակար, վորովհետու այդ պայմաններում աչքերը հաճախ կարող են յենթարկվել զանազան հիվանդությունների:

Դրանով և բացատրվում, վոր պարագիտները ժամանակի ընթացքում կորցրել են իրանց աչքերը, շարժվելու գործարանները, իսկ միքանիսը զրկվել են նույնիսկ մարսովական խողովակից: Ուրեմն այս դեպքում բնական ընտրությունը վորդերին մղել և դեպի հետա-

դիմություն, վորովհեակ այդ բացառիկ գեպքերում հետագիմությունն ավելի ոգտավետ և յեղել նրանց համար:

Բայց, ինչպես վերև նկատեցինք, այդպիսի գեպքերն առհասարակ բացառություն են կազմում: Իսկ ընդհանուր որենքն այն ե, վոր որդանիզմների համար առաջադիմությունն ավելի ոգտակար ե, քան հետադիմությունը: Դոյության կովում առաջադիմող, զարգացող որդանիզմները հաղթում են իրանց այն ընկերներին, վորոնք կամ հետադիմում են կամ անընդունակ են հարմարվել շրջապատող պայմաններին:

Մենք վերև տեսանք, վոր բնական լիներության դերը պարզելու համար՝ Դարվինը դիմում և համեմատության. բնական ընտրությունը համեմատում և արվեստական ընտրության հետ և ապացուցանում ե, վոր դրանք նման գործոններ են: Մարդ յուր կենդանիներից լավելին ընտրելով և նրանց բազմացնելով, կատարելագործում ե նրանց ցեղերը. այդ արվեստական լիներությունն ե: Գոյության կոփվը նույն դերն և կատարում բնության մեջ. վազչացնում ե թույլ անհատներին կամ թույլ նեսակները և առաջ բերում ընտիր, կատարելագործված տեսակներ. այդ բնական լիներությունն ե: Թեպետ առաջին դեպքում գործում է խելացի եակը (մարդը) վորու ծրագրով, իսկ վերջին դեպքում կույր մեխանիկ ուժիք, բայց կայնպես յերկուսի գործունեության հետևանքը նույնն ե, յերկու դեպքում ել կատարվում ե տեսակների կատարելագործում:

Սակայն յերկու տեսակ ընտրությունների մեջ

կան նաև տարբերություններ. բնական ընտրությունը պահպանում և միայն այնպիսի առանձնահատկություններ, վորոնք անպայման ոգտավետ են որգանիզմների համար—ույժ, արագ շարժվել, խելք, ճարպիկություն ևայլն, իսկ արվեստական ընտրությունը հաճախ պահպանում և այնպիսի առանձնահատկություններ, վորոնք ոգտավետ են միայն մարդուն, յեթե անգամ վնասակար լինեն որդանիզմի համար: Որինակ մարդու քմահածույթն այնչափ կարձացըրել և մի տեսակ աղավնու («կարճերիս տուրմանի») կտուցը, վոր նրա ճուտիկները հաճախ չեն կարողանում կոտրել ձվի կճեպը և դուրս գալ կճեպից, նրանք կամ մնում են կճեպի մեջ և մեռնում կամ մարդիկ իրանք են կճեպի մեջ և աղավնում նրանց: Ուրեմն այդ աղավնիների համար կտուցի չափազանց կարճանալը անկասկած վնասակար ե:

Միքանի յերկիրներում կան ընտանի խոզեր, վորոնց գլուխը և վոտսները արվեստական ընտրության պատճառով չափաղանց փոքրացել են, վորովհետեւ մարդու համար խոզերի մարմնի այդ մասերը շատ ել արժեքավոր չեն. ընդհակառակն՝ այդ խոզերի միսր և նարպի այնքան ավելացած են, վոր խելք կենդանիները համարյա չեն կարողանում շրթել իրանց ահազին մարմինները փոքրիկ գառների միջոցով:

Այս գեպքում ել խոզի մարմնի մեծանալը և վոտսների ու գլխի փոքրանալն ոգտավետ և մարդկանց համար, բայց անպայման վնասակար և կենդանու համար:

Այսպիսի որինակներ անչափ շատ կան. մարդ բույսեր կամ կենդանիներ բազմացնելիս, և նկատի ե

ունեցել միշտ յուր անձնական շահն ու ոգուտը: Բայց
բնության մեջ մենք յերբեք չենք հանդիպում այդպի-
սի դեպքերի, վորովհետև բնական ընտրությունը միշտ
գոչնացնում ե այն անհատներին, վորոնք ունեն վը-
նասակար առանձնահատկություններ:

Այդպիսով թեև Թարվինից առաջ եվոլյուսիո-
նիստները գիտեյին, վոր կենդանի եակները ամենա-
հին ժամանակներից սկսած առաջադիմել և զարգացել
են, բայց նրանք չգիտեյին, թե ինչն ե այդ առաջա-
դիմության պատճառը: Հիմնավոր անթիվ փաստերով
Թարվինն ապացուցեց, վոր որպանիզմների զարգացման
առաջադիմության պատճառը գոյության կոիվն ե,
վորին հետեւում ե բնական ընտրությունը:

Այս այս բացատրությունն ե, վոր ի պատիվ
Զարլի Թարվինի կոչվում ե դարվինիզմ՝ կամ Թարվինի
ուամունին: Այս վերջինը յերբեմն անվանում են նաև
սելեկցիոնիզմ (sélektion—ընտրություն):

Թարվինի տված բացատրությունն այնքան պարզ
ե և համոզիչ, վոր շատերը մնացել եյին զարմացած,
վոր իրանք չեն հղացել մի այդպիսի պարզ միտք:

Իրավ, յեթե ձիշտ ե, վոր կենդանիները և բույ-
սերը բազմանում են այնքան արագ, վոր յեղած սըն-
ունունդը չի բավականանում բոլորին, այդ դեպքում
պարզ ե, վոր նրանց միջև կըծագի մըցում, գոյու-
թյան կոիվ: Իսկ յերբ կյանքի կոիվ ե առաջանում
այնպիսի անհատների միջև, վորոնց ույժերն անհա-
գասար են, հասկանալի յե, վոր հաղթողն ուժեղը կը-
լինի, իսկ թույլերը կանհետանան:

Սրանից ել պարզ ե տրամարանական ի՞նչ կա-
րող ել լինել:

VI

ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՎԱՆՔՆԵՐԸ

Նոր կատարելագործված տեսակների
ծագումն: Յուրաքանչյուր որգոնիզմի մար-
մի մասերն այնպիս են կապված իրար
հետ, վոր մեկի փոփոխությունն առաջա-
ցնում ե մյուսների մեջ համապատասխան
փոփոխություններ: Հին տեսակներն ան-
հետանում են՝ անկարող լինելով մըցել նո-
րերի հետ: Նոր տեսակները հեռանում են
իրարից միջին տեսակների վոչնացման
պատճառով: Յերկրագնտի շերտերում գըտ-
նված են տարորինակ կենդանիների մնա-
ցորդներ:

Զարլի Թարվինն ապացուցանելով բնական ընտ-
րության գոյությունը բնության մեջ, միանգամբց
զարգեց և բացատրեց բազմաթիվ յերկույթներ, վո-
րոնք մինչև այդ ժամանակ անբացատրելի եյին հա-
արվում կամ բացատրվում եյին անբավարար կեր-
պվէ: Այդ յերկույթները լուսաբանվեցին Դարվինի
մէծ գյուտի շնորհիվ:

Դեռ կամարկի ժամանակներից հայտնի յեր, վոր
բնության մեջ հաճախ առաջ են գալիս նոր կատարե-

լագործված տեսակներ, իսկ հին տեսակներից շատերը ժամանակի ընթացքում անհետացել են և այժմ ել անհետանում, վոչնչանում են, տեղի տալով ավելի նոր և ավելի կատարելագործված տեսակների։ Բայց վոչ վոք չեր իմանում, թե ի՞նչպես և կատարվում հին տեսակների վոչնչացումը կամ նորերի ծագումը Խնդիրը պարզենք միքանի որինակներով։

Հայտնի յե, վոր միջատների և այլ մանր կենդանիների ամենամեծ թշնամիները թուչուններն են, ամեն որ հազարավոր միջատներ վոչնչանում են՝ թուչուններին զահ դառնալով։ Վայ այս միջատին, վորոնք ժամանակին չեն կարողանում խուսափել իրանց թշնամիների սուր աչքերից։

Յերեվակայենք միջատների մի տեսակ, վոր շրջապատված, և այդպիսի աննպաստ պայմաններով։ Անվանենք այդ տեսակը «մանր տեսակ»։ Հետո յենթադրենք, վոր «մանր տեսակի» սերունդների մեջ կան միքանի անհատներ, վորոնք ընդունակ են ավելի արագ շարժումներ անել քան անհատներ, վորոնք ընդունակ են ավելի արագ շարժումներ անել քան անհատներ։ Հասկանալի յե, վոր այս անհատները, վորոնք ընդունակ են ավելի արագ շարժումներ, ավելի շուտ ել կը փախչեն իրանց թշնամիներից—թուչուններից։

Ուրիշն միենալին տեսակի սերունդներից ընտկան ընտրությունը կը ջոկի ավելի արագ վագող անհատներին, իսկ մնացածները մեծ քանակությամբ կը վոչնչանան՝ թուչուններին կերակուր դառնալով։ Արագավագ միջատները կենդանի մնալով կը բազմանան, կարտադրեն նոր սերունդներ, վորոնցից ընտկան ընտրությունը նորից կը ջոկի ամենարագ վագողներին

իսկ մյուսներ կանհետանան առանց սերունդներ առաջացնելու։

Զմուռանանք վոր բնության մեջ այդ պրոցեսը կատարվում է բազմաթիվ գարերի ընթացքում և անթիվ սերունդների վրձանում։ Հասկանալի յե, վոր այդպիսով բնական ընտրության շնորհիվ վերջիվերջուածածնան խիստ արագավազ միջատներ։ Հավանական ե, վոր նոր տեսակի միջատները ունենան զորեղ մկաններով ամուր վոտներ, վորովհետև առանց զորեղ մկանների անհնարին և արագ շարժումներ անելը։

Այստեղ անհրաժեշտ եմ համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի շատ կարեոր խնդրել վրա։ Դարվինը մի շարք փաստերի հիման վրա ապացուցում է, վոր կենդանիների յեվ բույսերի որգանիզմի մասերի այնպիս յեն համակերպված իրան նետ, վոր յերբ փորեվի պատճառով փոփոխվում է մեկ մասը, անպայման փոփոխվում են նայեվ նրան նետ կապված միւս մասերը։

Որինակ՝ նկատված ե, վոր յերբ մեծանում է վորեւ հանգամանքի շնորհիվ դիցուք թուչունների գրալուսը, նրանց պարանոցի մկանները ևս համապատասիան չափով մեծանում են, վորպեսզի հնարավորություն ունենան ծանրացած գլուխը պահել և շարժել, փոխվում են նաև պարանոցի վողերը։ Մյուս կողմից ել, վորովհետև մեծացած գլուխն ավելի մեծ ճնշումն են անում իրանի վրա, ուստի և իրանի գոսկորներն ու մըկաներն ել համապատասխան չափով փոխվում են, իսկ կենդանի և իրանի փոփոխությունների վրա, մարտողական յեվ ընշառության գործարանների վրա հայլն։

Այդպիսով մարմնի մեկ մասի (զլիի) փոփոխությունն առաջ և բերում բազմաթիվ փոփոխություններ մարմնի մյուս մասերում:

Նույն յերեսույթը կընկատենք, յեթե մտարերենք վերոհիշյալ որինակը, արագավաղ միջատների վոտների փոփոխությունները պատճառ են դառնում նրանց մարմնի մյուս մասերի փոփոխությունների, իսկ դրա հետեանքն այն է լինում, վոր «արագավաղ» միջատներն սկսում են տարբերվել «մանր տեսակից» նույնեւեկ իրանց կազմվածքով:

Այդ հիման վրա գիտնականները բաժանում եյին յերկու-յերեք նոր տեսակներ: Առաջեք ինչպես.

Վերցնենք ելի նույն որինակը և յենթադրենք, վոր «մանր տեսակի» սերունդների մեջ, բացի արագավաղներից կան նաև անախործ հոտ ունեցող միքանի թոշուններին: Յեթե այդ հոտը դուրեկան չեն նաև թոշուններին, վերջինները չեն մոտենալ վատ հոտ ունեցող անհատներին, վորոնք ազատ կազրեն և կըրագմանան, առաջացնելով նոր տեսակ: Հենց այդ կերպով են առաջացել Հարսավային Ամերիկայում ապրող թիթեռների միքանի տեսակները, վորոնք սառտիկ անախործ հոտ ունենալով, ազատ են մնում իրանց թշնամիների հարձակումներից: Այդ թիթեռները պատկանում են Helconidae ընտանիքին:

Այդպիսով յերկու առանձնահատկություններն ել —արագ վագելը և անախործ հոտ ունենալն ոզտավետ են գոյության կովում: բնական ընտրությունը նոր սերունդներից անդադար կըջոկի մեկ կողմից արագ վազող, մյուս կողմից անախործ հոտ ունեցող անհատներին, այդ պատճառով միենույն մանր տեսակից կառաջանան յերկու տարբեր տեսակներ:

Մեկ որինակ ել առաջ կըբերենք բույսերի կանքեց:

Թոչունները պատուհաս են վոչ միայն միջատների, այլև բույսերի համար, վորովճետն վերջինների սերմերի մեծագույն մասը զոհ և զնում թոշունների ստամոքսին: Յենթադրենք թե վորեւ բույսի սերմի մեջ պատահմամբ գտնվում են նաև միքանի հատ ավելի հաստ թաղանթ ունեցող սերմեր: Այդպիսի յենթադրությունն անբնական չի կարելի համարել, վորովհետեւ ինչպես ցույց տվեցինք Յ-րդ գլխում, նոր սերնդի անհատները հաճախ ունենում են տարբեր առանձնահատկություններ:

Ուրեմն՝ զիցուք մի բույսի սերմերի թվում կան միքանի հատ հաստ թաղանթ ունեցողներ, ինչ կըլինի դրա հետեանքը: Թոչունները կուլ կըտան թե հաստ և թե բարակ թաղանթ ունեցող սերմերը, նրանց ստամոքսը կըմարսի միայն քնքույց թաղանթ ունեցող սերմերը, իսկ մյուսները, ամուր և հաստ թաղանթ ունենալով, անվաս կանցնեն մարսողական խողովակների միջով, կընկնեն հողի մեջ, կըզարդանան և կառաջացնեն նոր սերունդներ: Վերջիններից բնական ընտրությունը նորից կըջոկի ամենահաստ և կոպիտ թաղանթ ունեցողները, իսկ քնքույց թաղանթ ունեցողները կըվոչնչանան:

Դարերի ընթացքում գործելով այդ ուղղությամբ, բնական ընտրությունը մերջիվերջո առաջ կըբերի բույսերի նոր տեսակ:

Այդ տեսակ դեպքեր անթիվ են բնության մեջ, ամեն տեղ բնական ընտրությունը պահպանում ու ապահովում է միայն այն անհատներին, վորոնք վորեւ

ոգտավետ առանձնահատկություն ունեն: Այդ բավական չե. ընական ընտրումնելունը վոչ միայն պահպանում և ոգտավետ առանձնահատկությունները, այլ և հետագա սերունդների մեջ այդ հատկությունները զորեղանում և մինչ այն աստիճան, վոր նոր տեսակներ են առաջ գալիս:

Բնական ընտրության շնորհիվ մի կողմից առաջանում են նոր, կատարելագործված տեսակներ, մյուս կողմից հաճիքում, անհետանում են հին տեսակներից ռատերը: Հին տեսակների վոչնչանալը նոր տեսակների ծագման բնական հետևանքն է. իրավ, հին տեսակներըն անկարող են լինում մրցել նոր կատարելագործված տեսակների հետ, վորովհետև շրջապատող պայմանների նկատմամբ նոր սերմերի հարմարությունները չեն ունենում:

Յերկրաբանական հետազոտությունները ցույց են տալիս, վոր յերկրագնուի կեղմի շերտերում պարունակում են մեծ քանակությամբ կենդանիների և բույսերի քարացած մնացորդները (հանածոներ), վորոնք պատկանում են ըստ մեծի մասին արդեն անհետացած տեսակներին: Այդ հանածոներին նայելով, պետք է յեղբակացնել, վոր հին տեսակներից շատ շատերն են հասել մեր ժամանակներին, նրանցից մեծագույն մասն անհետացել ե, իսկ նրանց տեղը բըռնել են նորերը:

Դրանով և բացատրվում այն հանգամանքը, վոր կենդանիների և բույսերի տեսակների թիվը դարերի ընթացքում զգալի չափով չի շատանում. մի կողմից առաջանում են բազմաթիվ նոր տեսակներ, բայց

մյուս կողմից ել մեծ թվով հանգչում ու անհետանում են հին տեսակները:

«Բնական ընտրության թեորիան հիմնված է այն համոզմունքի վրա, վոր յուրաքանչյուր նոր ցեղ կամ նոր տեսակ կազմվում և պահանջվում է շնորհիվ մի վորեւ ոգտավետ առանձնահատկության, վորով նա (նոր տեսակը) ոժաված է և գերակշռում է համեմատած այն տեսակների հետ, վորոնց հետ մրցում է: Իսկ դրանից համարյա անխուսափելիորեն հետևում է ավելի սակավ ոժաված տեսակների հանգչումն: Նույնը կարելի վեղ ցեղ, ասել նաև մեր ընտանի որդանիկների մասին, յերբ ծագում է մի նոր, փոքրիշատե կատարելագործված ցեղ, ամենից առաջ առաջ արջակայից դուրս և մզում ավելի քիչ կատարելագործված ցեղերին: Յերբ նա (նոր տեսակը) ավելի ևս առաջադիմում է, նա տարածվում է հեռու, ինչպես մեր կարճ յեղջյուրավոր անասունները, և դուրս և մզում այլ ցեղերին նաև ուրիշ յերկիրներում: Այդպիսով թե նոր տեսակների ծագումը և թե ըստ հինգանիվ վոչնչանալը սերտ կերպով կապված են միմյանց հետ»...*)

Ընթերցողն անշուշտ կը իշե, վոր գոյության կոիվը մանավանդ սուր կերպարանք և ստանում նման որդանիկների շրջանում, վարովհետև նման որդանիկմունքների կարիքները միատեսակ են լինում, ընդհակառակը՝ յեթե մի կտոր հողի վրա ապրում են տարբեր տեսակ որդանիկներ, վորոնցից մեկ տեսակը կերպարը վում և զիցուք խոտով, մյուսը ծառերի ճյուղերով, ինը մանը կենդանիներով, նրանք իրար չեն խանցերողը մանը կենդանիներով, նրանք իրար չեն խանց-

*) Պ. Դարվին—Происхождение видов, № 253.

գարում, վորովհետեւ որոնց կարիքը տարբեր են, ուստի զոյության կոիվը նրանց շրջանում արտահայտվում է թույլ կերպով:

Ուրեմն միենույն յերկրում ապրող կենդանիների և բույսերի համար ձեռնտունեւ, յեթե նրանք պատկանում են տարբեր տեսակների, այսինքն եթե տարբեր կարիքներ ունեն:

Հենց ճիշտ այդ ուղղությամբ ել զործում է բընտիւն ընտրությունը. նոր ծագած տեսակները ձգտում են, վորքան նեարավոր ե, նեռանալ, տարբերվել իրարից:

Դարվինն այս յերկությն անվանում է «առանձնահատկությունների խոտորություն» (расхождение признаков).

«Մի կտոր հողի վրա ապրող կենդանիների թիվը համեմատական չափով այնքան ավելի մեծ կըլինի, վորքան վոր քիչ լինի նրանց նմանությունը կամ վորքան վոր ավելի դանազանակերպ լինի նրանց բնությունը: Կան ծառեր (որինակ՝ կաղնին), վորոնց վրա կարող են ապրել մինչև յերկու հարյուր զանազան տեսակ միջատներ միասին: Մեկ խումբը կերակրվում ե ծառի պտուղներով, յերկրորդը ծաղիկներով, յերրորդը տերեներով կամ կեղեռով, արմատով ևայլն: Իսկ յեթե այդ բոլոր միջատները մեկ տեսակի պատկանեին և կերակրվեյին միայն կեղեռով կամ կամ միայն տերեներով, նրանք վոչ մի կերպ չեյին կարող բոլորը միասին ապրել միենույն ծառի վրա: Նույնը կարելի է ասել նաև մարդկային հասարակության մասին. միենույն փոքրիկ պետության մեջ կարող են տպլել միայն վորոշ թվով արհեստավորներ, յեթե նրանք զանազան արհեստներով են ապրում:

Ա.ԺԱՄՏԱՆԻՔԻ բաժանումը, վոր վերին աստիճանի ոգտագետ և թե ամբողջ համայնքի և թե յուրաքանչյուր բանվորի համար, գոյության կովի և բնական ընտրության անմիջական հետեւանքն ե, վորովհետեւ ինչ շափով վոր տարբերվում է զանազան անհատների զործունեությունը՝ ուրեմն և տեսակը, նույնչափով ել այդ կոիվն այնքան ավելի հեշտանում ե...*)—ասում է հոչակավոր գերմանական բիոլոգ Երնստ Հելկելը:

Մենք իմացանք արդեն, վոր հաճախ մեկ հիմնական տեսակից առաջանում են միքանի նոր տեսակներ. մյուս կողմից ել գիտենք, վոր հիմնական տեսակները, վորոնք նոր տեսակների համար ծառայում են իրեք կապող ողակներ, հաճախ վոչնչանում են՝ անկարող լինելով նոր տեսակների հետ մրցել: Հին տեսակների վոչնչանալով նոր տեսակի կապող ողակներն ել վոչնչանում են, իսկ այս հանգամանքի շնորհիվ նոր տեսակներն ավելի ևս հեռանում են իրարից:

Այդ տեսակ «կապող ողակներով» կամ միջնորդական տեսակների մասցը ընկերով լիքն են յերկրի զանազան շերտերը: Ահա միքանի որինակներ.

Յերկրագնտի կեղեկի ստորին (հին) շերտերում գտնված են տարրինակ կենդանու քարացած մնացորդները:

Մասոնոնցառուրը (գիտնականներն այդպես են անվանել տարրինակ կենդանուն) ժամանակակից տեսակետով իսկապես հրեշտավոր կենդանի ե. մարմնի մեկ գասով նման և նա կոկորտիլոսին, մյուսովը մողեսին,

*) Թրիստ Գեկկել—Տրանսֆորմիզմ և «Դարվինիզմ», եջ 157.

յերորդ մասովը նման է զուտերին: Գիտնականները համարում են մաստոնեցառւը այժմյան կոկորտիլուսների, և մողեսների նախահայր (կապող ողակ):

Համարյա նույն շերտերում գիտնականները գլւտել են մեկ ուրիշ հրեշի մնացորդները, գրան ել անգանել են իլիրիսառաւր (մողեսաձուկը): Այդ հրեշները, ինչպես ցույց ե տալիս նրանց անունը, կապում են այժմյան ձկները մողեսների հետ: Իլիրիսառաւրներն ունեցել են 4—9 մետր յերկարություն և ապրելիս են յեղել ջրելում:

Մոտավորապես նույն ժամանակում յերկրագնտիք գրա ապրելիս են յեղել կիսակաթնասուն, կիսասողուն փուլանողոն կոչված հսկաները, վորոնցից հետագա ժամանակներում առաջացել են սողուններն ու կաթնասունները:

Գիտական աշխարհում ամենից շատ ազմուկ բարձրացրեց Արխենպերիխի գյուտը. դա թեև թոչուն ե, սակայն յուր կազմվածքի միքանի մասերով նման է սողուններին: Թե՛ այդ, և թե բազմաթիվ ուրիշ փաստերի հիման վրա գիտնականները կարծում են վորային բոչունենություն առաջացել են սողուններից: Գերմանիայում, Զոլենհոֆենի հանքերում, գտնվել ե այդ զարմանալի թոչունի («արխենպատերիքսի») յերկու որինակը, վորոնցից մեկը գնել ե Բըրիտանական թանգարանը, իսկ յերկրորդը—Բերլինի համալսարանը:

Յերկրագնդի կեղեկի ավելի (վերևի) շերտերը պարունակում են ուրիշ տեսակ կենդանիների մնացորդներ. այդ շերտերում գտնված անովորերինումը կապում ե այժմյան կաթնասունների միքանի խմբերը իրար հետ: Այդ կենդանին («անովորերիումը»)

ԴԱՐՎԻՆԻՑԱՐ

այժմյան սմբակավորների, վորոնդողների և խողերի-նախահայրն (կապող ողակ) ե համարվում*):

Առհասարակ կարելի ե ասել, վոր հանգած տեսակների մեծագույն մասն այդպիսի բնավորություն ե կրում. սակայն հանգած տեսակները կապում են այժմյան կենդանիների զանազան խմբերն իրար հետ:

Հասկանալի բան ե, վոր վերոհիշյալ փաստերը զարգացման թեորիայի պաշտպանողների (եվոլյուսինիստների) համար զորեղ ապացուցյաներ են:

*) Иностранные—Геология, յերկրորդ հատոր:

փամփուշտը, ոդով լցված լինելով, թեթեվացնում է մարմինը և ոժանդակում լողալուն հայլն:

Մի խոսքով՝ կարծես մեկը յերկար ժամանակ հատկապես մտածել ու խորհել է ձկների մարմնին հարմարագույն ձեւ տալու:

Յեթե ձկներից անցնենք թռչուններին, նույն ոլատկերը կընկատենք. թռչունների իրանը, պարանոցը. թերը, պոչը, ներքին գործարանները և նույնիսկ վուկորներն իրանց կազմվածքով հիանալի կերպով հարմարացրած են կյանքի համար:

Յեթե հյուսիսային կենդանիները համեմատենք հարավում ապրող կենդանիների հետ, վորքան մեծ տարրերություն կըտնինք: Հյուսիսային կենդանիների մարմինը ծածկված է յերկար ու խիտ մաղերով, վորոնք ինչպես տաք մուշտակ պաշտանում են նրանց մարմինը հյուսիսային սարսափիլի ցրտերից: Իսկ ավելի մեղմ և տաք կլիմայում ապրող կենդանիներն, ըստ մեծի մասին այդպիսի հաստ բուրդ չեն ունենում, վորովհետեւ այդ յերկիրներում տաք հագնվելու կարիք չկա:

Ավելի ևս զարմանալի է այն հանդամանքը, վոր հաճախ կենդանիների գույնը բոլորովին նման է լինում շրջապատող միջավայրի գույնին: Բուսականությունից զուրկ քարարափներում ապրող կենդանիների գույնը այն աստիճան նման է շրջապատող քարափների ու հողի գույնին, վոր այդ կենդանիների մոտով անցնելիս հաճախ չենք նկատում նրանց: Հյուսիսային յերկիրներում, ուր տաքվա մեծ մասը գետինը ծածկված է լինում ձյունով, կենդանիները սպիտակ կամ առհասարակ բաց գույն են ունենում, վորով և նմանվում են շրջապատող ձյունին:

VII

ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔ-ՆԵՐԸ

(Եարունակուրյուն)

Որդանիզմների հարմարացումը շրջապատող պայմաններին: Միմետիզմ, սիմբիոզ կամ մուտալիզմ... Բնական ընտրությունն իսկական մեքենական պրոցես ե, նա ամեներին կապ չունի գիտակցության հետ: Բնության անթիվ յերկույթներ լուսաբանվում ե բնական բացատրությունն են ստանում շնորհիվ Դարվինի ուսմունքի:

Վաղուց ի վեր մարդկանց ապեցնում եր այն հանդամանքը, վոր կենդանիների և բույսերի կազմվածքըն ըստ մեծի մասին հիանալի կերպով հարմարացրած է լինում շրջապատող պայմաններին: Ուշադրություն դարձրեք ձկներին, վորքան լավ է հարմարացրած նըրանց կազմվածքը ջրումը լողալու համար. յերկար ու տափակ մարմինը սրածայր գլխով և հարթ մակերևույթով գյուրությամբ կտրում-անցնում է ջրերը. ձկների ներքին գործարաններն ել զարմանալի հարմար են ջըրերում լողալու համար. որինակ՝ նրանց լողալու

Մի խոսքով՝ ուր ել վոր դարձնեք ձեր հայացքը, բը-նության մեջ ամենուրեք կընկատեք զարժանալի նպատակահարմարություն և ներդաշնակություն միջավայրի և որդանիզմների կազմվածքի միջև։ Ի՞նչպես պետք է բացատրել բազմաթիվ այսպիսի յերկույթները։ Ինչու սարերում ապրող թոչունների վոտերի մատները կարծեն, իսկ ճահճային տեղերում ապրողների մատները յերկար են լինում և թաղանթներ յեն ունենում մատների արանքում։ Ակներև և վոր ճահճային թոչունների վոտները կազմված են ճիշտ այնպես, ինչպես հարկավոր և, ինչպես նպատակահարմար և նահնային կյանքի համար։

Ի՞նչպես բացատրել այս զարժանալի ներդաշնակությունը միջավայրի և որդանիզմների միջև։ Մինչեւ դարվինիզմի լույս տիսնելը՝ գիտնականները կամ խուսափում եյին այդ հարցին պատասխանելուց կամ պատասխանում եյին մութ և ընդհանուր խոսքերով։

Ասում եյին, որինակ՝ թե գերագույն ույժն և հարմարացրել զանազան տեղերում ապրող կենդանիների մարմինը շրջապատող միջավայրին։ Գերագույն ույժի իմաստուն կարգադրությամբ և, վոր մոխրագույն քարերի վրա ապրող միջատներն ու սողունները նույնպես մոխրագույն են, իսկ հյուսիսային յերկիրների կենդանիները, գերազագույն ույժի կարգադրությամբ, հագել են տաք մուշտակներ՝ մահարեր ցըտից պաշտպանվելու համար։

Ի՞նթերցովն անշուշտ կընամածայնիի, վոր այդ այն բացատրություններից և, վորոնք իսկապես «վոշինչ չեն բացատրում», ինչպես ասում են Հերքերտ Սպենսերը։ Սակայն թողնենք այդ մեկնաբանությունը և տիսնենք,

թե ի՞նչպիսի բացատրություն և տալիս այդ զարմանալի յերկույթներին դարվինի ուսմունքը։

Սկսենք անապատային միջատներից։ Դրանց մարմինի գույնը դեղնավուն կամ մոխրագույն ելինում, այսինքն բոլորովին նման է լինում ցրջապատող ավազի գույնին։ Դարվինի կարծիքով՝ առաջնարում անկասկած, ինչպես անապատներում, այնպես ել ուրիշ տեղերում, կամ ճահճային արանքում ապրույթներ, իսկ դրանց կողքին ապրելիս են յեղել գրանց անհաշտ թշնամիները — թոշուններն ու մողեսները,

Այդպիսի պայմաններում իրանց թշնամիներին անկասկած ավելի բազմաթիվ զոհեր կըտային այն միջատները, վորոնք հեղտ են նկատվում հեռվից, այսինքն կարմիրները, զեղինները, կապույտները, սևերը։

Հասկանալի բան և, վոր զոհեր կըտային նաև մոխրագույնները, բայց պարզ և, վոր նրանց մեծագույն մասը կըփրկվեր, թշնամիներից աննկատելի մնալով։ մինչդեռ կանաչ, կարմիր և կապույտ միջատները կը կոտորվեյին անգին թվով։

Այդպիսով կարձ ժամանակից հետո անապատներում կըմային մոխրագույն կամ դեղնավուն միջատները, վորոնք և կըտային նոր սերունդներ։ Վերջին շատներից ել թոշուններն ավելի շուտ կընկատեյին և կը վուներից հյուսիսային այն միջատներին, վորոնց գույնն ավելի չնչացնեյին այն միջատներին, վորոնց գույնից, իսկ նըղանազանվում շրջապատող ավազի գույնից, վոր նըղանազանվում թըրանք, վորոնք իրանց գույնով շատ են նմանվում շըրանք, զապատող մոխրագույն միջավայրին, հավանականորեն կապելի շատ կենդանի կըմային և նոր սերունդներ կապելի շատ կենդանի կըմային ել ժառանգականության ուսաջացնեյին։ Վերջիններն ել ժառանգականության

րենքի հիման վրա կըստանային իրանց ծնողների ողավետ առանձնահատկությունները (ի միջի այլոց նաև ավագի գույնը):

Այդպիսով գարերի ընթացքում անտպատճերի բուրք միջատներն ավագի գույն կըստանային, վորովհետեւ այդ գույնից զանազանվողները անդադար կը վոչնչանային աշքաբաց թշնամիներից:

Անապատի թոշուններն ու մողեսներն ել ուրիշ տեղերի թոշուննրի ու մողեսների նման սկզբումը յերեխ կապույտ, կանաչ, սպիտակ գույն կունենային: Բայց այդ փայլուն գույների պատճառով միջատներն ավելի շուտ կընկատեցին իրանց թշնամիներին ու կը փախչէին նրանցից... Մյուս կողմից՝ այն թոշուններն ու մողեսները, վորոնց գույնը պատճամամբ փոքր ինչ ավելի գեղնավուն կամ մոխրագույն եր լինում, ավելի հեշտությամբ ելին կարողանում կազմագողի մոտենալ իրանց գոներին և ավելի մեծ աշողությամբ ելին վորոսում միշտաներին:

Յեկ վորովհետեւ ամենափայլուն անհատներն անդադար կոտրվում ելին, չկարողանալով մրցել գեղնափունների և մոխրագույնների հետ *), այդ պատճառով անապատի բոլոր թոշուններն ու մողեսներն ել ստացան նույն գույնը, ինչ գույն վոր ունելին այնտեղից միջատները:

Փայլուն թոշունների անհետանալն անտպատճե-

*) Այսինքն՝ վորովհետեւ փայլուն թոշուններն ու մողեսները չելին կարողանում մոխրագույնների նման հեշտությամբ սնունդ ճարել, ուստի մեծ քանակությամբ կրառվում ելին:

րից ուրիշ պատճառ ել ունի. չե՛ վոր գրանք ել թշշնամիներ ունին, գիշատիչ թոչունները միշտ վորոնում են միջատակեր թոչուններին և վոչնչացնում են նըրանց: Պարզ ե, վոր մոխրագույն միջատակեր թոչուններն ավելի ածոցությամբ կը փուլսափեն և կազմագիր գիշատիչ թոչուններից քան նրանց փայլուն ընկերները:

Ուրեմն անապատի կենդանիներն ավագի գույն ստացան, վորովհետեւ ավագի գույն ունենալը ոգտակար եր նրանց համար: Բնական ընտրությունը յերկար տարիների ընթացքում ջոկում և պահպանում եր միայն նրանց, վորոնք ոժտված նյին այդ ոգտակար առանձնահատկությունով իսկ մյուսները (փայլուն անհատները) վոչնչանում ելին, վորովհետեւ չելին կարողանում մրցել ավագի գույն ունեցողների հետ:

Հյուսիսային յերկիրներում, ուր գետինը տարվա մեծ մասը ծածկված ել լինում ձյունով և սպիտակ գույն ունի, կենդանիների համար ել սպիտակ գույն ունենալն ավելի ոգտակար ե, քան ավագի գույնը: Այդ հիման վրա հյուսիսային յերկիրներում բնական ընտրությունը ջոկել ու պահպանել ե վոչ թե մոխրագույններին, այլ սպիտակ (պատճառով) գույն ունեցող անհատներին:

Վոր այդ գատաղությունները ձիշտ են և հիմնված են իրական փաստերի վրա, յերեսում և հետեւյալ հանդամանքից: Ամառվա ամիսներին հյուսիսային յերկիրներում ել ձյունը հալվում ե գետինը սև կամ գեղին գույնը ստանում, զրա համեմատ հյուսիսային կենդանիների մարմնի գույնն ել տամաները փոխվում, դառնում և սև կամ դեղին. իսկ ձմեռը նորից այդ կենդանիները սպիտակ գույն են ստանում:

Բյուրավոր նույնանման փաստեր կը գտնենք, յե-

թե ուշագրությամբ դիտենք բնությանը, կահաչ խոսերի լեվ Տերեվների վրա ապրող միջատներն ըստ մեծի մասին ունենում են կանաչ գույն: Դժվար է յերեսակացիւ թե վրաքան անհատներ փրկվում են թռչուններից հենց այն պատճառով, վոր շրջապատող միջավայրի գույն ունին:

Հացարույսերի կանաչ գողունների յեվ Տերեվների վրա հաճախ լինում են կանաչ մորեխներ, վորոնք այն աստիճան նման են գույնով կանաչ միջավայրին, վոր համարյա անկարելի և նրանց նկատել յերբ նրանք անշարժ կանգնած են լինում տերեների վրա:

Ի՞նչ կը լիներ կանաչ միջատների գրությունը, յեթե նրանց վիճակված լիներ ապրելու վոչ թե կանաչ բույսերի վրա, ուր նրանք աննկատելի յեն, այլ կարմիր տերեների վրա կամ ավազոտ անապատներում: Պատասխանը պարզ է:

Տաք յերկիրների թիթեռներն ու մասր թռչնիկները («արոքիլոսներ», կօլիճր) զարմանալի գեղեցիկ և գույնզգույն են, վորովճեակ սովորաբար թռչկոտում են գույնզգույն ծաղիկների վրա: Այդպիսով այդ մասը գեղեցիկ որպանկոմները նույնպես ստացել են իրանց շրջապատող միջավայրի գույնը:

Նույն յերեսութը կը նկատենք, յեթե դիտենք ծովային կենդանիները: Այն կենդանիները, վորոնք ապրում են ծովերի մակերեսութիւնում, անգույն են յեվ բափանցիկ ինչպես ջուրը (ծովամայր, մեծազարդ): Կարծեմ կարիք չկա ասելու, թե վորչափ ոգասկեատ և այդ կենդանիների համար նրանց թափանցկությունը: Ծովային կենդանիներից միքանիսն այն աստիճան թա-

փանցիկ են, վոր կարելի յե նույնիսկ գիրք կարդաւ նրանց մարմնի միջով:

Այդպիսով անհերքելի իրողություն է, վոր կենդանիներից շատերը, բնական ընտրության շնորհիվ, ստացել են շրջապատող միջավայրի գույնը:

Միքանի տեսակ կենդանիներ այդ ուղղությամբ նույնիսկ ավելի հեռու յեն գնացել: Թե գույնով և թե մարմնի ձեռվ նրանք բոլորովին նմանվում են ցրապատող զանազան առարկաներին, ուստի և աննկատելի յեն մնում:

Որինակ՝ Սումատրա կղզու վրա ապրում է մի տեսակ թիթեռ, կալիմա անունով, վոր գույնով և մարմնի ձեռվ այնքան նման է Տերեվի, վոր նույնիսկ մարդիկ հաճախ սիսալվում են և տերելի տեղ են ընդունում «կալիմա» թիթեռին: Անհրաժեշտ է խիստ ուշագրությամբ զննել այդ կարծեցյալ տերելը, վորակազի կորողանանք նկատել «կալիմայի» վոտները, թերելը, կնճիթը և այլն:

Թռչելու ժամանակ այդ թիթեռները կենդանի եւ ակների տպավորություն չեն թողնում, այլ քամու ձեռքից ողի մեջ պտղովով չոր տերեների յեն նման գումար:

Միքանի տեսակ միջատներ սաստիկ նմանվում են այն բույսերի բներին կամ նյուղերին, վորոնց վրա ապրում են: Անա ինչ է ասում պրոֆեսոր Բոբրեցկին Phasmidae ընտանիքին պատկանող միջատների մասին: «Նրանք իրանց յերկար ու բարակ փայտիկանը ման մարմնովն այն աստիճան նմանվում են այն բույսերի բներին և ճյուղերին, վորոնց վրա ապրում են,

վոր դժվարությամբ են զանազանվում վերջիններից»:
Ավելի ևս զարմանալի յեն հետևյալ գեղքերը.

Միքանի տեսակ միջատներ թուշունների հարձակումներից ապահովված են իրանց մսի վատ համի շնորհիվ, զոմանք անսախորժ հոտի պատճառով, իսկ զոմանք ել զորեղ խայթոցների շնորհիվ, զորոնցով պաշտպանվում են նրանք... Այսպիսի միջատներին թուշուններն անգամ չեն մոտենում:

Այդ միջատների հետ միատեղ ապրող անպատճակները միջատներից միջանի տեսակները, թշնամիներից ազատվելու համար, իրանց յերջանիկ (պաշտպանված) հարեանների կերպարանք են ստացել: Որինակ՝ թիթեռների մեկ տեսակը արտաքինով շատ նմանվում է իշաւմեղվին, չնայելով վոր գրանք պատկանում են միջատների բոլորովին տարբեր խմբերին:

Ի՞նչպես պետք ե բացատրել այս յերեսույթը: Ի՞նչն ե պատճառը, վոր այդ թիթեռը կորցրել ե թիթեռներին հատուկ տեսքը և ստացել ե իշամեղվի կերպարանք: Առաջ այդպիսի յերեսույթներն անբացատրելի եյին համարվում, իսկ այժմ դարպինիվմը դյուրությամբ բացատրում ե նրանց: Ահա ինչպես ե Դարվինը բացատրում այդ յերեսույթը:

Իշամեղուն, ինչպես հայտնի յե, ունի զորեղ խայթոց, վորի ոգնությամբ նա խիստ պատժում է իրեն մոտեցող թշնամիներին: Այդ պատճառով միջատների սովորական թշնամիները, ծանոթ լինելով իշամեղվի խայթոցի հետ, փորձ ել չեն անում նրան մոտենալ:

Հասկանալի բան ե, վոր իշամեղուների հետ միատեղ ապրող ուրիշ միջատների համար սաստիկ ոգտա-

վետ կըլիներ գոնյա արտաքուստ նմանվել իշամեղվին, վորով կըսխալացնեյին իրանց թշնամիներին ու կազատվեյին նրանցից: Յեղ յեթե մի վորեւ տեսակ թիթեռներից առաջացած անհատներից միքանիսը պատահմամբ փոքր ինչ նման լինեյին իշամեղվին, առաջ կըգար բնական ընարությունը, վոր կըպահպաներ և կըզորեղացներ այդ ոգտավետ առանձնահատկությունը: Հենց այդպես են առաջացել այն թիթեռները, վորոնք արտաքուստ նման են իշամեղվին:

Վերոհիշյալ բազմաթիվ յերեսույթները կենսաբաններն անվանեցին միմետիզմ՝ կամ միմելիրիա (միմետիզմ, ուժագույն պահանջման անթիվ են բնության մեջ: Ահա միքանի որինակներ ևս:

Միքանի թիթեռների թրթուններն արտաքին տեսքով նմանվում են ոձերին, նմանությունն այնքան կատարյալ ե, վոր թուշունները, նրանց նկատելով, սարսափով փախչում են:

Ճանձերի և թիթեռների միքանի տեսակներն արտաքինով նմանվում են մեղուներին և պիծակներին, շնորհիվ այդ նմանողության նրանք ազատվում են իրանց թշնամիների հարձակումներից:

Այդ մասին պրոֆեսոր Ենիպովիչն ասում է հետեւյալը. «Ճանձերի, թիթեռների նաև զանազան բզեզների, փայտողիների և ուրիշ միջատների բազմաթիվ տեսակները... նմանվում են պիծակներին, մեղուներին, մրջյուններին, իշամեղուներին, այսինքն խայրուով զինված միջատներին...»:

Միմետիզմից անցնենք այն յերեսույթներին, վո-

րոնք կրում յեն սիմբիոզ կամ մուտուալիզմ անունը՝ Միքանի գիտնականների տեղեկությունները հաստատեցին, վոր բնության մեջ հաճախ յերկու տարրեր որգանիզմներ՝ կենսականորեն միանալով իրար հետ, փոխադարձաբար ոգտվում են մեկը մյուսից: Պարզենք այդ միքանի որինակներով.

Հայտնի ե, վոր միքանի տեսակ մըջյուններ իրանց մըջնանոցներում պահում են բուսական վողիլներ, նրանց կերակրում են ու պաշտպանում թշնամիներից, իսկ յերբեմն ել նրանց «կթում» են և ծծուտ նրանցից արտաթորված քաղցր նյութը: Ուրեմն թե վողիլները և թե մըջյունները մեծ ոգուտ են քաղում միասին ապրելուց, վողիլների ոգուտը կայանում է նրանում, վոր նրանց բոլոր կարիքները հոգում են մըջյունները, սակայն նրանք ել իրանց կողմից են ոգնում մըջյուններին, մատակարարելով նրանց քաղցր նյութ («մեղր»):

Նույնպես սիրում են միասին ապրել Pagurus և Ակտինիա կոչված կենդանիները: Ակտինիան կերակրում և Պագուրի սննդի մնացորդներով, ինքն ել դրա փոխարեն պաշտպանում և Պագուրին զանազան թշնամիներից:

«Այդ գիսով մուտուալիզմ կամ սիմբիոզ կոչվում են այնպիսի բիոլոգիական հարաբերությունները (յերկու տարրեր որգանիզմների միջև), վորոնք ձեռնետու յեն յերկու կողմերի համար ել» (Կորպովիչ):

Թե միմետիզմի, թե մուտուալիզմի և թե շատ ուշից յերկույթներ բացարելիս Դարվինը հիմնվում է միշտ միևնույն սկզբունքին, այն և ոգտակարության վրա: Նա պնդում է, վոր գոյության կովում հաղթում

են այն որգանիզմները, վորոնք ունենում են վորեն ոգտակար առանձնահատկություն: Այդ հիման վրա ել որգանիզմների կազմվածքը կրում է յուր վրա նպատականարարության յեվ ոգտակարության դրույթը:

«Կազմվածքի յուրաքանչյուր մանրամասնություն, առում և Դարվինը, առաջացել ե որգանիզմի բարության համար:»*) Այս գաղափարը կարմիր թելի նման անցնում և Դարվինի բոլոր գրվածքներում: Այդ հիման վրա ե, վոր Դարվինի ուսմունքը կոչվում է նաև ուժիթար վարդապետության կամ ուժիթարիզմ (utilis—ուժտակար), իսկ Դարվինը և նրա հետևողները կոչվում են ուսիլիտարիստներ:

Զաեւք և կարծել, թե գիտակցությունը վորեն դեր է խաղացել վերոնշյալ գեղքում: Ամենայն, կանաչ տերեների և խոտերի վրա ապրող միջատները կերպարանափոխվել և միջավայրին նմանվել են առանց գիտակցելու, թե կանաչ գույնը վրկելու և իրանց թշնամիներից:

Նույնպես անապատային կենդանիները մոխրագույն են դարձել առանց այդ բանը գիտակցելու և նրանցից անկախ պատճառներով: Նմանապես բազմաթիվ թիթեռներ կամ ուրիշ մանր որգանիզմներ իշխանեղուների կամ ոձերի կերպարանք են ստացել վոչ այն պատճառով, վոր զգացել են, թե այդ կերպարանափոխությունը ոգտակար է իրանց համար:

Բնության մեջ միակ զորեղ գործող ույժը բնական ընտրությունն ե, վոր մեենապար զոկում է

*) Գ. Дарвин—Происхождение видов, № 161.

ոգտավետ առանձնահատկություն ունեցող անհատներին, իսկ մնացած անհատները, անպաշտպան մնալով՝ վոչնչանում են:

Բնական լիներությունը անդիտակցական, մեքենայական պրոցես է:

Բնության վերաբերյալ յուրաքանչյուր թեորիայի առավելությունն ու ույժը յերեսում և այն ժամանակ, յերբ փորձում եք նրա ոգնությամբ բացատրել բնության այս կամ այն յերեսույթները: Յեթե թեորիան կարողանում է բավարար բացատրություն տալ բոլոր հայտնի յերեսույթներին, այդ ապացույց ե, վոր նա հաստատված ե ճիշտ հիմունքների վրա, հակառակ դեպքում, այսինքն յերբ թեորիան անկարող ե բնական բացատրություն տալ բնության յերեսույթներին, այդ նշան ե, վոր թեորիան խախուս հողի վրա ե հիմնված և վաղ թե ուշ կապացուցվի նրա անպետքությունը:

Դարվինիզմը կամ սելեքցիոնիզմը հեշտությամբ բացատրում ե անթիվ յերեսույթներ և, վոր գլխավորն ե, բացատրում ե բնական և մեքենայական պատճառներով առանց գերազույն ույժի դիմելու: Ցիս շատ որինակներ առաջ բերեցի այդ բանն ապացուցելու համար:

Ըսթեցողը տեսավ, վոր Դարվինի ուսմունքը բավարար կերպով բացատրում ե, թե ինչպես են առաջացել նոր կատարելագործված տեսակները, ինչու են վոչնչացել և անհետացել հին տեսակները, ինչպես են կենդանիներն ստացել շրջապատող միջավայրի գույնը, ինչպես են թույլ անպաշտպան կենդանիների կերպարանքը (մելետիզմ) ևայլն:

VIII

ՍԵՐԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Սեռային ընտրությունը վորոշ չափով զանազանվում է բնական ընտրությունից Արուների և եգերի թիվը: Բազմակնություն: Արուների մրցումը կաթնասունների շրջանում: Նույնը թոշունների շրջանում: «յերգեր» և «սիրային ցույցեր»: Թոշուններն ունեն եսթետիքական զգացմունք: Ոեռային ընտրությունը կատարելագործում ե գլխավորապես մեկ սեռի անհատներին—արուներին:

Ուշագրությամբ դիտելով բնության յերեսույթները, Դարվինը նկատեց, վոր բնության մեջ, բացի բնական ընտրությունից, գոյություն ունի նաև սեռային ընտրություն: Բնական ընտրությունը յուր ազգեցությունը տարածում ե ամբողջ բնության մեջ և ահազին փոփոխություններ ե առաջացնում, իսկ սեռային ընտրությունն ընդհակառակը՝ գործում ե ավելի սահմանափակ շրջանում և անհամեմատ ավելի թույլ ազտեցություն ունի կենդանիների վրա:

Սեռային ընտրությունն այն մրցման հետեւանքն է, վոր տեղի է ունենում մեկ սեռի պատկանող անհատների միջեւ «սիրո ցջանում»:

Հանրածանոթ իրողություն ե, վոր զանազան կենդանիների արուների միջև հաճախ կոխվ ե ծագում եգերի պատճառով և հաղթող են հանդիսանում միայն ամենաուժեղ կամ ամենաճարպիկ արուները, վորոնք և տիրում են եգերին, իսկ հաղթված, թույլ արուները զրկվելով ամուսիններից, ստիպված են լինում փախչել:

Դրա հետևանքն այն ե լինում, վոր թույլ արուներն անկարող են լինում նոր սերունդներ առաջացնել, իսկ ավելի զրեղ արուներն ընդհակառակը՝ ըստ մեծի մասին բազմաթիվ սերունդներ են արտադրում: Մատաղ սերունդների արուները, առաջ գալով ուժեղ արուներից, ժառանգում են նրանց ընտիր հատկությունները:

Յերբ նոր սերունդների արուները մեծանում են, նրանց մեջ ել սկսվում ե կոխվ եգերի համար. թույլերըն ստիպված են լինում տեղի տալ, իսկ ուժեղները եգերին տիրելով, առաջացնում են նոր սերունդներ, վորոնց թվում յեղած արուներն ավելի ևս ընտիր են լինում:

Այդպիսով շնորհիվ այն հանգամանքի, վոր յուրաքանչյուր սերնիի արուներից ջոկվում են ամենաբնիքները, արուներն անդադար կատարելագործվում են: Դրանով ե բացատրվում, վոր շատ կենդանիների արուներն անհամեմատ ավելի խոշոր և ուժեղ յեն լինում քան եգերը:

Սեռային ընտրությունը, անփոփոխ թողնելով ըստ մեծի մասին եգերին, կատարելագործում ե միայն արական սեռի անհատներին:

Խոսելով սեռային ընտրության մասին, Դարմինն

ավելացնում ե. «այդ ընտրությունը կախված ե վոչ թե գոյության կավից, այլ այն մրցումից, վոր տեղի ե ունենում արուների միջև եգերի պատճառով. սեռային ընտրության պատճառով հաղրվածը զրկվում ե վոչ թե կյանից, այլ սերունդներից կամ ունենում ե սակագաթիվ սերունդներ: Այդ պատճառով ել սեռային բնուրույննեն ալիքան զորեղ չի գործում, փորքան բնական բնուրությունը»...

Դարմինն ասում ե, թե սեռային ընտրության շնորհիվ վոչ միայն վորձերի մեծությունը, ույժը և ձարպկությունն ե զարգացել այլև նըսանց յեղջուրները, աքաղազների բութը և առհասարակ պաշտպանության զանազան դրծարանները:

Սակայն ինչն ե պատճառը, վոր մրցումն ըստ մեծի մասին տեղի ե ունենում վորձերի միջև: Ինչո՞ւ եգերն ել չեն մրցում ամսւակն ընտրելու ժամանակ:

Խնդիրն այն ե, վոր համարյա բոլոր կենդանիների սերունդների մեջ վորձերի թիվը եգերից ավելի է լինում: Որինակ՝ Անդիֆայում տասը տարվա ընթացքում կատարված զիտողությունները ցույց տվեցին, վոր շների մեկ ցեղում ծնված վորձերի և եգերի քանակությունները հարաբերում եյին միմյանց այնպիս, ինչպես 110-ը 100-ին այսինքն 210 լակոտներից 110 վորձեր եյին իսկ 100 եգեր:

Նույնպես ապացուցված ե, վոր աղավնիների, կաքավների և շատ ուրիշ թույնների շրջանում ծընվում են անհամեմատ ավելի շատ վորձեր, քան եգեր: Նույն յերեսույթը նկատվում ե նաև մարդկանց շրջանում. զիմակագրական հետազոտությունները ցույց են տալիս, վոր մարդկային զանազան ցեղերի մեջ իգական

սեռի 100 անհատին գալիս են 104-115 վորձեր: Յեթե մյուս կողմից ել ի նկատի ունենանք այն հանգամանքը, վոր կենդանիների շատ տեսակների մեջ զոյցություն ունի բազմակինուրյուն (պոլիգամիա), այն ժամանակ ավելի հասկանալի կը լինի մեղ համար վորձերի մըցումը:

Իրավ, առանց այդ ել սակավաթիվ եզերը բաժանվում են վորձերի մեջ անհավասար կերպով. հաճախ վորձը մեկ եզով չի բավականանում, այլ տասը, քսան կամ ել ավելի եզերից բաղկացած հարեմներ ե կազմում: Այս հանգամանքի շնորհիվ շատ վորձեր զըրկվում են եզերից:

Հասկանալի բան է, վոր զրկվողները հեշտությամբ չեն հաշտպում իրանց զրության հետ, նրանք փորձում են կոփի մզել իրանց հակառակորդների գեմ՝ եզերին նրանցից խլելու դիտավորությամբ և թողնում են կոփի դաշտը միայն այն ժամանակ, յերբ համոզվում են, վոր հակառակորդներն իրանցից անհամեմատ ավելի զորեղ են:

Ահա մի այդպիսի կոփի նկարագրություն յեղերուների կյանքից, վոր առաջ եմ բերում թրեմի հըռչակավոր աշխատությունից.

«...Հենց վոր եզերի մոտ գտնվող վորձ յեղերուն նկատում ե մի ուրիշ վորձ, խանդոառությունից զրգաված իսկույն կոփի և պատրաստվում: Սկսվում ե մենամարտությունը, վոր հաճախ վերջանում ե մեկի կամ նույնիսկ յերկու հակառակորդների մահովը: Յեղջյուրները ցած պահած, կատաղաբար հարձակվում են իրար վրա և զարմանալի ճարպկությամբ աշխատում են կամ հարվածել հակառակորդին, կամ պաշտպան-

վել Հեռու, հեռու անտառում լսվում են յեղջյուրների հարվածների ձայները»...

«Յայտնի յեն դեպքեր, յերբ մենամարտության ժամանակ յեղջերուների յեղջյուրներն այնպես ամուր խճճվել են իրար մեջ, վոր վերջիվերջո յերկուսն ել մահացել են: Հաճախ մենամարտության հետևանքը մնում է անվորոշ միքանի ժամվա ընթացքում: Հաղթվածը թողնում է կոփի դաշտը միայն այն ժամանակ, յերբ բոլորովին ուժապառ ե լինում»... (Բրեմ—Կենդանիների կյանքը):

Համարյա նույն կերպ և կատարվում վորձերի մըցումը նաև մյուս կաթնասունների շրջանում:

Թոչունների մոտ ել եզերն հաճախ կոփի պատճառ են դառնում: Սակայն պետք ե ասել վոր թըռչունների վորձերի մըցումը ավելի մեղմ բնավորություն և ունենում: հաճախ վորձերն ամուսիններ են ձեռք բերում վոչ թե կոպիս ույժի ոգնությամբ, այլ ավելի նուրբ միջոցներով:

Այդ միջոցներից ամենալիմավորներն են յերերն ու «սիրային ցույցերը»: Գիտնականների կարծիքով՝ թոչունների յերզը յերկու նպատակ ունի. մեկը՝ ծառայում ե լոկ վորպես զվարձություն. բազմաթիվ դիտողություններ ցույց են տալիս, վոր թոչունները յերգեր շատ են սիրում և լավ յերգերը լսում են խորին ուշագրությամբ:

Բացի դրանից թոչուններն աշխատում են յերգով զբավել զմայլեցնել եզերին: Այդ պարզ յերկում գով զբավել զմայլեցնել եզերին: Այդ պարզ յերկում ե նրանից, վոր թոչուններն ամենից շատ յերգում են «սիրո շրջանում», այսինքն յերբ նրանցից զույգեր են կազմվում:

Յերգողները համարյա բացառապես վորձերն են ինում, վորովհետև նրանք են մրցում եզերի համար: Վորձերն աշխատում են գրավել եզերի ուշադրությունն իրանց յերգերով: Ինչպես վոր կաթնասունների շըրջանում ամենաուժեղ վորձերն են հաղթում, այնպեսի թոշունների շրջանում հաճախ հաղթությունը տանում են ամենաընտիր յերգիչները: Բեխշտեյնը, վոր յերկար ժամանակ ուսումնասիրել է թոշունների սովորությունները, պատմում է, վոր գեղձանիկի եզը միշտ ընտրում է ամենալավ յերգող վորձին:

Այդ եպատճառը, վոր մինչդեռ կաթնասունների շրջանում սիրայի ընտրությունը ջոկում է ամենաուժեղ վորձերին, թոշունների մոտ նա ջոկում է ամենաընտիր յերգիչներին: Սիրային ընտրությունը, յերկար ժամանակ գործելով այդ ուղղությամբ կատարելագործվել է թոշունների յերգը:

Թոշունների վորձերը «սիրո շրջանում» վոչ միայն յերգում են, այլև հաճախ տարորինակ շարժումներ են անում եզերին դուր դալու համար: Միքանի տեսակ թոշուններ «սիրային ցույցեր» անելու համար ժողովում են վորեն հարթ տեղում, ուր վորձերը վազվզում են, խաղում են, իսկ եզերը հեռու կանգնած մեծ ուշադրությամբ հետեւում են խաղերին:

Ավտրալիայում chlamydeara կոչված թոշունները սիրային խաղերի համար առանձին սրահներ են շինում գետնի վրա և գեղեցիկ գույնզգույն փետուրներով, տերևներով և խեցիներով զարդարում են: Յերբ սրահները պատրաստ են լինում, վորձերն սկսում են երանց ծիծաղաշարժ խաղերը:

«Սիրային զրույցներ» անելու ժամանակ վոր-

ձերը չեն մոռանում եզերին ցույց տալու նաև իրանց փետուրների գեղեցկությունը: Ամենքը գիտեն, վորշատ թոշուններ կան հիանալի գույնզգույն փետուրներով զարդարված:

Հատ մեծի մասին շքեղ զարդարված են լինում միայն վորձերը, իսկ եզերն ընդհակառակը՝ շատ հասարակ փետուրներ են ունենում: Դիտողությունները հաստատում են, վոր բռչուների զարդարանքը կապ ունի սիրո զգացմունքի հետ: Ահա միքանի ժամաներ:

Պոլիպլեկտոնի թոշունի վորձը հիանալի փետուրներ ունի, յերբ նա սկսում է սիրային խաղերը, ամենից առաջ բաց ե անում յուր սքանչելի թեզերը եզերի առաջ: Գրտնականների պատմելով պոլիպրեկտոնն այդ գործողությունը կատարելիս այնպես է զասավորում յուր փետուրները, վոր եզերը կարողանան նկատել և գնահատել նրանց գեղեցկությունը:

Աղամիսու կրծքի փետուրները, ինչպես հայտնի ե, բավական գեղեցիկ են: «ամենքը տեսած կը լինեն, թե ինչպես վորձը, սիրային ցույցերի ժամանակ փետուր ե յուր կուրծքը, վորպեսզի նկատելի դառնա փետուրների ամբողջ գեղեցկությունը», — ասում է Դարվինը:

Մի ուրիշ տեսակ աղամիսի ել շատ գեղեցիկ թեզեր ունի, իսկ նրա կուրծքը գեղեցիկ չե, դրա համեմատ վորձերը եզերի առաջ չեն փքում իրանց կուրծքը, այլ բաց են անում հօվհարի նման իրանց շքեղ թեզերը:

Հենվելով այդ տեսակ փաստերի վրա, Դարվինն ասում է: «Ամեն տեսակ թե մշտական և թե ժամանակավոր, զարդարանք վորձերը ցույց տալիս պճառամիրությամբ և ինչպես յերեւում ե, զարդարանքը

ծառայում ե եգերին գրգռելու, զմայլեցնելու կամ հիացնելու:»*)

Այս հանգամանքը, վոր վորձերն աշխատում են «պճնասիրությամբ» ցույց տալ եգերին իրանց փետուրների գեղեցկությունը և եգերն ել խորին ուշագրությամբ դիտում են վորձերի շքեղ զարդարանքը, այդ բոլորը ցույց ե տալիս, վոր քոչուներն ընդունակ են զարդարանքի գեղեցկությունը զնահատել. ուրեմն երանք նաշակ յեկ երեսիքան զգացմունք ունեն:

Այս առիթով Դարվինը հետեւյալն է ասում. «Առհասարակ կարծեմ թուչուններն ամենաեսթետիքական կենդանիներն են (բացի, հայտնի բան և, մարդուց) և նրանց ճաշակը, գեղեցկության վերաբերյալ, շատ մոտ ե մեր ճաշակին: Դրա տպացույցն այն հրճվանքն ե, վոր մեղ պատճառում և թուչունների յերգը և այն հանդամանքը, վոր մեր լուսավորված և թե վայրենի կանայք իրանց գլուխը զարդարում են թուչունների փետուրներով...»:

Թուչունների եգերը շքեղ զարդարանք և յերգեր սիրելով, յերկար տարիների ընթացքում իրանց համար ընտրել են շարունակ շքեղ զարդարած կամ լավ յերգող վորձերին և այդպիսով գլխավորապես գեղեցիկ ու լավ յերգող վորձերն են կարողացել տիրել եգերին և նոր սերունդներ առաջացրել:

Հասկանալի բան ե, վոր այս պայմաններում ավելի ու ավելի կը կատարելագործվեյին գեղեցիկ վորձերը (կամ լավ յերգիչները). մինչդեռ եգերը, վորոնցից ընտրություն չի կատարվել, կը մնային անփոփոխ և չզարդարված:

*) Дарвин—Происхождение человека и палеовой набор.

IX

ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ՀՈԳՈՒՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԵՌԻԱՅԻ

Յերկրաբանական փաստեր: Մարմարակազմական և սաղմաբանական փաստեր: «Անպետք» գործարաններ:

«Տեսակների ծագումը» աշխատության վերջում Զ. Դարվինը նորից վերադառնում և զարգացման թեորիային: Նա կարծես վախենալիս լինի, թե մի գուցե ընթերցողը գեռ ելի տատանման մեջ լինի յերկու հակառակ թեորիաների հանդեպ: Այդ պատճառով նա նորից բազմաթիվ փաստեր և բերում հոգուտ զարդարան թեորիայի, հոգուտ եվոլյուցիայի:

Առաջ կանգ ե առնում Դարվինը յերկրաբանական (գեոլոգիական) փաստերի վրա: Հայտնի յե, վոր յերկրագնտի կեղել միանգամից չի կազմվել, այլ բյուրավոր տարիներ առաջ կազմվել են կեղեի ամենասորին շերտերը, հետո հաջորդաբար կազմվել են կեղեի վերտերը: Ուրեմն կեղեի ամենախոր շերտերն ամենահինն են, դրանց վրա գտնվում են համեմատաբար ավելի նոր ժամանակներում կազմված շերտերը:

Այդ շերտերի համեմատ յերկրագնտի կեղեի պատճեյունը բաժանում են չորս երայի, իսկ յուրաքան-

չյուր երա բաժանվում է շրջանների. Երաները կոչվում են. նախնական կամ «արխելիք», նին կամ «պալեոզոյան», միջին կամ «մեզոզոյան» յեվ նոր կամ «կայնոզոյան»: Յերկրաբանների կարծիքով՝ յուրաքանչյուր յերկրաբանական երան շարունակվել է միլիոնակոր տարիներ:

Վերին աստիճանի նշանավոր ե այն հանգամանքը, վոր ինչպես ասեցինք վեցյերորդ գլխում, յերկրագնտի կեղեի շերտերում պահպանվել են կենդանիների և բույսերի քարացած մնացորդները կամ, ինչպես ասում են յերկրաբանները. հանածոները (fossiles, Առօպամություն): Գիտնականները հանել են զանազան շերտերից բազմաթիվ այդպիսի քարացած մնացորդներ:

Հասկանալի յե, վոր բոլոր շերտերի հանածոները միաժամանակ չեն գոյացել. ամենաստորին (հին) շերտերում գտնված հանածոները գոյացել են շատ հին ժամանակներում յեղած կենդանիներից և բույսերից, այսինքն պալեոզոյան երայում յեղած որդանիզմներից *), միջին շերտերում պահպանվել են հետագա ժամանակների - մեզոզոյան երայի որդանիզմների մնացորդները, իսկ նոր ժամանակների (կայնոզոյան երայի) կենդանիների երույսերի քարացած մարմիններ գըտնված են յերկրագնտի կեղեի վերին (նորագույն) շերտերում:

Նշանավոր ե այն հանգամանքը, վոր յերկրագընտի կեղեի ամենահին շերտերում ամենակին չեն գտնված բարդ կազմություն ունեցող որդանիզմների մնացորդներ համարա չեն մնացել:

*) Նախնական (արխելիք) երայից որդանիզմների մնացորդներ համարա չեն մնացել:

ներ: Պալեոլոյան (հին) երայի յերկրորդ կիսում արգեն յեղել են ամենացածր վողնավոր կենդանիները, իսկ մեզոլոյան և կայնոզոյան շերտերում գտնված են բարդ կազմություն ունեցող որդանիզմների մնացորդները:

Առասարակ՝ կեղեվի սուրին շերտերից սկսած վօրին ավելի վեր բարձրանանե, այնուան ավելի բարդ կազմուրյուն ունեցող որդանիզմների կրիսնդիպենեն:

Այդպիսով կեղեւի ստորին (հին) շերտերում ամենին չկան վողնավոր կենդանիները, նրանց տեղը ըլունում են շատ մանր և պարզ որդանիզմներ: Յեթև այդ հին շերտերից անցնենք ավելի բարձր շերտերին, նըրանց մեջ կրգտնենք բացի պարզ որդանիզմներից նաև ձկների հարացած մնացորդներ, իսկ մյուս վողնավորները բացակայում են այդ շերտերում: Ավելի բարձր շերտերում յերկրաբանները գտել են բացի ձկներից նաև յերկակենցաղ կենդանիների մնացորդներ, իսկ ավելի ևս բարձր գտնվել են նաև սողունների ու բըռչունների հանածոներ: Վերջապես պեղումներ անելով կեղեւի ամենավերևի շերտերում, յերկրաբանները, բացի վերոհիշյալներից, գտել են նաև կարնասունների և նույնիսկ մարդու քարացած մնացորդներ:

Հայտնի ե, վոր կաթնասուն կենդանիները բաղկացած են բազմաթիվ գասակարգերից և տեսակներից, դրանց մեջ կան համեմատաբար թե՛ պարզ և թե՛ բարդ կազմություն ունեցողներ: Յերկրաբանական հետազոտությունները ցույց են տալիս, վոր կաթնասունների բոլոր գասակարգերը յերկրագնդի վրա միաժամանակ չեն առաջացել. առաջ յերկան են յեղել ամենապարզ կազմություն ունեցող կաթնասուններ, հետո պարկա-

վոր կաթնասունները (marsupiaux) և վերջապես ամենաբարդ կազմություն ունեցող կաթնասունները և ապա մարդը.

Նույն յերեսույթը կընկատինք, յեթե զննենք զանազան շերտերում մնացած բույսերի մնացորդները:

Ստորին շերտերում գտնված եր միմիայն սպորտու բույսերի մնացորդներ, իսկ ձաղկատու բույսերը բացակայում են այդ շերտերում: Ընթիրոցողն անշուշտ հիշելիս կըլինի, վոր սպորտու բույսերն իրանց կազմվածքով շատ ավելի պարզ են՝ համեմատած ծաղկատու բույսերի հետ: Ամենասորին՝ շերտերում գտնված են ամենապարզ սպորտու բույսերը—ցրիմուսները (alques, водоросли), ավելի բարձր շերտերում—պտերներ կոչված (fougères, папоротники) սպորտու բույսերը, ավելի ևս բարձր—գիտնականները գտել են մերկասներմ (ասդատերել): Բույսերի մնացորդները:

Մերկասերմ բույսերը բուսական թագավորության յերկու մասերի—սպորտու և ծաղկատու բույսերի կապող ողակն են կազմում: Այդ շերտերից վերև գտնվել են ծաղկատու բույսերի պարզ ներկայացուցիչները—միաւորի բույսերը: Վերջապես կեղկի նոր շերտերում գլունվել են ծաղկատու բույսերից ամենաբարդ կազմություն ունեցողները—յերկօսիլ բույսերը *):

Ի՞նչ են ցույց տալիս այդ փաստերը: Ինչու ամենաին շերտերում գտնված են միմիայն ամենապարզ որգանիզմները, իսկ վերևի շերտերում՝ բարդ որգանիզմները:

Վերոհիշյալ փաստերից անխուսափելիորեն հետե-

*) Эрнст Геккель—Трансформизм и Дарвинизм.

վում և այն յեզրակացությունը, վոր ամենահին ժամանակներում—Պալեոզոյաներայում գյուրլուն են ունեցել միայն ամենապարզ կազմություն ունեցող կենդանիներն ու բույսերը—զիսավորապես անվաղնավոր կենդանիները յեվ սպորտու բույսերը, միջին—մեզոզոյան երայում ապրելիս են յեղելի ավելի բարդ որգանիզմներ, իսկ նոր (կայնոզոյան) երայում առաջ են յեկել ամենաբարդ կազմուրյուն ունեցող բույսեր, կենդանիներ յեվ մարդ:

Թող ընթերցողն ինքը դատէ, թէ վերոհիշյալ փաստերը վոր ուսմունքն են հաստատում—տեսակների «փոփոխման», թէ «անփոփոխականության» թերթիան: Զարգացման թերթիայի հակառակորդները—ժորժ Կյուվիյեն և նրա համախոնները պնդում եյին, վոր թէ պարզ և թէ բարդ կազմություն ունեցող որգանիզմներն առաջացել են միաժամանակ և անփոփոխ հասել են մերժամանակներին, մինչդեռ յերկրաբանական փաստերը կատարելապես հակառակ են այդ տեսակետին և հաստատելապես հակառակ են զարգացման կամ առաջադիմության ուսմունքը: Չե վոր վերջին ուսմունքի պաշտպանները—եվոլյուսիոնիստները նույնպես պնդում են, վոր ամենահին ժամանակներում յեղել են միայն ամենապարզ որգանիզմները, վորոնցից հետագա ժամանակներում առաջացել են ավելի բարդ և կատարելազործված տեսակներ:

Մարմնակազմական և սաղմնաբանական փաստերը նույնչափ համոզիչ են, վորքան և յերկրաբանական փաստերը, ժողոված բազմաթիվ մարմնակազմական և սաղմնաբանական փաստերը բոլորին անբա-

մունքի տեսակետից և միենույն ժամանակ զրանք հեշտությամբ բացարկվում են առաջադիմության թեորիայի ոգնությամբ: Որինակ՝ յեթե ընթերցողը տեսնի և համեմատի մարդու, ձիու, կովի, շան և կատվի կը մտիքները, նրանց միջև զարմանալի նմանություն կրտսնի, և զրանց կմախքները նման են վոչ միայն ընդհանուր գծերով: մարդու կմախքի համարյա յուրաքանչյուր վոսկը համանմանը կարելի է գտնել մյուս կենդանիների մեջ:

«Մարդու ձեռքը, վոր ծառայում ե վորևէ բան բըռնելու, խլուրդի բարը, վորով նա փորում և գետինը, ձիու վոյքը, ծովակովի բարը և չղջիկի թեվը *)»—բոլորն ել կազմված են միենույն վոսկորներից՝ միակերպ դասավորված: սրանից ել հետաքրքիր բան կարող ե լինել—ասում և Դարվինը «Տեսակների ծաղումը» աշխատության մեջ:

Վերոհիշյալ կենդանիները նման են իրար վոչ միայն կմախքներով, այլև մկաններով, ներքին գործարանների կազմվածքով ևայլն: Նեանությունն այնքան մեծ է, վոր զիանականներն այդ տարրեր կենդանիների համանման մասերին միենույն անուններն են տը-

*) Համեմատական մարմնակազմության մեջ այդպիսի գործարանները, վորոնք՝ թե ծագումով և թե կազմվածքի ընդհանուր պլանով, համապատասխան են իրար, թեև տարրեր պաշտոններ լինելուն կատարելու, կոչվում են հոմոլոգներ, իսկ այն գործարանները, վորոնք միատեսակ դեր են կատարում, թեև տարրեր ծագում ունեն, կոչվում են անալոգներ: Որինակ՝ մարդու ձեռքը, խլուրդի թաթը, չղջիկի թեվը—հոմոլոգներ են:

վել: Ով ուսումնասիրել և միայն մարդու կմախքը, նա արգեն դիտենակ շան, կապիկի, կատվի և կովի կմախքների կազմությունը, յեթե վերջինները մինչեւ անգամ տեսած չլինի:

Ավելի ևս մեծ նմանություն կը գտնենք վերոհիշյալ կենդանիների մեջ, յեթե համեմատենք նրանց սաղմերը:

«Կաթնասունների, թռչունների, մողեսների և ոձերի սաղմերն ամենասկզբնական շրջանում չափազանց նման են իրար թե ընդհանուր տեսքով և թե իրանց մասերի զարգացման ձևով: Նմանությունն այն աստիճան մեծ է, վոր հաճախ միայն մեծությամբ կարող հնաք զանազանել», ասում ե հոչակավոր եմբրիոլոգ*):Կարլ Ֆոն-Բերը,

Նույն հեղինակը պատմում է թե յուր մոտ գըտնված մի անոթում կային յերկու սաղմեր և ինքը մոռացել եր այդ անոթին կպցնել սաղմերի ծագումը վորոշող մակազիր, ուստի հետո անհնարին յեղավ վորոշել, թե դըանք ո՞ր կենդանիների սաղմերն են:

Ֆոն Բերն ավելացնում է թե՝ «մողեսների և կաթնասունների վոանները, թռչունների վոտներն ու թեփերը և մարդու ձեռքերն ու վոտները բոլորն ել ըսկզբումը միենույն հիմնական ձևն են ունենում»:

Ի՞նչ ե նշանակում այս բոլորը, ի՞նչպես պետք ե բացարել այս տարրինակ յերկութները: Ի՞նչ ե պատճառը, վոր այդքան տարրեր կենդանիներ միակերպ կազմված մարմիններ ունին: Ի՞նչու նրանց սաղմերն այնքան նման են իրար, վոր զանազանելն անգամ դըժ-

*) Եմբրիոլոգիա նշանակում ե սաղմերի (եմբրիոն) վերաբերյալ զիտություն կամ սաղմենաբանություն:

վար ե: Յեթի հիրավի այդ կենդանիներն ստեղծվել են առանձին-առանձին և նրանց մեջ ազգակցական կապ չկա, ինչպես առում եյին զարգացման թեորիայի հակառակորդները, հապա ինչպես բացատրել այն հանդամանքը, վոր նրանց վոտներն ու թաթերը պարունակում են միևնույն վոսկորները միակերպ դասավորված:

Զարգացման թեորիայի հակառակորդներն անդոր են պատասխանելու վերոհիշյալ հարցերին, մինչդեռ նույն հարցերը զարմանալի հեշտությամբ բացատրվում են զարգացման թեորիայի ոգնությամբ: Եվուրուցիոնիստների կարծիքով՝ կապիկը, կովը, ձին, մարդը և մյուս կաթնասունն կենդանիներն առանձին-առանձին չեն ստեղծվել, այլ առաջ են յեկել մի ընդհանուր նախահորից, ուրեմն նրանք կապված են ազգակցական կապով: Պարզ ե, վոր իրրե մի ընդհանուր ծագումն ունեցող կենդանիներ, նրանք իրանց կազմվածքում կունենան համանման մտած, վորոնց ժառանգել են իրանց ընդհանուր նախահորից: Հասկանալի յե, թե ինչու տարբեր կաթնասուններն ունեն միակերպ կազմված մարմիններ, թե ինչու նրանց սաղմերն այն աստիճան նման են, վոր անհնարին և զանազանել մեկը մյուսից:

Հասկանալի յի նույնպես, թե ինչու այժմ այնքան մեծ նշանակություն են տալիս սաղմերի նմանությանը. Դարվինի կարծիքով՝ զանազան կենդանիների սաղմերի նմանությունը ցույց է տալիս, վոր այդ կենդանիներն ունին մի ընդհանուր ծագում: Այդ հիման վրա այժմ, յերբ կամենում են վորոշել զանազան կենդանիների ծագման խնդիրը, ուսումնասիրում են նրանց սաղմերը. վորքան ել տարբեր լինեն կեն-

դանիները, այնուամենայնիվ նրանք կապված են ազգակցական սերտ կապով և ունեն մի ընդհանուր ծագում, յեթե սրանց սաղմերը նման են իրար կազմվածքով:

Կան շատ կենդանիներ, վորոնց մարմնի մեջ, բացի անհրաժեշտ զործարաններից, կան նաև միքանիքովովին անպետք գործարաններ: Ահա միքանիքի բինակներ.

Խլուրդն ապրում է գետնի մեջ բոլորովին մութը բներում, ուր ի հարկե աչքերի կարիք չկա. յեթե զիտենք խլուրդի գլխի կազմությունը, կըկարծենք, թե նա աչքեր չունի, ուսկայն յեթե լավ զննենք կընկատենք, վոր խլուրդն իսկապես ունի յերկու շատ փոքր աչքեր, վորոնք բոլորովին ծածկված են բրդով, ուստի անկարող են վորեն ծառայություն մատուցանել խլուրդին: Այդպիսով պարզ ե, վոր խլուրդի աչքերը բոլորովին անպետք են:

Ոպերին կոչված թռչունն այնքան փոքրիկ թերթեր ունի, վոր անկարող և թռչել նրանց ոգնությումը, յերբեք ել ապահերիքսը չի թռչում: Պարզ ե, վոր այդ թռչունի թերերն անպետք են նրա համար: Ապահերիքսի նման ջայլամն ել շատ փոքրիկ թերեր ունի, նա ել անկարող և թռչել:

Նույնը նկատվում է նաև ուրիշ կենդանիների շրջանում, բազմաթիվ միջատներ ունեն չափազանց փոքրիկ թերեր, ուստի նույնպես անկարող են թռչել:

Նշանափոր ե նաև հետևյալ գետքը. ինչպես հայտնի յե թռչերով շնչող կենդանիները յերկու թռք են ունենում— աջ և ձախ, բացառություն են կազմում

ոձերը և ոճանման մովեսները, վորոնք միայն մեկ զարգացած թոք ունեն, վորով շնչում են Ոձերի մյուս թոքը մնում և չզարգացած, ուրեմն և բոլորովին անպետք ե նրանց համար:

Եռյնպես անպետք են մարդու կմալխը պոչային մասը, կույր աղիքի վորդածե հավելվածքը ևայլն: Այսպիսի որինակներ շատ կան, սակայն բավականանաք վերոհիշյալներով և տեսնենք, թե ինչպես պետք ե բացատրել այդ յերեսոյթները:

Ի՞նչ ե պատճառը, վոր խլուրդն աչքեր ունի, թեև անկարող և նրանց գործածել, կամ ինչպես պետք ե բացատրել այն հանգամանքը, վոր ապտերիքսը, ջայլամը և շատ միջատներ այնքան փոքրիկ թերել ունեն, վոր անկարող են նրանց գործածել:

Կարծես բնությունը սիսակել է, վոր այդ կենդանիներին տվել ե բոլորովին անպետք գործարաններ: Սակայն տեսեք, թե ինչպիսի բնական բացատրություն և տալիս այդ տարորինակ յերեսոյթներին զարդացման թերթիան.

Եվլոյուցիոնիստների կարծիքով՝ խլուրդը մյուս վողնափորների հետ միասին ծագել է մի ընդհանուր սախահորից, վորից ժառանդաբար մյուսների նման ստացել է յերլու աչք: Առաջ նա ոգավելիս ե յեղել յուր աչքերից, վորովհետեւ մյուս վողնաշավորների նման ապրելիս ե յեղել լույս աշխարհում և վոչ թե գետնի տակ: Սակայն հետագա ժամանակներում նրա կյանքի պայմանները փոխվել են և խլուրդը դարձել ե ստորյերկրյա կենդանի: Այդ ժամանակից սկսած խըլուրդը դադարել ե յուր աչքերը գործածել, վորոնք անգործածությունից նվազել են և անպետքացել:

Ընդհանուր որենք ե, վոր յուրաքանչյուր գործարան, յերբ այլես գործ չի ածվում, չի վարժվում, կամաց-կամաց նվազում ե և վերջիկերջո բոլորովին անհետանում:

Այժմ անցնենք ապտերիքսին և ջայլամին. ըստ զարգացման թերթիայի՝ գրանք ել մյուս թոշունների հետ միասին մի ընդհանուր ծագումն են ունեցել և առաջ զարգացած թերեր են ունեցել: Սակայն հետագաժամանակներում ապտերիքսի և ջայլամի կյանքի պայմանները փոխվել են և նրանք սկսել են ուշուց թթուչել, ուրեմն սկսել են ավելի քիչ գործածել իրանց թերզերը, վորոնք, վերոհիշյալ որենքի համաձայն, նվազելու անպետքացել են և իրանց այժմյան տեսքն ստացել:

Այդպիսով բոլոր «անպետք» գործարաններն առաջ պետքական են յեղել, հետո՝ կյանքի պայմանների փոխվելու պատճառով, ավելորդ են դարձել, մատնվել են անգործության և հետզհետե նվազել ու անպետքացել են:

Ակնարկ ձգելով բնության մի շարք յերեսոյթների վրա (յերկրաբանական, մարմնակազմական, սաղմաբանական յերեսոյթներ (անպետք) գործարաններ), մենք տեսանք, վոր գրանք բոլորն ել հեշտ բացատըրվում են զարգացման թերթիայով և միենույն ժամանակ նրանք հակասում են տեսակների «անփոփոխական» ուսմունքին:

Պարզ ե ուրեմն, վոր զարգացման թերթիան միակ ուղիղ ուսմունքն ե, վորովհետև նա տալիս ե բնության բազմատեսակ յերեսոյթներին բնական և համապիչ բացատըրություններ:

X

ՄԱՐԴ

Մարդը բացառություն չի կազմում ընդհանուր որենքից. նա յուր կազմվածքով, մտավոր ընդունակություններով և զգացմունքներով սերտ կերպով կապված և կենդանական աշխարհի հետ և արդյունք և ընդհանուր եվլյուցիայի: Հիմնական բիոգինետիկ որենքը ճիշտ և նաև մարդու վերաբերմամբ: Պիթեքանթրոպուս, նյանդերտալի և չեյդելերգի մարդ: Ռողեզյան մարդ:

Մարդու ծագման և սեռային ընտրությանը Դարվինը նվիրել է յերկու հատոր, վորոնց մեջ, ըստ յուր սովորության՝ զարմանալի համեմերությամբ հետազոտում ու վերլուծում և նա մարդու ծագմանը վերաբերյալ հարուստ նյութերը: Դարվինը կանգ և առնում նախ մարդու ֆիզիքական կազմվածքի վրա:

«Ամենքին հայտնի յե, ասում են նա, վոր մարդը մյուս կաթնասունների հետ կազմված և միանույն ընդհանուր ձևով և որինակով: Նրա կմախքի բոլոր վոսկը ըները համանման են կապիկի, չղջիկի կամ փոկի համապատասխան վոսկըներին: Նույնը նկատվում են նրա (մարդու) մկանների, նյարդերի, արյան անոթների և ներքին գործարանների վերաբերմամբ:

Ուղեղը, զործարաններից կարևորագույնը, հետեւում ենույն որենքին, ինչպես ապացուցել են Հեռավորին և ուրիշները... Վյուլպյանը նկատում է, վոր շատ չնշին են այն տարբերությունները, վորոնք գոյություն ունեն մարդու և բարձր կազմություն ունեցող կապիկների միջև: Կարիք չկա այս առիթով միսիթարել մեզ իլլյուզիաներով...»

Մարդիկ նման են կաթնասուններին, մանավանդ կապիկներին վոչ միայն իրանց կազմվածքով, այլև սաղմերով, սովորություններով և հակումներով: Սաղմերի նմանությունն այնքան մեծ է, վոր հաճախ անհնարին և լինում, ինչպես վերև տեսանք, նկատել մարդու և մյուս կաթնասունների սաղմերի զանազանությունը: Կապիկները հաճախ յենթակա յեն լինում նույն հիվանդություններին, վորոնց յենթակա յեն մարդիկ: Դեղերը կապիկների վրա ունին նույն ներգործությունը ինչ վոր մարդու վրա:

Մարդկանց նման՝ կապիկները սիրում են թեյ, սուրճ, վոգելից ըմպելիքներ, սիրում են ծխել ծխախոտ, հաճախ արբում են խմելով գինի կամ ողի:

«Ինձ թվում ե, ասում ե Զարլլ Դարվինը, վոր կատարելապես ապացուցված է, թե մարդը և բարձր կազմություն ունեցող կենդանիները, մանավանդ պրիմատներն ունեն վորոշ թվով ընդհանուր բնագիներ: Երանք բոլորն ել ունեն միատեսակ զգացմունքներ, ձգտումներ և զգայնություններ, միատեսակ կրքեր, հոգեկան շարժումներ (նույիսկ ամենաբարդ արտահայտությունները): Թե մարդիկ և թե կենդանիները ընդունակ են արտահայտելու զարմանք և հետաքրքրություն, ունեն հիշողություն, յերևակայություն, քրություն, ունեն հիշողություն, թեև խիստ տարբեր չափերով...»:

Մի շարք նշանավոր բիոլոգների պատմելով՝ կապիկները հաճախ արտահայտում են զարժանալի սեր, խանդոտոթյուն, վրեժինդղություն, լիելք, մայրական սեր, եսթետիքական զգացմունքներ, սեր գեղի վոչ միայն սեփական ձագուկները, այլև գեղի ոտարներինը ևայլն:

Ակներեւ եւ, վոր մարդ թե Ֆիզիքական կազմվածով յեվ թե մտավոր ու բարոյական ընդունակուրյուններով կապված եւ սեր ազգակցական կապերով կապիկների յեվ մուս կարնասունների նես: Երնստ Հեկկելը, խոսելով այդ մասին, իրավացի նկատում եւ, վոր «մարդի ամենազարգացած վոլնավոր կենդանին ե...»

Սակայն չպետք եւ մոռանալ, վոր մարդու զարգացումը, եվոլյուցիան կատարվել եւ աստիճանաբար հազարավոր, գուցե և միլիոնավոր տարիների ընթացքում և մարդու նախանյայերի թվում կան վոչ միայն կապկանման կենդանիներ, այլև ավելի ցածր վողնավոր կենդանիներ, նույնիսկ ծովային կենդանիներ:

Ուրեմն մարդը, չյուս կենդանիների նման, յուր եվոլյուցիայի ընթացքում անցել եւ շատ աստիճաններ, բազմաթիվ շրջաններ: Մարդկային ցեղերի հաջորդական զարգացումը կամ, ինչպես ասում են, կենսաբաները, մարդկային ցեղերի Ֆիլոգենեզը շարունակություն եւ կազմում կենդանիների Փիլոգենեզի, նույնպես մարդու անհատական զարգացումը կամ ոնտունեցինքինը*):

*) Ֆիլոգենեզը կենդանական և բուսական տեսակների կամ դասակարգերի հաջորդական զարգացման պատմությունն է ներկայացնում, իսկ ոնտունեցի՝ յուրաքանչյուր կենդանու անհատական զարգացման պատմությունը:

Հստ Երնստ Հեկկելի՝ յուրաքանչյուր կենդանի (ավելի նիւթ երա սաղմը) յուր անհատական զարգացման (ոնտունեցի) բնբացքում անցնում է նույն աստիճաններով, վորոնցով անցել են տեսակները կամ դասակարգերը, վորոնց նա պատկանում է:

Նույն գաղափարը երնստ Հեկկելը համառոտակի արտահայտեց հատեյալ կերպով. «Ոնտունեցի համառոտ կրնուրյուն եւ Ֆիլոգենեզի»: Այս հիմնական Բիոգենետիք որենքը ճշշտ եւ նման մարդկանց վերաբերմամբ. մարդու սաղմն ել յուր զարգացման ընթացքում անցնում եւ նույն աստիճաններով, վորոնցով անցել եւ մարդկությունը յուր զարգացման սկզբնական շրջաններից մինչև մեր ժամանակները:

Բացատրենք այդ սիստեմ. սաղմնաբանները նկատել են, վոր մարդու սաղմը յուր զարգացման սկզբնական շրջանում բոլորովին նման ե մյուս վողնավոր կենդանիների սաղմերին, հինգերորդ ամսում սաղմի պարանոցային մասում յերեան են գալիս քիմուխտային անցքեր, այսինքն այն գործարանները, վորոնք հարմարեցրած են ծովային կյանքին յեվ հատուկ են ծովային կենդանիներին: Միքանի ժամանակից հետո քիմուխտայի անցքերն անհետանում են, իսկ վեցերորդ ամսում մարդու սաղմը ծածկվում եւ բրդանման մացերով, վորոնցով սովորաբար ծածկված են լինում կարնասուն կենդանիները: Վերջապես այդ բուրդն ել անհետանում ե: Զարգացման վերջին շրջանում մարդու սաղմը շատ նման ե լինում կապիկների սաղմերին: Ի՞նչ են ցույց տալիս այդ փաստերը: Ինչու մարդու սաղմը վորոշ շրջանում սկսում եւ նմանվել ծովային կենդանուն, հետեւյալ շրջանում ել կաթնասուն կենդանիների նման ծածկվում ե բրդով:

Այդ փաստերն անբացատրելի յեն կյուվիյելիք տեսակետից, մինչդեռ հեշտ բացատրվում են զարգացման թերիայով. եվոլյուցիոնիստների կարծիքով՝ մարդուսաղմի նմանությունը ծովային կենդանու հետ ցույց ե տալիս, վոր մարդկությունը յուր զարգացման հին շրջանում այժմյան մարդկության նախահայրերը ծովային կենդանիներ են յեղել: Հետագա շրջանում մարդկանց նախահայրերը ցամաքի վրա յեն ապրելիս յեղել և ծածկված են յեղել բրդով, ինչպես կաթնասուն կենդանիները: Այդ պատճառով ե, վոր մարդու սաղմը վեցերորդ ամսում ծածկված ե լինում բրդանման մակերով. կարծես սաղմը զրանով հիշեցնելիս լինի մարդկության զարգացման համապատասխան շրջանը: Ինչպես նկատում ե ընթերցողը, մարդու սաղմի յուր զարգման ընթացքում իրով կրկնում ե մարդկային ցեղի անցած պատմության զլիսավոր մոմենտները: Դրանով ե բացատրվում, վոր այժմ ահազին նշանակություն են տալիս ահասասրակ բոլոր կենդանիների սաղմերի զարգացման պատմությանը: Այդպիսով յուրաքանչյուր անհատ սաղմային զարգացման ընթացքում կրկնում ե այն զլիսավոր ասիթինեները կամ մոմենտները, վորոնցով դարերի ընթացքում անցել ե ցեղը, դասակարգը...

Այդ նույն իմաստն ե պարունակում երնատ Հիկերի վերոհիշյալ այն խոսքերը, թե «ոնտոգենեզը» (անհատական զարգացումը) համառոտ կրկնություն ե «Փիլոգենեզի» (յեղի, դասակարգի զարգացման):

Այժմ անցնենք այն հարցին, թե կենդանական վրը իմբից կամ տեսակից ե առաջացել այժմյան մարդկային ցեղը, վոր գիտության մեջ կոչվում ե Հոմօ-

sapiens (բանական մարդ, разумный человек): Արդյոք առաջացել ե այժմյան «բանական մարդը» մի վորեկ մարդակերպ կապիկից—գորիլլայից, շիմպանզեյից կամ գիբրոնից, թէ մի այլ խմբից: Այս հարցը գեռ պարզված չե լիովին, միայն գիտնականների մեծամասնությունը թեքվում ե դեպի այն կարծիքը, վոր «բանական մարդը» չի առաջացել անմիջապես մի վորեկ մարդակերպ կապիկից, այլ մարդը կապիկների հետ միասին առաջացել են մի ընդանուր նախահայրից: Գիտությունը գեռ չափազանց աղքատ ե այս հարցին վերաբերյալ նյութերով, այդ պատճառով ել զժվարանում ե վերոհիշյալ հարցի լուսաբանումը:

Բայց եաւ նպաստ վորոշ փաստեր արդեն ժողովված են այդ ուղղությամբ, գետնի շերտերում գտնված են մնացորդներ այնպիսի մարդկանց, վորոնք շատ ցածր կազմվածք ունեն համեմատած ներկա բանական մարդու հետ, և միջին տեղն են բանում կապիկների և մեր ժամանակակից մարդու միջև:

1856 թվին Նեանդերտալում (Դյուսսելդորֆի մոտ) գտնվեցան տարրինակ մարդու մնացորդներ, վորոնք ցույց են տալիս, վոր «Նեանդերտալի մարդը» անհամեմատ ավելի բարդ կազմվածք ե ունեցել, քան կապիկները: Նույնանձան մնացորդներ գտնվել են Բելգիայում 1885—1886 թվականներին, Ավստրիայում 1895—1905 թվականներին: Նորագույն ժամանակներում Նեանդերտալի մարդու կմախքներ գտնվել են նաև Ֆրանսիայում: Այդ մարդու ճակատը չափազանց տափակ ե, իսկ հոնքերը դուրս ցցված: այդ մասերով նա ավելի նման ե կապիկին քան մարդուն, բայց գանգի մյուս մասերով և վոտների կազմությամբ նա նման ե

Ժարդու: 1907 թվին Հեյղելքերզի մոտ գտնվեցան մի ուրիշ տեսակ մարդու մնացորդներ: «Հեյղելքերզյան մարդը» ուներ անհամեմատ ավելի զարգացած ծնոտաներ, քան նեանդերտալի մարդը: 1890 և 1891 թվականներին Յեղենի Դյուրուան Յավա կղզու վրա պեղումներ անելիս գտավ «պիրեֆանբրոպուս» (Pithecanthropus erectus) կոչված կենդանու մնացորդները: «Պիրեֆանբրոպուս» խոսքը բառացի նշանակում է կապիկամարդ (Affenmensch, օբезյանօչելովեք) և ցույց է տալիս, վոր այդ կենդանին միջին տեղն է բռնում բանական մարդու և կապիկների մեջ: «Պիրեֆանբրոպուս» մարդու նման յերկվոտանի կենդանի եր, նրա գանգի ներքին ծավալը հավասար է 890 խորանարդ սանտիմենտրի, մինչդեռ մարդակերպ կապիկների զանգի ծավալը 500—600 խորան. սանտիմենտրից ավելի չե բարձրանում, Յեթև անցնենք բանական մարդու գանգի ծավալին, կընկատենք վոր ժամանակակից յերսպացիների տղամարդու գանգի ծավալը հավասար է մոտ 1560, իսկ կանանցը մոտ 1375 խորան. սանտիմենտրի:

Սակայն մարդկային վայրենի ցեղերում գանգի ծավալն անհամեմատ ավելի փոքր է լինում: Որինակ՝ վեղդա վայրենի ցեղի գանգի ծավալը հավասար է լինում 960 խոր. սանտիմենտրի, իսկ Բուշմենների մոտ այդ թիվը իջնում է մինչև 900 խոր. սանտիմենտրի,

Այդպիսով «Պիրեֆանբրոպուսի» գանգի ծավալը անհամեմատ ավելի մեծ էր, քան մարդակերպ կապիկներինը և մոտենում էր բանական մարդուն վայրենի ցեղերի գանգի ծավալին: «Պիրեֆանբրոպուս»-ի թե գանգի խոշոր ծավալը, թե ուղեղի կազմությունը. և

թե նրա յերկոտանի լինելն ապացուցանում են վոր Պիրեֆանբրոպուսը մարդ և յեղել, միայն բանական մարդուց ավելի ցածր կազմությամբ: Ներկա վայրենի ցեղերից Պիրեֆանբրոպուսին ամենից շատ նման են իրանց կազմվածքով Յելոն կղզու վրա ապրող վեղդաները:

Բացի վերոհիշյալներից գետնի մեջ գտնվել են նաև յերկու տարրեր տեսակ մարդու մնացորդներ—«Ռողեղյան մարդու» և «Եռանթրոպի»:

Այդպիսով ներկա բանական մարդու (homo sapiens) անխահայրեր համարվում են «Պիրեֆանբրոպուս», «Նեանդերտալյան» և «Հեյղելքերզյան» մարդը, «Եռանթրոպը» և «Ռողեղյան» մարդը: Պարզված չե դու, թե ինչ հաջորդականությամբ են առաջ յեկել վերոհիշյալ ցեղերը:

Ամփոփելով մեր ասածը մարդու մասին, պետք է նորից պնդենք, վոր անհնարին և վորևե սահման գնել մարդու և մյուս կենդանիների միջև, ընդհակառակը, մարդն անթիվ թեկերով կապված է որգանական աշխարհի հետ: Խոսելով այդ մասին պրոֆեսոր Ն. Մ. Կոխպովիչը հարց է տալիս, թե զարգացման սկզբունքներն արդյոք վերաբերում են նաև մարդկության:

«Արդյոք պիտի ընդունենք, վոր մարդը ևս նույնապիսի արդյունք է ելոլուցիցի, ինչպես և որգանական աշխարհի բոլոր մյուս ներկայացուցիչները: Այս հարցին յերկու պատասխան չի կարող լինել: Մնալով ընագիտության հողի վրա, մենք չենք կարող վորեն զգալի սահման քաշել մի կողմից մարդու, մյուս կողմից մնացյալ որգանիզմների միջև և կարծել թե սահման

մանի մի կողմում գործող Փակտորները կորցնում են իրանց ույժը սահմանի մյուս կողմում: Ներկա բնագիտության տեսակետով անմտություն և ստեղծել առանձին «մարդու թագավորություն»: Մեր գիտությունների ամբողջությունն ստիպում է մեզ նայել մարդու վրա, իբրև կենդանիների վորոշ խմբի ներկայացուցչի վրա»...*)

*) Н. М. Книпович—Курс общей зоологии, ч. II
№ 298.

XI

ՆՈՐ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Առարկություններ Դարվինի ուսմունքի գեմ: Դը-Ֆրիզի թեորիան: Մենդելիզմ: Նեոլամարկիզմ և Նեոդարվինիզմ:

Ինչպես վերև հայտնեցի, Դարվինի տեսությունն անթիվ քննադատությունների և առարկությունների առիթ ավեց: Միտք չունի թվել բոլոր առարկությունները, վորոնք արվել են սելեքցիոնիզմի հասցեյին, վորովճետև այդ առարկությունների մեծագույն մասն այժմ հնացել կորցրել ե յուր նշանակությունը: Միքանի խոսք ասենք միայն այն առարկությունների մասին, վորոնք այժմ ել հաճախ կրկնվում են միքանի գիտնականների կողմից:

Վոմանք, որինակ՝ առարկում են ասելով, վորդարվինիզմը, հիմնվելով որգանիզմների անհատական փոփոխականության սկզբունքի վրա, ամենակին չի բացատրում, թե ինչ պատճառների շնորհիվ են առաջ դալիս այդ փոփոխությունները:

Այդ առարկությունը միանգամայն ճիշտ է. Դարվինն իսկապես չշոշափեց փոփոխականության ծագման ինպիրը: Դարվինի սովորական դգուշությունն ստիպեց նրան խուսափել այդ բարդ խնդրից, մանավանդ վորդարվինիզմների զարգացման մեջ ալլորեմը

վճռելիս նա հարկադրված չեր անպատճառ պարզելու որդանիզմների փոփոխականության պատճառները, նա ցույց տվեց միայն, վոր բնական ընտրությունը ոգտավում և որդանիզմների փոփոխականությունից, պահպանելով ոգտակար առանձնահատկությունները և վոչնչացնելով վնասակարները: Իսկ այն հարցը, թե ինչ հանգամանքների շնորհիվ և առաջանում որդանիզմների անհատական փոփոխականությունը, վորքան ել վոր հետաքրքիր լինել այդ, այնուամենայնիվ անհրաժեշտ չեր զարգացման խնդիրը վճռելու համար:

Միքանի կենսաբաններ, ընդունելով հանդերձ դարվինիզմի հիմնական կիտերը, այնուամենայնիվ շեշտում եյին, վոր Դարվինը խիստ չափազանցացրել երբենական ընտրության և նամանավանդ սեռային ընտրության նշանակությունը: Նրանց կարծիքով՝ բնական ընտրությունը և սեռային ընտրությունն ունեն անհամեմատ ավելի սահմանափակ նշանակություն, քան կարծում եր Դարվինը: Նոր տեսակների ծագումը, ըստ այդ գիտնականների, կարող եր լինել վոչ միայն սելեկցիայի, այլև ուրիշ գործուների արդյունք—միջավայրի ազդեցության, գործարանների վարժեցնելուն և այլն: Փոքր ինչ ուշ մենք կը վերադառնանք այդ առարկությանը, իսկ այժմ անցնենք այն առարկության, վոր արեց հայտնի հոլլանդացի կենսաբան Հուգո Դը-Ֆրիզը:

Ներկա դարի սկզբին լույս տեսավ այդ գիտնականի յերկնատոր աշխատությունը «Մուտացիաների թեորիա» վերնագրով, վոր մեծ աղմուկ հարուցեց գիտության մեջ: Ինքը Դը-Ֆրիզը կարծում եր, թե յուր թեորիան, հակառակ լինելով դարվինիզմին, մեծ հար-

ված և տալիս վերջինին, իսկ նրա կողմանակիցներն ավելի և հեռու եյին գնում պնդելով, վոր Դը-Ֆրիզը թեորիայի շնորհիվ դարվինիզմը կորցնում է յուր նըշանակությունը:

Ծանօթանանք Դը-Ֆրիզի տեսության գլխավոր կետերի հետ:

Ցանելով յուր այգում օռնեթերա lamarkiana կոչված բույսի սերմերը և դիտելով առաջացած բույսերը, Դը-Ֆրիզը նկատեց, վոր նոր սերունդների մեջ, բացի սովորական անհատներից, կային ելի միքանիսները, վորոնք խիստ զանազանվում եյին նորմալ որինակներից: Միքանիսն այնքան փոքր եյին, համեմատած սովորականների հետ, վոր Դը-Ֆրիզը նրանց անգանեց գահան օռնեթերա, իսկ մյուսները չափազանց խոշոր եյին խոշոր տերեններով, ծաղիկներով, պտուղներով և սերմերով: Դրանց Դը-Ֆրիզն անվանեց հսկա-օռնեթերա gigas:

Հանկարծակի առաջացած, խիստ տարբերվող որինակները Դը-Ֆրիզն անվանեց «մուտացիա»: Ուրեմն օռնեթերա բույսի սերունդների մեջ յերբեմն յերեան են գալիս մանր սովորական փոփոխություններ («ֆլուկտուացիա»), յերբեմն ել խոշոր՝ հանկարծակի առաջացած փոփոխություններ («մուտացիա»): Հստ Դը-Ֆրիզի՝ նոր տեսակների ծագման խնդրում ամենամեծ նշանակություն ունեն «մուտացիաները», իսկ «ֆլուկտուացիաները» վոչ մի գեր այդ խնդրում չեն կատարում: «Տեսակները չեյին կարող առաջանար, առում և Դը-Ֆրիզը, անհատական փոփոխականության շնորհիվ, իրեկ արդյունք ընտրության, այլ նրանք ծագել են շնորհիվ հանկարծակի առաջացած փոփոխությունների»:

Այժմ հայտնի են բաղմաթիվ բույսեր, վորոնք նույնպես ընդունակ են «մուտացիաների», այսինքն նրանց սերունդների մեջ ել հանկարծակի առաջ են գալիս խիստ փոփոխված և տարբերվող անհատներ: Նույնիսկ պարզ կազմություն ունեցող բույսեր—սունդերը, բակտերիաները և միքանի ուրիշներն ընդունակ են «մուտացիաների»:

Նույնանման յերկույթներ նկատված են նաև կենդանիների շրջանում: Հանկարծակի առաջանում են խիստ տարբերվող անհատներ միջատների, միների և շատ ուրիշ կենդանիների մոտ:

Այդպիսով պարզ է, վոր «մուտացիան» սաստիկ տարածված յերկույթ և որգանական աշխարհում:

Դը-Ֆրիզի կարծիքով կենդանի եակների զարգացումը կատարվում է հետեւյալ կերպով.

Նախ անհրաժեշտ է, վոր որգանիզմների մեջ առաջնան մուտացիաներ (խոշոր փոփոխություններ), վորոնցից բնական, ընտրությունը գոյության կովի միջոցով ջոկում ու պահպանում է ամենաընտիր անհատներին:

Ուրեմն Դը-Ֆրիզն ընդունում է Դարվինի հետեւյոյն կոփվը, և բնական ընտրությունը: Միակ տարբերությունը, վոր կա Դարվինի և Դը-Ֆրիզի տեսակետների մեջ, կայանում է նրանում, վոր Դը-Ֆրիզը հերքում է մանր անհատական փոփոխությունների նշանակությունը: Նրա կարծիքով՝ բնական ընտրությունն անկարող է ոգտվել սովորական մանր անհատական փոփոխությունների վերաբերյալ, թույլ, աստիճանական փոփոխությունների ծագման վերաբերյալ, թույլ, աստիճանական փոփոխությունների (ֆլուկտուացիա) և խոշոր թուչքների (մուտացիա) միջև—ըստնք միենույն պրոցեսի սահմաններն են»:

ըստ, վորոնք ժառանգաբար անցնում են ծնողներից սերունդներին:

Պետք է ասել, վոր մուտացիաները նորություն չելին Դարվինի համար. նա վոչ միայն գիտեր այդ յերկույթները, այլև ինքը ժողովել եր մուտացիաների շատ որինակներ: Դարվինին նույնպես հայտնի եր, վոր բնական ընտրությունը կարող է ոգտվել վոչ միայն խոշոր փոփոխություններից («մուտացիա»), այլև սովորական անհատական մանր փոփոխություններից («ֆլուկտուացիաներ»):

Պետք է ասել, վոր այժմյան գիտության մեջ տիրում է այն կարծիքը, վոր Դը-Ֆրիզի թեորիան վոչ միայն չի հակասում դարվինիզմին, այլ ընդհակառակը՝ լրացնում է նրան, մանավանդ վոր Դը-Ֆրիզը նոյնպես ընդունում է բնական ընտրության և գոյության կովի մեծ նշանակությունը: Առհասարակ բիոլոգներից շատերը թեքվում են դեպի այն կարծիքը, վոր հիմնական տարբերություն չկա «ֆլուկտուացիաների» և «մուտացիաների» միջև, վոր «մուտացիաները» «ֆլուկտուացիաների» խիստ արտահայտված և ընդգծված որինակներն են և վոր առհասարակ «մուտացիաների» շուրջը հարուցած աղմուկն անհիմն է:

Խոսելով այդ մասին հայտնի բիոլոգ Տոուերն ավելացնում է. «վոչ մի արմատական տարբերություն չկա՝ անսակների ծագման վերաբերյալ, թույլ, աստիճանական փոփոխությունների (ֆլուկտուացիա) և խոշոր թուչքների (մուտացիա) միջև—ըստնք միենույն պրոցեսի սահմաններն են»:

Դը ֆրիզի ծառայությունը կայանում է նրանում վոր յուր հետազոտություններով նա գրավեց կենսաբանների ուշադրությունը մուտացիաների վրա և վորոշ չափով զարկ տվեց բազմաթիվ նույնանման դիտողությունների և հետազոտությունների:

Մեզ արդեն հայտնի ե, վոր անցյալ դարի ըսկպրում հոչակավոր Փրանսիական կենդանաբան ժամարկն առաջարկեց յուր թերթիան որդանական աշխարհի զարգացման վերաբերյալ, Լամարկի ուսմունքը հիմնված եր յերեք գլխավոր կետերի վրա. առաջնը՝ Լամարկի կարծիքով այն գործարանները, վորոնք, որդանիվմի պահանջներին բավարարությունապու համար՝ հաճախ շատ են բանում և վարժվում, զարգածությունից ավելի են մեծանում յեվ ուժեղանում: Յերկրորդը, ըստ Լամարկի՝ այդ ձևով առաջացած անհատական փոփոխությունները ժառանգաբար անցնում են նոր սերունդներին և վերջապես այդ փոփոխությունների շնորհիվ առաջանում ե որդանիգմների նոր տեսակներ, ուրեմն և եվլուցիան:

Մենք գիտենք նույնպես, վոր Լամարկը կարծում եր թե որդանիգմները պարունակում են ներքին ձըգումն դեպի առաջադիմություն:

Վորովհետև գործարանների վարժեցնելը չի կարող տեղի ունենալ բույսերի մոտ, այդ պատճառով Լամարկը բույսերի վերաբերմամբ ընդունում է այլ սկզբունք. միջավայրի անմիջական ազգեցությունը բույսերի վրա: Նրա կարծիքով միջավայրի ջերմությունն ու սառնությունը, չոր և խոնավ մթնոլորտը և ուրիշ արտաքին գործոններ, ազդելով անմիջապես

բույսերի վրա, առաջ են բերում նրանց մեջ փոփոխություններ, վորոնք ժառանգաբար անցնում են նրանց նոր սերունդներին:

Լամարկի հայացքները մատնված եյին մոռացության յերկար տարիների ընթացքում: Վերջին ժամանակները մի շարք բիոլոգներ նորից սկսեցին քարոզել Լամարկի զաղափարները: Նոր Լամարկիսները պնդում եյին, թէ կենդանիների անհատական կյանքի ընթացքում ձեռք բերած փոփոխությունները ժառանգական են (наследственность приобретенных свойств) և արդյունք են միջավայրի ազդեցության:

Նոր Լամարկիսները, հերքելով գոյության կոիվը և բնական ընտրությունը, որդանական աշխարհի եվոլյուցիան վերագրում եյին միջավայրի ազդեցությամբ առաջացած անհատական փոփոխություններին:

«Սակայն կենդանաբանները շուտով համոզվեցին, վոր կենդանիների բազմաթիվ հատկություններ չեյին կարող առաջանալ գործարանների վարժեցնելով: Ի՞նչպես կարող եյին այդ հանապարհով առաջանալ մազերը կամ բուրգը, վոզնու և խոզուկի փշերը կամ ոնցինդյուրի քթի ավելվածքը», —ասում ե հոչակավոր անգիտական բիոլոգ՝ Ալֆրեդ Ռուլեսը: Կամ ի՞նչպես կարող եյին «վարժեցնելով» թռչունների և թիթեռների թերթի անթիվ գույնզգույն նկարները, ի՞նչպես կարող եյին առաջանալ մեմետիզմի յերկությունները, բազմաթիվ նպատակահարմար գործարանները և այլն:

Նոր Լամարկիստներն անզոր եյին այդ հարցերին պատասխանելու: Մյուս կողմից մենք տեսանք, թե

Բնչպիսի բնական բացատրություն և տալիս վերոհիշյալ յերեսութին սելեքցիոնիզմը կամ դարվինիզմը:

Սակայն նոր լամարկիզմին աճենամիծ հարված հասցըց հետեւյալ հանգամանքը.

Գերմանացի հայտնի կենսաբան Վեյսմանի և ուրիշների փորձերն ու դիտողությունները վճռականապես ապացուցեցին, վոր անհատական կյանքի ընթացքում ձեռք բերած հատկությունները („որոնք ուղղակի ամենահայտնի ժառանգական չեն. Միքանի որինակներով պարզենք այդ: Հայտնի չեն բազմաթիվ դեպքեր, յերբ մարդկանց և կենդանիների այս կամ այն գործարանն անդամահատել են, այնուամենայնիվ նոր սերունդներում վնասված գործարանները առաջ են յեկել նորմալ դրությամբ:“)

Տասնյակի տարիների ընթացքում կտրում ելին վոչխարների կամ շների պոչերը, չնայած դրան նրանցից առաջացած սերունդների մեջ բոլոր անհատները յեղել են պոչալոր:

Նկատված են նույնպես, վոր վարժությունների պատճառով ուժեղացած զորեղ մկանները յերբեք չեն լինում ժառանգական. Ըմբիշների սերունդներն ունենում են շատ սովորական մկաններ, ուրեմն չեն ժառանգում ծնողների «ձեռք բերած հատկությունը» — զորեղ մկանները եայլն:

Վեյսմանի հետազոտությունները մեծ հարված տվեցին լամարկիզմին, ցույց տալով, վոր «ձեռք բերած հատկությունները» ժառանգական չեն*): Զե՞ վոր

*.) Զալետք ե շփոթի «ձեռք բերած հատկությունները» «անհատական փոփոխականության» հետ, վո-

նոր լամարկիստներն իրանց զիտությունը հիմնում է յին հենց այդ «ձեռք բերած հատկությունների» ժառանգականության վրա:

Վեյսմանի և միքանի ուրիշ զիտնականների հետազոտություններից հետո նոր լամարկիզմը կորցրեց յուր նշանակությունը: Այժմ այդ թեորիան շատ քիչ կողմնակիցներ ունի յուր շարքերում:

Անցնենք «Մենդելյան յերեսությներին».

Անցյալ դարի 60-ական թվականներին Ավգուստինյան արեգա Գրիգոր Մենդելը մի զարմանալի գյուտ արագ: Թեև յուր հետազոտությունները Մենդելը հրատարակեց 1865 թվին Բրյուննի բնապատմական ընկերության «Աշխատությունների» մեջ, սակայն գիտական աշխարհն անուշադիր թողեց այդ հետազոտությունները և շուտով Մենդելի յերեկի գյուտը բոլորովին մոռացության տրվեց:

Միայն ներկա դարի սկզբին (1900 թ.) յերեք բուսաբան — Դը-Ֆրիզը, Կորլինսը և Չերմակը զիտնա-

րի մասին մենք խօսել ենք 3-րդ գլխում և վորի վրա հիմնած և Դարվինի ուսմունքը: Յերբ մի վորեն որդանիզմից ծնվում են քիչ թի շատ անբերված անհատական գույնի (զանազան գույնի, մեծության...) այդ յերեսությը կոչվում և «անհատական փոփոխականություն» և ժառանգական իւ իսկ յերբ որգանիզմը յուր կյանքի բնաբացքում և ձեռք բերում նոր հատկություններ (զորեղ մկաններ, արագ շարժումներ, կորցնում և վոտը, ձեռքերը...) Այդպիսի ձեռք բերած հատկությունները ժառանգական չեն:

կանների ուշադրությունը դարձրին Մենդելյան գյուտի վրա, վոր մեծ հետաքրքրություն շարժեց և ասիթ տվեց բազմաթիվ նոր հետազոտությունների: Այժմ Մենդելյանը ժառանգականության հիմքն է կազմում: Տեսնենք ինչում են կայանում Մենդելյան յերեսությունները:

Ինչպես հայտնի յե, այժմ կան հավերի բազմաթիվ ցեղեր. «Խառալական» և «Համբուրգյան» ցեղեր, «Կոխինխինա», «Լանգշան» և ուրիշները: Յերբ, դիցուք՝ «Լանգշանի» եղը բեղմնավորվում է նօւյն ցեղի արությանոցով, այդ գեղքում առաջացած նոր սերունդը բաղկացած է լինում մաքուր «Լանգշան» ցեղի անհատներից: Նույնը առհասարակ նկատվում է միշտ, յերբ եղը և արուն պատկանում են միևնույն ցեղին: Բայց յերբ արուն պատկանում է մեկ ցեղի, իսկ եղը մյուսի, այդ գեղքում նրանց բեղմնավորությունից առաջացած սերունդը ներկայացնում է «խառնուրդ» կամ «հիբրիդ»: Այս յերեսությն ամենքին հայտնի յե:

Մենդելյան յերեսությները նկատվում են հենց հիբրիդներ առաջանալու գեղքերում: Մենդելը յուր հետաքրքիր փորձերը կատարեց վոչ թե կենդանիների, այլ բույսերի վրա—զանազան տեսակ վոլոուի վրա: Կան վոլոոի տարբեր ցեղեր. մեկն ունի գեղին սերմեր, մյուսը կանաչ, մեկի սերմերը կլոր են, մյուսինը անկյունավոր, մեկի ցողունը յերկար է լինում, մյուսինը կարճ և այլն:

Յերբ Մենդելը վերցնում եր դեղին և կանաչ սերմեր ունեցող վոլոոներ և գեղինի վարսանդը բեղմնավորում եր կանաչի ծաղկափոշիով կամ ընդհակառակը՝ այդ գեղքում առաջին սերմերը:

լինում ելին դեղին սերմեր ունեցող անհատներ, այսինքն նման ելին լինում մեկ ծնողին, իսկ մյուս ծընողի հատկությունը (կանաչ սերմեր) անհետանում էր: Ուրեմն մեկ ծնողի (գեղինի) հատկությունն առաջին սերունդում գերիշառում եր և չկզօքացնում եր մյուս ծնողի հատկությունը (կանաչ տեսակը); այդ պատճառով առաջին ծնողի հատկությունը կոչվում է գերիշտուղի կամ դոմինանտ, իսկ յերկրորդ ծնողի հատկությունը կոչվում է սուռադրյալ, բազինով կամ բեցեսսիդ:

Այս և Մենդելի առաջին ութենքր կամ կանոնը, վորի հիման վրա յերկու տարբեր ցեղերի բեղմնավորությունից առաջացած հիբրիդի առաջին սերունդը պահպանում է մեկ ծնողի հատկությունը (գերիշխող), իսկ մյուս ծնողի հատկությունը (թագնվող, բեցեսսիվ) անհետանում է:

Բայց յերբ Մենդելը փորձեց բեղմնավորել առաջին սերունդի անհատները՝ մեկը մյուսի ծաղկափոշին, նա նկատեց զարմանալի յերեսությ. յերկրորդ սերունդի անհատների $\frac{3}{4}$ դոմինանտներ ելին (գեղին), իսկ $\frac{1}{4}$ բեցեսսիվներ կամ ստորագրյալներ: Ուրիշ խոսք՝ հիբրիդների յերկրորդ սերունդում յերեսն են քով՝ հիբրիդների յերկրորդ սերունդում յերեսն են գալիս՝ և գեղին, և կանաչ սերմեր ունեցող վոլոոներ, գալիս՝ գոչ հավասար քանակությամբ. գեղինները (գոմիայն վոչ հավասար քանակությամբ. գեղինները (գոմիայն դիմերոդները) հարաբերում ելին կանաչներին—բեմիանդները) հարաբերում ելին կանաչներին—բեմիանդները)

Մենդելի ութենքերը ցույց են տալիս, վոր տարբեր ցեղերից առաջացած սերունդերում ծնողների հատկությունները չեն ձուլվում, այլ յերեվան են գալիս առաջիններին պատճենին պարունակած հատկություններով:

Դարվինիզմի տեսակետից Մենդելյան որենքները կարեր են նրանով, վոր նրանց միջոցով հնարավոր ե առաջ բերել նոր ցեղեր՝ թե բույսերի և թե կենդանիների շրջանում: Գիտնականները ոգտվելով մենդելյան որենքներից, իրոք առաջ են բերել բուսական և կենդանական բազմաթիվ նոր ցեղեր ցանկալի հատկություններով:

Այդ հիման վրա Մենդելի կողմանակիցներից միքանիսը հավատացած ելին, վոր Մենդելը գտել ե եղույուցիայի գաղտնիքը և վոր մենդելիզմի շնորհիվ Դարվինի թեորիան կորցնում է յուր նշանակությունը: Սակայն այդ հույսերը չիրականացան. չնայած, վոր մենդելիզմն ահազին նշանակություն ստացավ՝ նամանավանդ ժառանգականության վերաբերյալ խընդիրների նկատմամբ, նա անզոր և բացատրելու որգանական աշխարհի դարձացման բազմատեսակ յիրեւույթները:

Այդ մասին պրոֆեսոր Կոփառվիչը նկատում է, «Յեղափակելով վերսի ասածները, մենք կարող միջն կատարվող հիրերի գիզացիան տեսակ անհատների ռաջացնել նոր տեսակներ, բայց հազիվ թե այդ պրոցեսը վորեւ իսկական դեր կատարելիս լինի կենդանական և բուսական աշխարհների հոլոյուցիայի մեջ»:

Մենդելյան ուղիղով կատարած հետազոտությունները և փորձերն ահազին ծավալ ստացան և հսկայական նշանակություն ունեցան զիտության համար և նույնիսկ գործնական կյանքի համար, սակայն այժմ մենդելիզմը մեղ հետաքրքրում է միայն այն չափով, ինչ չափով, վոր կամվում ե որգանական աշխարհի

դարձացման խոգրի հետ: Բավականահանք ուրիշն այսքանով մենդելիզմի մասին և անցնենք նեոդարձինին:

Հերման Մեյերը, Ռու Վեյսմանը և միքանի ուրիշները նոր դարվինիզմի ներկայացուցիչներն ելին, իրակապես նրանք ծայրանեղ դարվինիստներ ելին: Նըրանք վոչ միայն ընդունում ելին բնական ընտրության սկզբուքը, այլև սուստիկ ընդարձակում ելին սելեքցիայի գործունեության սահմանները: Բայց նոր դարվինականներին մքցում և գոյության կոխվ կատարվում ե վոչ միայն բնության ազատ անհատների մրջե, այլև ամեն մի անհատի մարմինը կազմող բջիջների, ինչու պամփեների յիկ գործարանների միջնել:

Մեկ որգանիզմի բջիջների միջև առաջանում է կռիվ, մքցում սննդի և տեղի համար. հաղթում են այն բջիջները, վորոնք ավելի նպատակահարժարմար կազմվածք ունին, մյուս բջիջները գուրս են մղվում:

Նույնը տեղի ե ունենում նաև մարմի զանազան հյուսվածքների և գործարանների միջև: Մրանով և բացատրում այդ գաղափարների քարոզողը—Ռուն այն հանգամանքը, վոր մարմի զանազան գործարանները դարձանալի կերպով հարմարացրած են այդ փունկցիաներին, վորոնց համար նրանք գոյություն ունեն:

Ռուի վերոհիշյալ գաղափարներն ավելի և ընդգրածակեց նոր դարվինիզմի ամենատաղանդավոր ներկայացուցիչը—Վեյսմանը: Բայց վերջին գիտնականի՝ սելեքցիան տեղի ե ունենում առանձին անհատների միջև (Personalselection), մարմինը կազմող հյուսվածքների միջև («հյուսվածքային ընտրություն»),

Histonalselektion), բջիջների միջև և բջիջները կազմող ամենափոքրիկ մասնիկների միջև:

Ի նկատի ունենալով, վոր գեյսմանի և մյուս նոր դարվինիստների գաղափարները մի կողմից չափազանց մասնագիտական բնափորություն են կրում, մյուս կողմից դեռ ընդհանուր ընդունելություն չեն գտել և գիտական դիսկուսյաների շրջանից դուրս չեն յեկել, այդ պատճառով ավելորդ եմ համարում յերկար կանգ առնել նոր դարվինիստների թեորիաների վրա:

Ամփոփելով մեր ասածները, անհրաժեշտ ենք համարում շեշտել, վոր նորագույն հոսանքներից և վոչ մեկը չկարողացավ դարվինիզմի տեղը բռնել. վոչ լամարկիզմը յուր նորագույն հետևողներով, վոչ Դը-Ֆրիզի «մուտացիաների» թեորիան, վոչ եւ Մենդելիզմը չկարողացան և վոլյույցիայի յերեսույթներին տալ այնպիսի բնական բացարության, վորպիսին տալիս և դարվինիզմը կամ սելեքցիոնիզմը:

Հոչակավոր անգլիացի բիոլոգ Երվին Բաուերը՝ ընդամենը հինգ տարի սրանից առաջ ասաց. «Ես ընդունում եմ, վոր սելեքցիայի թեորիան, վոր այսոր կանգնած ե ավելի անսասան, քան յերբեփցե. և վոլյուցիայի բացարության միակ լուրջ փորձն եւ»:*)

«Վերջին կես դարում առաջ յեկած գիտական հոսանքներից և վոչ մեկը չի կարողացել խոչընդուն հարուցանել Դարվինի թեորիայի առաջ...—**) ասում ե մյուս հոչակավոր կենացարան՝ կ. Տեմիրյազել:

*) Կնիպովիչ—Կурс общей Зоологии ч. II № 298.

**) Կ. Тимирязев—Чарльз Дарвин и его учение, ч. I. № 220.

XII

ԱՄՓՈՓՈՒՄՆ. ՎԵՐԶԱԲԱՆ

Այժմ ամփոփենք մեր ասածները Դարվինի գործունեության մասին.

Զարլզ Դարվինը յուր կյունքում նշանավոր գործեր կատարեց, վորոնցից մասնավանդ յերկուսն ահաւգին հետևանքներ ունեցան: Այդ գործերից մեկը դարձացման թեորիայի վերջնականացես ապացուցանեն եր, մյուսը՝ «բնական ընտրություն» կոչված գյոււրը:

Զարլզ Դարվինից առաջ զարգացման թեորիայի պաշտպաններ հանդիսացան Լամարկը, Ժոֆֆրուա Սենթ-Էլլերը, Գյոթեն և Երազմ Դարվինը, վորոնցից մասնակի յերկուսը-Լամարկը և Սենթ Էլլերը ճիշտ ըմբռուցանդ յերկուսը-Լամարկը և Երազմ ի այս ուսմունքի զլիավոր կետերը: Դրանք պնդում եյին, վոր յերկրագների վրա գոյություն ունեցող այժմյան կենդանիների և բույսերի բազմաթիվ տեսակներն առաջացել են շատ պարզ սկզբնական եակներից:

Եյուրավոր տարիներ մեզնից առաջ, ասում են եվլյուսիոնիստները, յերկրագնտի վրա գոյություն են ունեցել յերկու-յերեք տեսակ վերին աստիճանի կազմություն ունեցող որդանիզներ, վորոնց սերունդներն անդադար զարգանալով և առաջադիմելով, հետագա ժամանակներում արտադրել են շատ տե-

սակ որդանիզմիկ, վորոնցից առաջացել են այժմյան կենդանիներն ու բույսերը:

Այս ուսմունքն ունի մի շարք նշանավոր հակառակորդներ, վորոնցից ամենահոչակավորները՝ կինները և ժորժ կյուվիյին եյին: Դրանք ընության մեջ առաջդիմություն, զարգացում չեյին տեսնում: Նրանց խոսքերով՝ յերկրագնտի կեղեր կազմվելուց հետո նախախնամությունն ստեղծել և նապաստակի, կատավի, առյուծի և մյուս կենդանիների ու բույսերի տեսակները, վորոնք անփոփոխ հասել են մեր ժամանակաբերին:

Եվոլյուցիոնիստների և հակաեվոլյուցիոնիստների միջև ծագած վիճարանությունը դեռ շարունակվում էր, յերբ յերեան յեկավ Զարլզ Շարվինը: Նա անցավ եվոլյուցիոնիստների կողմը և բազմաթիվ փաստերով ապացուցեց զարգացման թեորիայի ճշմարդությունը: Ահա այդ փաստերից մի քանիսը.

1. Ուսումնասիրելով մշակված բույսերի և ընտառնի կենդանիների կյանքը, գիտնականները համոզվել են, վոր նրանք ամենեին անփոփոխ չեն մնում, այլ ընդհակառակը՝ անընդհատ փոփոխվում են և նորանոր ցեղեր առաջացում: Որինակ՝ վայրենի աղավնու սերունդները փոփոխվել են և ժամանակի ընթացքում արտադրել մի շարք իրարից խիստ տարրերվող ցեղեր: «տաճկական աղավնին», «անզիվական փքվածը», կարճեաս տուրմանը և ուրիշները:

Այս յերեւոյթը հակառակ լինելով կյուվիյի և կիննեյի հայացքներին, միենույն ժամանակ բոլորովին համաձայն եյին զարգացման թեորիայի վորուն:

2. Կյուվիյին և կիննեյը պնդում եյին, վոր այժ-

մյան բոլոր որդանիզմները՝ թե պարզ և թե բարդ կազմություն ունեցողները, վոյացել են միաժամանակ: մինչդեռ յերկրաբանությունը ցույց է տալիս, վոր յերկրագնտի վրա առաջ գոյություն են ունեցել միաժայն պարզ կազմություն ունեցող որդանիզմներ, հենաջորդաբար առաջացել են ավելի ու ավելի բարդ կազմություն ունեցող տեսակներ:

Ուրեմն յերկրաբանական փաստերը համաձայն լինելով զարգացման թեորիային, բացարձակագույն հակասում են կյուվիյի և կիննեյի հայացքներին:

3. Յեթե համեմատենք զանազան կենդանիների կմախքները, զարմանալի նմանություն կըդտնենք նըրանց միջև. նույնը նկատվում է նաև կենդանիների ջղային սիստեմի, ներքին գործարանների և մյուս որդանների մեջ: Խիստ նման են նաև զանազան կենդանիների սաղմերը:

Մի խոսքով՝ հաճախ տարբեր կենդանիներն ունենում են միակերպ կազմված մարմիններ, իսկ այդ պարզ ապացուցեց ե, վոր զրանք ունեցել են մի ընդհանուր ծագում:

Այդպիսով մարմնակազմական փաստերը նույնպես մի կողմից ապացուցանում են զարգացման թեորիայի ճշմարտությունը, իսկ մյուս կողմից՝ հերքում են հակասակ ուսմունքը:

Անցնենք Զ. Դարվինի մյուս հանճարեղ գործին՝ ընտրության կամ բուն զարվինիզմին: Դարվինը կարողացավ վոչ միայն ապացուցանել զարգացման թեորիան, այլև գտավ եվոլյուցիայի պատճառը, գտավ առաջադիմության և զարգացման մղիչ գործոնը:

Նա ապացուցեց, հիմնվելով բազմաթիվ փաստերի վրա, վոր բնության մեջ կատարվում եւ ամենակատարյալ կամ ամենաճարպիկ անհատների ընտրություն—սեւեքցիա:

Ինչպես վոր մարդ ընտանի կենդանիներից և բույսերից ամենալավ անհատներին ընտրելով կ նրանց միայն բազմացնելով՝ պատճառ եւ դառնել ընտանի կենդանիների և բույսերի առաջադիմության, այնպես ել ընությունը, սկսած ամենահին ժամանակներից, ընտրել ե՞ւ շարունակում եւ այժմ ել ընտրել գոյություն ունեցող որգանիզմից ամենակատարյալ անհատները, անխնա վոչչացնելով միենույն ժամանակ թույլ և պակասավոր անհատները:

Ուրեմն բնական ընտրությունն այն գորեղ գործոնն ե, վոր մղել ե որգանիզմները գեղի առաջադիմություն, բնական ընտրությունը կած սելեքցիան կենդանի եակների անընդհատ զարգացման մղիչ պատճառն ե:

Սակայն չպետք ե մոռանալ, վոր բնությունն ընտրություն ե անում կատարելապես անզիտակցաբար. բնական ընտրությունն ուղղակի գոյության կովի հետևանքն ե, իսկ գոյության կովի որգանիզմների սաստիկ արագ բազմանալու հետևանքն ե:

Թէ՛ կենդանիները և թե բույսերը բազմանում են վերին սատիճանի արագ կերպով, ուստի յեղած անունդը և տեղը չեն բավականանում առաջ յեկած բոլոր սերունդներին. Ապրել ցանկացողները միշտ անչափ շատ են լինում, իսկ սնունդն ու տեղը՝ քիչ:

Այստեղից ե ծագում գոյության կովի վը. ամեն մեկ անհատ ձգտում ե ուրիշի տեղը բռնել ուրիշի սնունդը

իւրել կամ յուր գոյությունն ապահովելու համար ընկերներին խորտակել:

Գոյության կոփվը համաշխարհային ե. ով ուժեղ ե, ով խելոք ե, ով ճարպիկ ե, նա ե հաղթող հանդիսանում: Միայն ընտիր անհատներն են կենդանի մնում և սերունդներ առաջացնում, հիմնելով իրանց բախտավորությունն անթիվ ընկերների դիակների վրա: Գոյության կոփվը յերբեմն արտահայտվում ե ակներեկ, յերբեմն քողարկված ձևով, յերբեմն ել ստանում ե շատ բարդ կերպարանք:

Այս ընդհանուր համաշխարհային կոփվը միշտ սարսափեցրել ե բարեսիրտ մարդկանց և այդ սարսափը բնական ե: Սակայն չոլիտի մուանալ, վոր այդ անուի կոփվը ունենում ե մեկ վերին սատիճանի ոգտագետ հետևանք: Ընդհանուր մրցման ու կովի շնորհիվ ե բնության մեջ առաջ գալիս առաջադիմություն և զարգացում: Գոյության կավի պատճառով կատարվում ե սելեքցիա, վորի ազդեցությամբ առաջ են գալիս ավելի ընտիր տեսակներ:

«Այդպիսով, ասում ե Զարլզ Դարվինը յուր «Տեսակների ծագում» աշխատության մեջ, մշտնչենավոր կովից, սովոր ու կոտորածից անմիջապես առաջ ե գալիս ամենակատարյալ արարածների ծագումը...»:

Սեռային ընտրությունը բնական ընտրության լրացումն ե, կենդանիների բազմաթիվ տեսակների մեջ եզրը, վորձերի համեմատությամբ, սակավաթիվ են լինում, յեթե դրան ավելացնենք և այն հաճագամանքը, վոր կենդանիների շատ տեսակներում տարածված և բազմակնություն (պոլիգամիա) յերկույթը, այն ժամանակ հասկանալի կը լինի, թե ինչո՞ւ վորձերն այս

ստիպված են լինում զորեղ կերպով մըցել իրար հետ
եգերի պատճառով:

Մըցումը յերբեմն կատարվում է կովի ձևով և այդ
դեպքում միայն ամենաուժեղներն են կարողանում
իրանց համար եգեր ձեռք բերել. յերբեմն ել վորձերը
մըցում են իրար հետ յերգերով և զարդարանքներով,
իսկ այդ դեպքում հաղթողները լինում են ամենագե-
ղեցիկ կամ ամենալավ յերգող վորձերը:

Այդ պատճառով ել սեռային ընտրությունը յեր-
բեմն ջոկում եռ ու պահպանում ամենաուժեղ, յերբեմն
ել ամենազեղեցիկ կամ ամենալավ յերգող վորձերին:
Յել վորովհետև դրանք են զիսավորապես սերունդներ
առաջացնողները, ուստի վորձերը ժամանակի ընթաց-
քում ավելի ու ավելի կատարելագործվում են, մինչ-
դեռ եգերը մնում են անփոփոխ:

Նույնիսկ մարդը, վոր կենդանի արարածների
մեջ ամենահրաշալին և ամենակատարյալն ե, ընու-
թյան մեջ գոյություն ունեցող ընդհանուր առաջա-
զիմության արդյունքն ե: Վորքան ել վոր մարդ, մյուս
կենդանիների համեմատությամբ, մեղ հրաշալի թվա,
այնուամենային նա ընդհանուր որհնքից բացառու-
թյուն չի կազմում. յուր մարմնի կազմվածքով, մտա-
վոր ընդունակություններով, զգացմունքներով և ծա-
գումով մարդը սերտ կերպով կապված ե մյուս կենդա-
նիների հետ. «մարդը ամենազարգացած վողնավոր
կենդանին ե», — ասում ե Երնստ Հեկկելը:

«Մարդը, ինչպես և մյուս կենդանիները, ասում ե
Դարվինը, անկասկած հասել ե յուր ներկա բարձր
տեսակին շնորհիվ գոյության կովի, վոր հետեւանք ե

նրա արագ բազմանալու և յեթե նա (մարդը) պիտի
շարունակի զարգանալ պետք ե մնա նույն խիստ
կովի աղղեցության տակ...» Բոլոր մարդկանց պիտի
տրվի հնարավորություն բաձարձակ մըցման և որենք-
ներն ու սովորությունները չպիտի խանգարեն ամե-
նալընդունակներին աջողություն ունենալ կյանքի մեջ
և զատափակիլ ըստ կարելույն, մեծ թվով յե-
րեխաններ...»:

Բոլոր այն յերեսությները, վորոնց մասին խո-
սեցինք նախորդ գլուխներում, այսինքն՝ բնական
ընտրությունը, գոյության կովը, սեռային ընտրու-
թյունը տեղի ունեն նաև մարդկային հասարակու-
թյան մեջ. այդ պատճառով հասկանալի ե, թե ինչո՞ւ
Դարվինիզմը հետզետե ավելի ընդլայնում ե յուր
ուսումնասիրության շրջանը:

Այժմ սելեքցիոնիզմը չի բավականանում միայն
բույսերի և կենդանիների կյանքին վերաբերյալ յերե-
վույթների մեկնությամբ, այլ բացարձություններ և
տալիս նաև մարդկային կյանքի նույնիսկ բարդ յե-
րեսույթներին:

Այժմ դարվինիզմի ուսումնասիրությունը կարիք
ե վոչ միայն բնագետների, այլև հոգեբանների, իրա-
վարանների, լեզվագետների ու փիլիսոփաների համար:

Այս առիթով Գ. Ալենը հետեւյալ խոսքերն ե ասում:

«Դարվինիզմի աղղեցությունն որեցոր տարած-
վում ե ավելի լայն և ավելի խորը կերպով, Մի խումբ
գիտնականներ իրանց բնախոսական, մարմնազն-
նական և սալմագիտական հետազոտությունները կա-
տարելիս զեկավարվում են դարվինիզմով. շատերն
աշխատում են դարվինիզմը հոգեբանությանը հարմա-
շվատում են դարվինիզմը հոգեբանությանը հարմա-

ըացնել. ուսումնասիրելով կենդանիների խելքն ու բնագդումը, աշխատում են դարվինիզմի ոգնությամբ լուծել մարդկային վոգուն և զգացմունքներին վերաբերյալ ամենաղժվար խնդիրները:

Մի փելիսոփա աշխատում ե դարվինկզմը հարմարացնել բարոյագիտական խնդիրներին, մեկ ուրիշ սոցիոլոգիայի և քաղաքատնտեսության հարցերին: Մեկ տեղ նրա սկզբունքը հարմարացնում են եսթետիկային, մեկ ուրիշ տեղ—տրամաբանությանը և այլն: Լեզվագիտությունը նոր լույս ե տեսնում դարվինյան մեծ լապտերից: Դարվինի ուսմունքը մանկավարժության վրա ել տարածեց յուր ազգեցությունը:

«Դարվինիզմի ռեորհիվ մեր բոլոր մտքերը նեղափոխվեցին, նույն մտքերը նեղեղեցին ամբողջ աշխարհը. իրանց հսկայական յեվ բարի ույժովը չոր ու ցամակ գիտուրյուններին, գելարվեստին յեվ փիլիսոփայությանը կենդանուրյուն սվեցին...»:

Ց Ա Կ Կ

ԱՐԱՋԱԲԱՆ

Ե Հ

I ԴԱՐՎԻՆԻ ԿՅԱՆՔԸ 5.

Տաղանդն ընդունակ ե ժառանգաբար անցնելու սերնդից սերունդ: Դարվինի պապը և հայրը՝ Դարվինի ծնունդը: Նրա ուսումնարան մըտնելը: Դարվինը ամենաթույլ աշակերտներից մեկն եր: Նրա սերը գեպի բնությունը: Դարվինը զընում ե գեպի եղինաբուրդ բժշկականություն ուսումնասիրելու: Կեմբրիջի համալսարանը: Դարվինի ճանապարհորդությունը մեծ նշանակություն ունեցավ նրա ապագա փայլուն գործունեության համար: Դարվինն ամուսնանում ե և տեղափոխվում Դոուն մշտական բնակության համար: Դարվինի առաջին գյուտերը: Ի՞նչն եր ամենից շատ հետաքրքրում նրան: «Տեսակների ծագումը» մեծ ազմուկ բարձրացրեց Յնոպայում: Նրա մյուս նշանավոր Գրվածքները, Դարվինը մեծ եր վոչ միայն խելքով, այլև բարոյականությամբ: Դարվինի հիվանդությունը և մահը: Դարվինը և Նյուտոնը: Դարվինի թաղումը:

II ՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 30

Կենդանիների և բույսերի դասավորությունը: Տեսակների ծագումը: Տեսակների անփոփո-

խականության թեորիան — լիննելը և ժորժ Կյուս-
վիյեն. Տեսակների փոփոխականության թեոր-
յան — Բյութֆֆոն, Ժոֆֆրուա Սենթ Իլելը, Երազմ
Դարվին և Լամարկ: Դարվինը վերջնականապես
ապացուցեց տեսակների փոփոխականությունը:
Յուրաքանչյուր մեծ գյուտ միայն մեկ գիտնա-
կանի աշխատության արդյունք չի լինում:

III ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ . . . 49

Ի՞նչն է առաջադիմության պատճառը: Լա-
մարկի կարծիքը: Անհատական փոփոխությունն:
Արվեստական ընտրությունն: Ընտանի կենդանի-
ների և բույսերի ցեղերը գոյացել են արվեստա-
կան ընտրության շնորհիվ: Ժառանգականու-
թյունն:

IV ԳՈՅՉՈՒԹՅՈՒՆ ԿՌԻՎ 61

Մայլթուսի ուսմունքը ազգաբնակության
աճման վերաբերյալ: Դարվինը ցույց տվեց, վոր
աճման նույն որենքին յենթարկվում են նաև
բույսերն ու կենդանիները: Գոյության կորիվ: Գոյ-
ության կորիվը զորեղ կերպով արտահայտվում
են նման որպանիզմների շրջանում: Գոյության
կորիվ բարդ որինակներ:

V ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 71

Բնական ընտրությունը նույն դերն է կա-
տարում բնության մեջ, ինչ վար արվեստական
ընտրությունն ընտանի որպանիզմների շրջանում:
Բնական ընտրությունը մզել և և մզում ե կեն-
դանի հակներին դեպի զարգացում: Միքանի բա-
ցառիկ դեպքեր: Բնական և արվեստական

ընտրությունների նմանությունը և զանազանու-
թյունը: Բնական ընտրություն գոյության կովի
շնորհիվ — ահա Դարվինի ուսմունքը:

VI ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԵՎԱՔՆՆԵՐԸ 79

Նոր կատարելազործված տեսակների ծա-
գումն: Յուրաքանչյուր որդանիզմի մասերն այն-
պես են կազմված իրար հետ, վոր մեկի փոփոխու-
թյունն առաջցնում ե յուսների մեջ համապա-
տասխան փոփոխություններ: Հին տեսակներն
անհետանում են՝ անկարող լինելով մրցել նորերի
հետ: Նոր տեսակները հեռանում են իրարից՝ մի-
ջին տեսակների վոչնչացման պատճառով: Յեր-
կրագնտի շերտերում գտնված են բաղմաթիվ
տարորինակ կենդանիների մնացորդներ:

VII ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԵՎԱՔՆՔՆԵ- ՐԸ (շարունակություն) 90

Որդանիզմների հարմարացումը շրջապատղ
ու այլ աշխատանքներին: Միմետիզմ, սեմբիոզ կամ մու-
տուալիզմ: Բնական ընտրությունն իսկական մե-
քենայական պրոցես ե, նա կապ չունի ամենինին
գիտակցության հետ: Բնության անթիվ յերե-
փույթներ լուսաբանվում ե բնական բացատրու-
թյուն են սահմանվում շնորհիվ Դարվինի ուսմունքի:

VIII ՍԵՐԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 103

Սերային ընտրությունը վարու չափով զա-
նազանվում ե բնական ընտրությունից: Արուների
և եգերի թիվը: Բազմականություն: Արուների մըր-
ցումը կաթնասունների շրջանում: Նույնը թոչուն-

Ների ըրջանում. «յերգեր» և «սիրային ցույցեր»:
Թռչուններ եսթետիքական զգացմունք ունեն:
Սեռային ընտր. կատարելագործում և միայն մեկ
սեռի անհատներին—արուներին:

IX ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ՀՈԳՈՒՏ ԶԱՐԴԱՑՄԱՆ 111
ԹԵՌԻՒՅՑԻ

Յերկրաբանական փաստեր: Մարմնակազ-
մական և սաղմնաբանական փաստեր: «Անպետք»
գործարաններ:

X ՄԱՐԴ 122


Մարդը բացառություն չի կազմում ընդհա-
նուր որենքից. նա յուր կազմվածքով, մտավոր
ընդունակություններով և զգացմունքներով սերտ
կերպով կապված ե կենդանական աշխարհի հետ
և արդյունք ե ընդհանուր եվլոլյուցիայի: Հիմնա-
կան Բիոգինետիք որենքը ճիշտ ե նաև մարդու
վերաբերմամբ: Պիթեքանթրոպուս, Նեանդերտա-
լի և Հեյգելբերգի մարդ: Ռոդեզյան մարդ...

XI ՆՈՐ ՀՈՍԱՆՔՆԵՐ 131

Առարկություններ Դարվինի ուսմունքի
դեմ: Դը-Ֆրիզի թեորիան: Մենդելիզմ: Նեոլա-
մարկիզմ և Նեոլարվիզմ:

XII ԱՄՓՈՓՈԽՈՒՄՆ. ՎԵՐԶԱԲԱՆ 145





ՎՐԻՊԱԿՆԵՐ

62	ՏՌՂ	ՏՊԱՐՎԱԾԵՐ	ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ
18	9 Ներք.	շարունակվում են	պարունակվում են
21	5 Վերև. Դարձինը		Դարվինը
41	2 »	Տեմիրյազև	Տիմիրյազև
46	3 Վերև. դարձացման աստի- ճաններից	գարգացման ստոր աստիճաններից	
»	6 Ներք. գտնվում են	գտնում են	
50	13 »	Լամբարձ	Լամբարձ
61	2 »	այլ կենդանիները	այլ վայրենի կենդանիները
63	20 Վերև. տարան		տարան Ավստրա- լիա
65	9 »	հետեւանքների թիվը սերունդների թիվը	
»	» »	կավելանա	այնքան կավելանա
80	16, 17 »	«մանր տեսակ»	«մայր տեսակ»
82	9		
84	14 »	Նոր սերմերի	Նոր սերունդների
»	Ներք. Շատերն են հասել	Շատ քչերն են հասել	
85	5 Վերև. պահանջվում ե		պահպանվում ե
»	11 »	կարելի յի	կարելի յի
86	1 »	որոնց	նըանց
87	3 Ներք. կոկորտիլոս		կոկորտիլոս
89	5 Վերև. սակայն		այսինքն
91	10 »	կյանքի համար	ոդային կյանքի համար
108	5 »	այնպիսի	այնպիս ել
»	14 »	սիրային ընտրու- թյունը	սեռային ընտ- րությունը

- » 1 Ներքեւ. «սիրային զբույց-
ներ» «սիրային ցույց-
ցեր»
- 110 1 » паловой набор Половой подбор
- 119 7 Վերև. բոլովովին բոլովովին
- 123 6 » կապիկների միջն կապիկների ու-
ղեղների միջն
- հին շրջանում այժմ- հին շրջանում ծո-
յան մարդկության վային կյանք և
նախահայրերը ծով- վարել այսինքն
յին կենդանիներ են հին շրջանում այժ-
յեղել: ման մարդկու-
թյան հային:
- 128 3 Ներքեւ. մարդուն մարդու
- 141 1 » հատկություններով հարաբերությունն-
երով
- 147 5 Վերև. հեռ հեռո
- 150 1 Ներքեւ. տեսակին գերքին
Ժուրին հատուկ անունը կարդալ Ժուրին

ՀՀ Ազգային գրադարան



NL0266181

13326

ԳԻՆՆ Ե 60 ԿՈՊ.

